

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ԹՈՂ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ ԲԵՐԷՆ ՈՐ ՏԱՐԻՆ ԲՈԼՈՐԻՆ ԵՒ ՆԱԵՒ՝ ՄԵՐ ՓՈՔՐ ԱԾՈՒՄՆ

Թեև ակոխեցին 2008 տարին եւ Սրբ. Ծնունդը:  
Շնորհաւոր Նոր Տարի եւ Սրբ. Ծնունդը:  
2008 տարին՝ բող խաղաղ, արդար ու երջանկաբեր տարի մը ըլլայ  
բոլորին, անխտիր բոլորին՝ աշխարհով մէկ ցրուած:  
Ըլլա՛յ եւ՝ մեր «փոքրիկ ածու», համայն հայագոյ բոլոր գաւակներուն  
համար:

Բաւ եւ անբաւական երկիրներու, այլանդակուած քաղաքներու, ան-  
էացած անաններու կոյտերը, որոնք ժառանգ կը մնան անցնող անխտիւմ,  
մէկը միւսին յաջորդող տարեշրջաններէն: Այդ բոլորը տեղի կ'ունենան,  
որպէս թէ յանուն՝ մարդու իրաւանց պաշտպանութեան գործընթացին:  
Յանուն՝ ժողովրդավարական վարչակարգերու հաստատումին: Յանուն՝  
տարածաշրջաններէ, ներս ժողովուրդներու միջեւ խաղաղ գոյակեցութեան  
եւ տնտեսական զարգացման նպաստող յառաջադէմ սկզբունքներու:

Այդ բոլոր յառաջադէմ սկզբունքները առաջադրուեցան Նիւ-Եորքի 9/  
11-ը. եպերեյի ահաբեկչութենէ ետք: Անոնք, այդ սկզբունքները՝ անբի-  
վրէժ ժխտողական եւ շահադիտական բնոյթ ստացան, քան զարձան իրա՛ւ  
մարդասիրական մօտեցում: Ապացոյցն այն է, որ անբաւական երկիրներ-  
ըէ ներս ոչ միայն յիշեալ սկզբունքները չարդիւնաւորուեցան, այլ ընդհա-  
կառակը, անբի խորացուցին ներժողովրդական, այլապէս համայնքային  
հակասութիւնները: Այդ հակասութիւնները նամբայ հարթեցին քաղա-  
քացիական կոնֆլիկտներու, դառնալով սպառնալիչ շրջանային երկիրներուն:

Այսօր կացութիւնն այնպիսին է, որ խաղաղ շրջան չմնաց աշխարհի  
մակերեսին: Օրը նոր, նո՛ր բունկու մներ կ'արձանագրուին հոս ու հոն: Օրը  
նոր, նո՛ր գինական մագլցումներ կը կատարուին: Թալիպաններու, ապա  
Իրաքի դէմ շրջապագրած անվերջանալի ծանօթ բունկու մները, ծաւալ  
կը ստանան: Միջին Արեւելք, Կովկասը, Արաբական Ծոցը... կը տուայ-  
տին անորոշութեան մէջ: Փափստան, որ արդէն, քաղաքականօրէն անկա-  
յուն վիճակի մէջ կը գտնուէր, գահավիժումի մէջ է. քանի մը օրեր առաջ,  
Դեկտեմբերի 27-ին, ահաբեկչութիւնը զգետնեց Բաքու. նոր վերադար-  
ձած 54-ամեայ նախկին վարչապետուհի Պենազիր Պուրոն, երկրի ընդդի-  
մադիր դեկավարը: Ընտրական հանգրուանին գտնուող Փափստան՝  
կանգնած կը թուի ըլլալ քաղաքացիական ընդհարումի մը սեմին...

Թող խաղաղութիւնը յաղթանակէ աշխարհի երեսին

2008 տարին՝ բող արդարութեան տարի մը ըլլայ անխտիր՝ բոլոր  
անիրաւուած ժողովուրդներուն համար,

Արդարութեան տարի մը ըլլայ եւ՝ աշխարհով մէկ ցրուած «փոքրիկ  
ածու», համայն հայագոյ բոլոր գաւակներուն համար:

Թող քա՛ւ համարուի խորական քաղաքականութիւնը տկարագոյ-  
նու հանդէպ: Թող գերգոր տէրութիւններ վերջակէտե՛ն իրենց անանդա-  
կան, շահադիտական կողմնակցութիւնները: Թող նանաչո՛ւմ, հասկա-  
ցողութի՛ւն, հոգեկցութի՛ւն ցոյց տան ննչուած, իրաւագրկուած եւ ար-  
դարադատ ժողովուրդներու հանդէպ: Չխուսափի՛ն ճշմարտութիւնը  
դաւանելէ: Գիտակցաբար, այլապէս ամօթալի կերպով չշրջանցե՛ն, աշ-  
խարհով մէկ հաստատուած պատմական իրողութիւններն ու ճշմարտու-  
թիւնները դաւանիրը: Երկչափեայ քաղաքական մօտեցումներ, խտրական  
չափանիշեր, շահադիտական մօտեցումներ եւ բշնամական կողմնորո-  
շումներ, կը հիասթափեցնեն, կը գրգռեն եւ կ'ընդվզեցնեն անիրաւուած  
ժողովուրդներ, որոնք ծայրայեղ դէպքի նյութաւոր, այլապէս, ծայրայեղ  
միջոցներու կը դիմեն, լսելի դարձնելու համար իրենց արդար ձայնը  
միջազգային թատերաբեմի վրայ: Այդ չէ՞ր պատմականօրէն հաստատ-  
ուած տխուր, այլապէս դատապարտելի շարժառիթը Նիւ-Եորքի 9/11-ը:

աղէտին, որուն գոհ դարձան անբի քան երեք հազար անմեղ մահկանա-  
ցուններ: Այդ փստմեղի աղէտի թուականէն սկսեալ, տասնեակ ու տասն-  
եակ հազարներով անմեղ քաղաքացիներու արիւնը կը հոսի քիչ մը ամէն  
տեղ, մասնաւորաբար՝ Միջին Արեւելքի երբեմնի շէն ու ծաղկուն տարա-  
ծաշրջաններէ, ներս...

Թող արդարութիւնը տիրապետէ երկրի վրայ:

2008 տարին՝ բող երջանկաբեր տարի մը ըլլայ բոլոր ազգութիւննե-  
րուն համար:

Երջանկաբեր տարի մը ըլլայ նաեւ՝ «փոքրիկ ածու», հայ ժողովուր-  
դի, անխտիր, բոլոր գաւակներուն համար:

Երջանկութիւնը հրաշագործութիւն մը չէ՛ ամենեւին: Տարերք չէ՛  
նաեւ:

Ան ձեռակերտն է մարդ արարածին, մարդկային ընկերութեան, մայր  
երկրի առաջնորդ իշխանութիւններուն: Անոնք ընկերային արդիւնաւէտ  
միջավայր եւ պայմաններ կրնան ստեղծել իրենց հպատակներուն, մարդ-  
կային կեանքը բարելաւելու, առաւել երջանիկ դարձնելու համար:

Կարելի բան չէ՛ որ ֆիզիկական, նիւթական, ընկերային, հասարակա-  
կան, քաղաքական եւ իրաւական-արդարադատական անապահով պայ-  
մաններու մէջ ստեղծուի մարդ անհատի երջանկութիւնը. Կարելի չէ՛  
բարելաւել ընկերութեան կենցաղային պայմանները, երբ կասկածի տակ  
կը դրուի երկրի պետական վարիչներուն ուղղամտութիւնը, անաչառու-  
թիւնը, անկաշառակերտութիւնը, նուիրումը եւ հայրենասիրութիւնը: Կաս-  
կածն ու անվստահութիւնը անբերք կը գործեն երկիրներէն ներս: Կաս-  
կածն ու անվստահութիւնը կը քանդեն ազգային ներուժը: Կանգ կ'առնեն  
հաւաքական աշխատանքը, ժողովուրդ-իշխանութիւններ հոգեկցութիւնը:  
Հաւատքը հանդէպ պայծառ գալիքին:

Գերագոյնը՝ յուսահատութիւնը կը ջլատէ մէն մի քաղաքացիի դի-  
մադրական ուժը, կորուզը, էութիւնը, ստեղծագործ ոգին, լինելիութեան  
ձգտումը, վատագոյնը՝ կը տարբադարէ անոր ազգային արժանապա-  
տուութիւնը:

Ներկայիս կը գերիշխէ յուսահատութիւնը:  
Ա՛յս է մեր հայրենիքի 2007-ի արտիւն պարզած տխուր համայնա-  
պատկերը... Թէ՛ գալիք օրերը, ամիսները ի՞նչ կը վերապահեն... զգո՛յշ:  
Ցանկանալու, բարին, շինիչը, խոստումնալիցը, կառուցողականը:  
Հայ ժողովուրդը արժանի է անոնց:

Ո՛չ, Պրն. Նախարար, ինչպէս կ'ըսէ՛ «...որովհետեւ նախագահական  
ընտրութիւններ են՝ ամէն վատ քան կարելի է սպասել»: Ո՛չ, Պրն. Նախարար  
չեղա՛ւ: Ձեր հաստատումը ինքնարդարացման այլանդակ փորձ մըն է, գոր,  
ի յառաջագունէ կը մերժեմ պարզապէս: Մարդու ձեռակերտը չի կրնար  
բնութեան տարբեր փոխարինել: Վատն ու քարին մարդ մահկանացուն ին  
տնօրինումներն են: Լաւն ու վատը կախեալ են մարդէն: Եթէ պիտի  
յամառիմ վատի վրայ՝ վատն այդ է, եւ որուն արժանի չէ հայը, երբէ՛ք:

Թող կատարուին արդար, քափանցիկ, օրինական ընտրութիւններ,  
Փետրուարին: Այնուհետեւ, բող քարին ըլլայ ՆՈՐԸՆՏԻՐԸ:

Պարզ քաղաքացի ժուժկալ է, իր ընկերային պահանջներուն մէջ: Ան  
կ'ակնկալէ կեանքի, ինչքի, աշխատանքի, խօսքի սահմանադրական ապա-  
հովութիւն, որ կրնայ երաշխաւորել իր երջանկութիւնը:

Թող երջանկութիւնը տարածուի երկրի վրայ:  
Եկէ՛ք, այս վեհափառ երեք ակնկալութիւններով դիմաւորեմ 2008  
տարին եւ Սրբ. Ծնունդը, կրկին անգամ շնորհակալ սրտով, մէկս միւսին  
մաղթեմ քաղաղութիւն, արդարութիւն ու երջանկութիւն:

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն ուրախ առիթով՝  
«Մասիս» Շաբաթաթերթի վարչութիւնն ու խմբագրական կազմը ջերմօրէն  
կը շնորհաւորեն ողջ հայութիւնը, որ ի Մայր Հայաստան  
եւ ի չորս բոլորն աշխարհի:  
Մասնաւոր շնորհաւորութիւններ «Մասիս» ընթերցողներուն, մեր  
թերթին մէջ ծանուցող հաստատութեանց, հովանաւորներուն եւ  
աշխատակիցներուն, մաղթելով առողջութիւն, յաջողութիւն եւ հայութեան  
արդար ցանկութեանց իրականացում:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է «ՄԻԱՑՆԵԼ ՆՈՐ ՍԿՁԲԻ ԺԱՄԱՑՈՅՑԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ, գալիք նախագահական ընտրություններում առաջադրուած թեկնածու Արթուր Բաղդասարեանը ազդարարում է, որ իրենք սկսում են քաղաքացիական շարժում:



«Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ՝ Արթուր Բաղդասարեան

«Մենք 2008 թվականից առաջարկում ենք մեր հայրենակիցներին՝ միացնել նոր սկզբի ժամացույցը, որը վերջ կը տայ ցինիզմին եւ ամենաթողութեանը, որը էրողիայի է ենթարկել մեր ազգային կամքը եւ նպատակները», - լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց Բաղդասարեանը: - «Մենք պետք է կարողանանք իրօք նախագահական ընտրությունները անցկացնել հենց ազատութիւն, ժողովրդավարութեան եւ մրցակցութեան պայմաններում»:

«Օրինաց երկիր»-ի նախագահը յայտնեց, որ արդեն իսկ ձեւաւորուել են իրենց աջակցող «շուրջ 10 հազար խմբեր»,- «Մեզ պետք է նոր սկիզբ, մեզ պետք են նոր մտայնութիւններ, մեզ պետք են նորարարութիւն, ստեղծարարութիւն, համարձակութիւն մեր հասարակութիւնը տանելու որակական նոր գարգացումների ճանապարհով»:

Ասուլիսի ընթացքում Բաղդասարեանը հնչեցրեց նաեւ իր մտահոգութիւնները նախագահական ընտրություններից առաջ հեռուստաթերի տրամադրման «ակնյայտ անհավասարութեան», շարունակուող վարչական «բիրտ ճնշումների» եւ «կեղծ հարցումների կազմակերպման ու դրանց միջոցով հասարակութեան ուղեղների գանգոյծացման լուսացման գործընթացի» կապակցութեամբ:

«Օրինաց երկիր» կուսակցութեան առաջնորդ՝ Արթուր Բաղդասարեանը կեղծ են նաեւ «Գեյրաֆ»-ի հարցումները, Բաղդասարեանը պատասխանեց, որ թէեւ պատուիրատուն «Գեյրաֆ»-ն է, սակայն «հարցումն իրականացնում է բոլորին քաջածանօթ Գէորգ Պօղոսեանը եւ նրա ղեկավարած Հայկական սոցիոլոգիական ընկերակցութիւնը»:

«Նոյն «Գեյրաֆ»-ի հարցումների համապատասխան», - շարունակեց «Օրինաց երկիր»-ի նախագահը, - «60 տոկոսից աւելին վախեցած է... Բնականաբար, շատ շատերը չեն կարող արտայայտել շիտակ դիրքորոշում»:

Բաղդասարեանը նաեւ առաջարկեց նախագահի բոլոր թեկնածուներին կազմել պրոֆեսիոնալ սոցիոլոգների խմբեր եւ անցկացնել «իրական սոցիոլոգիական հարցումներ»,- «Մենք պետք է կարողանանք ընդամենը հաշուուած օրեր անց միացնել մի նոր սկզբի ժամացույց՝ բոլորիս համար: Թող լինի ազատ, արդար ընտրութիւն»:

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԾԵԾԿՈՏՈՒՔ՝ ԲԵԹՂԵՅՆՈՒՄ

Դեկտեմբեր 27-ին Բեթղեհէ-մում՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան տաճարում, հայ եւ Յոյն հոգեւորականների միջեւ ծեծկուտուք է տեղի ունեցել, որի մասնակիցները նոյնիսկ դիմել են աւելնելի եւ քարերի օգնութեանը:



Հայ եւ Յոյն հոգեւորականների միջեւ ծեծկուտուք

Տաճարի տարածքը բաժանուած է երեք մասի, որոնք տնօրինում են, համապատասխանաբար, Հռոմի կաթոլիկ, Յոյն ուղղափառ եւ Հայ առաքելական եկեղեցիների հոգեւորականները:

Ծեծկուտուքը առաջացել է, երբ Յուսուսի սկզբին Հայ առաքելական եւ Ուղղափառ եկեղեցիներում նշուող Սուրբ Ծննդեան տօնից առաջ տաճարը մաքրելու համար մի քանի տասնեակ հոգեւորականներ եւ մաքրողներ հաւաքուել են սրբավայրում, եւ յոյներից ոմանք անցել են Հայ եկեղեցու տնօրինած տարածքը: «Աստիէյթըտ Փրես» գործա-

կալութեան վկայութեամբ, ծեծկուտուքին մասնակցել են շուրջ հինգ տասնեակ յոյներ եւ երեք տասնեակ հայեր:

Պաղեստինցի ոստիկաններին յաջողուել է մահակները եւ վահանների օգնութեամբ իրարից բաժանել կռվողներին:

Չորս մարդ թէթել վնասուածքներ է ստացել:

ԱՄԵԼԻ ՔԻՉ, ՔԱՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻ


ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ԱՄՆ-ի նախագահ ձորճ Պուշը այս շաբաթ ստորագրել է 2008 թվականի յատկացումների մասին օրէնքը, որով Հայաստանի համար հաստատուած է 58,5 միլիոն դոլարի տնտեսական օգնութիւն: Օրէնքում նաեւ պահանջուած է Հայաստանին եւ Ատրպէյճանին տրամադրուելիք ռազմական օգնութեան հաւասարակշիւութիւնը:

ցում է վարչակազմի առաջարկածը: Հայաստանին եւ Ատրպէյճանին 2008 թվականին կը յատկացուի 3-ական միլիոն դոլարի ռազմական օգնութիւն, մինչդեռ Պուշի վարչակազմը առաջարկում էր խախտել 2001 թվականից ի վեր այդ ոլորտում պահպանուող հաւասարակշիւութիւնը՝ Ատրպէյճանի օգտին:

Լեռնային Ղարաբաղին յատկացուելիք օգնութեան վերաբերեալ օրէնքում կոնկրետ թիւ նշուած չէ, այլ կոչ է արուած Պետքարտուղարութեանը՝ Ղարաբաղի առնչութեամբ առաջնորդուել այս տարի

ՍԵՐԺԱՆՏ ԴԱՐՁԱԾ ՆԱԽԿԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»: Ինչպէս յայտնի է, ՀՀԿ-ի կողմից նախագահացու առաջադրուած Սերժ Սարգսեանի օգտին քարոզչութիւն անելու համար բանաստեղծ (եւ արդեն նախկին) դաշնակցական Ռազմիկ Դաւոյեանը նախօրէին հեռացուել է ՀՅԴ-ի շարքերից:



Ռազմիկ Դաւոյեան

Յիշեցնենք՝ Դաւոյեանը «Ռազմիկութիւն» եթերում յայտարարել էր, թէ ճիշդ ընտրութեան համար պետք է վճռորոշ նշանակութիւն ունենայ թեկնածուի աշխատանքը, եւ անձի կերպարն էլ պիտի բացայայտուած լինի: Իսկ այդպիսի բացայայտուած կերպար, Դաւոյեանի խօսքերով, Սերժ Սարգսեանն է: Փաստօրէն, Ռազմիկ Դաւոյեանի համար եկել է Դաշնակցութիւնից թռնելու եւ սերժանտականների ուղին բռնելու ժամանակը: Իսկ պարոն Դաւոյեանի մեծամորթոզների կապակցութեամբ ստանալ երկու կուսակցութիւններէրից էլ՝ ՀՅԴ-ից եւ ՀՀԿ-ից, որի նախագահացուին էլ գովաբանել էր Դաւոյեանը: Սերժ այն հարցին, թէ ինչպէ՞ս կը մեկնաբանի այն հանգամանքը, որ սեփական նախագահացու ունեցող կուսակցութեան անդամը քարոզչութիւն է արել ոչ թէ նրա, այլ հանրապետականների նախագահացու Սերժ Սարգսեանի օգտին, ՀՀԿ մամուլը քարտուղար էր ուարդ Շարմագանովը պատասխանեց. «Դա ՀՅԴ-ի ներքին խնդիրն է, թէ իրենց անդամները ում օգտին են քարոզչութիւն անում, ում են ուզում տեսնել ապագայ նախագահ, մեկնաբանութիւն անելը կոռեկտ չէ: Սակայն մի բան ընդամենը յիշեցնեմ. մէկ տարի առաջ երկրապահների համազումարում ՀՅԴ անդամ Արթուր Աղաբեկեանը յայտարարել է, որ պաշտպանելու է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը: Մեկնաբանութիւնները թողնում եմ ձեզ»: Սերժ այն հարցին էլ, թէ այսքանից յետոյ մի՞թէ Դաւոյեանը չի ընդգրկուի ՀՀԿ-ի շարքերում, Շարմագանովը պատասխանեց. «ՀՀԿ-ում նման հարց դեռ չի քննարկուել, որովհետեւ պարոն Դաւոյեանը ցանկութիւն չի յայտնել անդամագրուելու ՀՀԿ-ին: Բայց իմ անձնական կարծիքով, պարոն Դաւոյեանը շատ բարձր որակի մտաւորական է, սա ես ասում եմ որպէս քաղաքացի»:

մտաւորականներ»: Իր հերթին, ՀՅԴ Հայաստանի ԳՄ մամուլի պատասխանատու Սպարտակ Սէյրանեանը, պատասխանելով մեր հարցին, թէ ինչպէ՞ս է գնահատում Դաւոյեանի «արածը», պատասխանեց. «Գնահատականը այն է, որ մենք կուսակցութիւնից հեռացրեցինք նրան: Էլ ո՞նց գնահատենք»: Սէյրանեանից հետաքրքրուեցինք նաեւ՝ իսկ Դաւոյեանից թիւնում մտավախութիւն չունե՞ն, որ հանրապետականները կարող են այս փաստը օգտագործել իրենց դէմ. իբր՝ տեսէք, անգամ դաշնակցականներն են մեր թեկնածուի օգտին քարոզում, էլ ի՞նչ վահան Յովհաննիսեան: «Իւրաքանչիւր քաղաքական ուժ ինքն է որոշում, թէ իր կազմակերպմանը ինչպէս եւ ումով է հարստացնում», - ի պատասխան յայտարարեց Սէյրանեանը: Իսկ երբ վերջինիս փոխանցեցինք ՀՀԿ մամուլը քարտուղարի այն արտայայտութիւնը, թէ իրենք ուրախ են, որ Հայաստանում կան Ռազմիկ Դաւոյեանի նման առողջ մտաւորականներ, Սէյրանեանը յաւելեց. «Դա հանրապետականների պրոբլեմն է»:

Սերժ այն նկատումանն էլ, թէ դա նշանակուած է, որ ՀՀԿ-ում «շատ ուրախ կը լինէին իրենց գիրկն ընդունել Դաւոյեանին», Շարմագանովը արձագանքեց. «Մենք ուրախ ենք, որ ՀՀ-ում կան առողջ

աւելի վաղ Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունուած առաջարկութիւններով:

Ներկայացուցիչների պալատը Յունիսի 12-ին ընդունած 2008 թվականի արտաքին օգնութեան մասին օրինագծում Հայաստանի համար հաստատել էր 68 միլիոն, իսկ Լեռնային Ղարաբաղի համար՝ 6 միլիոն դոլարի օգնութիւն: Սենատը, իր հերթին, Հայաստանի համար հաստատել էր 39 միլիոն դոլարի օգնութիւն, իսկ Ղարաբաղի առնչութեամբ միայն ուղղակի օգնութիւն ցուցաբերելու կոչ էր արել՝ առանց կոնկրետ գումար նշելու:

Պուշի ստորագրած օրէնքով վրաստանին յաջորդ տարի կը յատկացուի 50,5 միլիոն, Ատրպէյճանին՝ 19 միլիոն դոլարի օգնութիւն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ՝ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Գեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com

MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ. «ՀԱՐՑՈՒՄԸ ՆՊԱՏԱԿ ՉՈՒՆԻ ՈՐԵՒԷ ԿԵՐՊ ԱԶԴԵԼ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայաստանում Միացեալ Նահանգներին դեպքանութիւնը տարածած յայտարարութեամբ իր մտահոգութիւնն է յայտնել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան (USAID) կողմից ֆինանսաւորուող «Հայաստանի ազգային ուսումնասիրութեան» հետ կապուած «որոշ լրատուամիջոցների թերի մեկնաբանութիւնների վերաբերեալ»՝ նշելով, որ հասարակական կարծիքի այդ հարցումը «նպատակ չունի որեւէ կերպ ազդել ընտրութեան վրայ կամ կանխորոշել վերջինիս արդիւնքները»:

«Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) կողմից 2006 թուականին պատուիրուած Հայաստանի ազգային ուսումնասիրութիւնը Հայաստանում իրականացուած է Baltic Surveys Ltd./Gallup կազմակերպութեան կողմից (տեղակայուած Վիլնիւսում) Հայաստանի սոցիոլոգիական ասոցիացիայի աջակցութեամբ: Սովորաբար ընդունուած է նման հարցումներն իրականացնելիս համագործակցել տեղական կազմակերպութիւնների հետ», - պարզաբանում է յայտարարութիւնը: - «Ընդհանուր առմամբ՝ 2006 թուականի Մայիսից իրականացուել են եօթեւեակ հարցումներ: Ամենավերջին հարցումը անցկացուել է 2007 թուականի դեկտեմբերի սկզբին: Ութերորդ եւ վերջին հարցումը նախատեսուած է անցկացնել 2008 թուականի Յունուարի կէսին: Baltic Surveys Ltd. /Gallup կազմակերպութիւնը նաեւ ծրագրում է 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութեան ժամանակ իրականացնել ելքի ուսումնասիրութիւն՝ exit poll»:

Հայաստանում Միացեալ Նահանգների դեպքանութիւնը յայտարարում է, որ «ոչ ԱՄՆ-ի կառավարութիւնը, ոչ Միջազգային հանրապետական ինստիտուտը եւ ոչ էլ Baltic Surveys Ltd. /Gallup կազմակերպութիւնը չեն ստատրում որեւէ կուսակցութեան կամ թեկնածուի»:

ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը շաբաթ օրուայ իր ելույթում արդարացիօրէն նկատեց, որ իշխանութիւնը դուրս է եկել ոչ թէ ընտրութիւնների, այլ կենաց-մահու պայքարի: Սակայն, ցաւօք, այդ դիտարկումը ճիշդ է նաեւ ընդդիմութեան մասով: Ոչ այսօր, ոչ էլ նախորդ տարիներին Հայաստանում նախընտրական բանավէճը չէր ծաւալուում, սակայն, հարկերը 2,5%-ով բարձրացնելու կամ 3,5%-ով իջեցնելու վերաբերեալ, կամ թէկուզ թուրքիայի հետ յարաբերութիւնները լաւացնելու կամ վատացնելու մասին: Ոչ, ինդիքը միշտ դրուում էր «կենաց-մահու» հարթութեան մէջ. մի կողմից՝ արդարութեան ձգտող ընդդիմութիւն, որը գալիս է համակարգը կազմաքանդելու, միւս կողմից՝ փտած եւ կոռումպագրուած իշխանութիւն, որը, բնականաբար, կառոււած է իր աթոռներից՝ թալանը շարունակելու համար: Հարցը դրուում է հենց այդպէս. մենք բարութեան եւ ազնուութեան մարմնակերպում ենք, նրանք՝ բոլոր հնարաւոր չարիքների, եւ, բնականաբար, մենք չենք պատրաստուում բանավիճել ինչ-որ տոկոսների կամ ինչ-որ թուրքիայի մասին, այլ պէտք է իրար ոչնչացնենք: Այդպէս էր ՀՀԾ-ն պայքարում կոմունիստների դէմ, այդպէս էր ընդդիմութիւնը պայքարում ՀՀԾ-ի դէմ (յիշենք, օրինակ, Աշոտ Մանուչարեանի հայհոյութիւնը), այդպէս է հիմա դարձեալ ՀՀԾ-ն պայքարում ներկայիս իշխանութեան դէմ: Հայաստանում 2-3 տարին մէկ ձեւաւորում է «համագային շարժում», եւ անկախ նրա յաջողութիւնից կամ անյաջողութիւնից, երկրում որեւէ էական բան չի

փոխում: Գուցէ ժամանակն է փոխել մեր քաղաքական վերնախաւի մտածելակերպը: Բայց դա պէտք է անեն բոլորը միաժամանակ. օրուայ իշխանութիւնները՝ առաջին հերթին: Մտածելակերպը փոխելու համար բոլորը պէտք է ընդունեն, որ մեզ սպասում են ընդամէնը ընտրութիւններ, ոչ թէ «կենաց-մահու պայքար», որ պահ է օրհասական չէ, ճակատութիւնից գրկուելու կամ միւսի՝ իշխանութեան չզուլու դէպքում ոչ մի աղէտ տեղի չի ունենայ: Պարզապէս, մօտակա մէկուկէս ամսում թեկնածուները մրցելու են, թէ ով երկրի զարգացման աւելի արդիւնաւէտ ծրագիր կ'առաջարկի: Այդ դէպքում կ'առաջանայ նաեւ գիտակցութիւն, որ, օրինակ, եթէ քաղաքացին ուզում է իր ձայնը տալ Սերժ Սարգսեանին, դա չի նշանակում, որ նա խորհիկ թալանչի է կամ կաշառուել է իշխանութեան կողմից: Կամ եթէ ես ձայնս տալու եմ Տէր-Պետրոսեանին, դրանից չի կարելի հետեւութիւն անել, որ ես ուզում եմ ապակայունացնել իրավիճակը, քաղաքացիական բախումներ հրահրել կամ «գունաւոր յեղափոխութիւն» կազմակերպել: Ճիշդ նոյն ձեւով էլ պէտք է վերաբերուել բոլոր մնացած թեկնածուների համակիրներին: Նման գիտակցութիւնը, ի դէպ, թույլ չի տա թեկնածուներին եւ նրանց թիմերին չարից դուրս «տաքանալ» եւ, նախընտրական «տեմպի տակ» ընկնելով, իրար անշնորհ բառեր ասել: Այստեղ է, վատահ եմ, մեր առաջընթացի բանալին: Դժբախտաբար, առաջիկայ ընտրութիւններում նման խաղի կանոնները չեն գործելու: ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՀՀ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀՆՈՐՀԱԲՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի հայրենակիցներ, Նախատեսական այս միջնորոտում կ'ուզէի շնորհակտել մեր ողջ ժողովրդի Նոր տարին եւ Սուրբ Մնունդը՝ իւրաքանչիւրիդ մաղթելով այն բոլոր բարիքները, որոնց դուք լիուլի արժանի էք: Կ'երազէի իրականացած տեսնել ձեր ակնկալիքներն ու պատկերացումները՝ ընտանեկան երջանկութեան, զթաարտութեան, ընկերասիրութեան, բարոյականութեան եւ ձեր երեխաների ապագայի մասին: Կը ցանկանայի, որ դուք ազատուէիք բանակում ծառայող կամ արտագնայ աշխատանքի մեկնած ձեր զաւակների, եղբայրների, հայրերի կամ ամուսինների վիճակով մտահոգուելու ծանր բեռից: Կը կամենայի, վերջապէս, որ ձեզանից շատերի աշխարհացրիւ ընտանիքները միաւորուէին հայրենաց ջերմ օջախներում: Առաջիկայ տարում դուք ունէք այդ ակնկալիքների իրականացման հիմքերը դնելու եւ ձեր ապագան սեփական ձեռքերով կերտելու հնարաւորութիւն: Մի՛ կորցրէք այդ հնարաւորութիւնը: Շնորհակտր Նոր տարի:

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ. «ՎԵՐԵՆԵՐՈՒՄ ԽԱՆԴՆ ՈՒ ՆԱԽԱՆՁԸ ՀԱՏ-ՀԱՏ Է»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ամէն տեղից էլնող բարոյապէս իրաւունք չունի դառնալ նախագահի թեկնածու: Մեր հանրապետութիւնը 3 միլիոն բնակիչ ունի, եւ ամէն մէկը պէտք է իր ծանր տեղը չթելեացնի: Նախագահի պաշտօնը այն տեղը չի, որ ամէն մէկն իր թեկնածութիւնը առաջադրի», - 2008թ. նախագահի ընտրութիւններում իր թեկնածութիւնը չառաջադրելը «Ա.1+»-ին այսպէս բացատրեց ԲՀԿ նախագահը Գագիկ Ծառուկեանը:



ԲՀԿ նախագահը Գագիկ Ծառուկեան

Ի դէպ, նա այսօր արժանացաւ «Հայելի» ակումբի անցկացրած «Տարուայ մարդ եւ ժողովրդին մօտ կանգնած գործարար» մրցանակին: Ակումբի նախագահ Անտոն Թովմասեանը տեղեկացրեց, որ հարցման մասնակիցները իրենց ձայնը Գագիկ Ծառուկեանին են տուել՝ հաշուի առնելով նրա բարեգործութիւնները, ժողովրդի կողքին լինելը, միշտ կառույցներ վերանորոգելը, ՀՀ-ում սպորտի զարգացմանը խթանելը:

ԲՀԿ նախագահը Գագիկ Ծառուկեանն առանձնացրեց մեր ըմբշամարտիկների այցը Բաբու. «Նրանք ոչ թէ 2 ամսով են գնացել Բաբու, ոչ թէ նրանց տարել են, հետ են բերել, այլ 10 օր 35 ըմբշամարտիկ մնացել են այնտեղ, պայքարել եւ կարողացել են Բաբուում բարձրացնել հայկական դրօշը: Սա օլիմպիական մեդալից էլ է առաւել»:

Գագիկ Ծառուկեանը նշեց, որ իր համար ամենակարեւորը հասարակ մարդկանց գնահատականն է եւ աւելացրեց. «Ժողովրդի գնահատականը աւելի է պարտաւորեցնում է աւելի ուշադիր լինել նրա նկատմամբ: Տարիների ընթացքում ես միշտ արել եմ ու աւելի շատ եմ անելու: Անում եմ, Աստուած ինձ աւելի շատ է տալիս: Եթէ մարդու մասին ուզում ես գնահատական իմանալ, նրա ամենաճիշդ գնահատականը կարող է տալ իր հարեանը, տարածքի սովորական բնակիչը»:

Ինչ վերաբերում է քաղաքական դաշտին, ապա նա կարեւորեց ԲՀԿ-ի երկրորդ ուժ դառնալը. «Մենք էլ անելիքներ ունենք: Ինձ ոչինչ անհրաժեշտ չէ, ոչ մի պաշտօն: Ես սիրում եմ իմ երկիրն ու ժողովրդին եւ ուզում եմ, որ ամէն ինչ լաւ լինի: Պէտք է բոլորին հնարաւորութիւն տրուի, ուսանողին, թոշակաւորին, կառուցողին, որ կարողանան կառուցել, ստեղծել ու ապրել»:

Բացի փոխադարձ շնորհակտրանքներից՝ պարոն Ծառուկեանը հնարաւորինս անկեղծ պատասխանեց լրագրողների հարցերին: Նա բացեց նոյնիսկ իր յաջողութեան գաղտնիքը. «Բարի լինելն է, լաւատեսութիւնն է, ձգտումն է: Կեանքում առանց ձգտման ոչնչի հասնել հնարաւոր չէ: Ծառուկեանը կեանքում նախանձ չի ունեցել: Որ ասում են բարի նախանձ, նման բան չի լինում: Պէտք է քո բարեկամին, քո հարեանին, բոլորին օգնես: Եթէ դու բարի եղար, կամեցող եղար՝ հոգեպէս եւ արտաքինապէս մարդու դէմքից դա երեւում է: Մարդու դէմքին պէտք է ժպիտ լինի: Իսկ եթէ դու նախանձ եղար ինքնատիրութեան նախանձ ես մնալու ամբողջ կեանքում, ոչինչի չես հասնելու, իսկ եթէ հասնես էլ, դա ժամանակաւոր բնոյթ է կրելու»:

Քանի որ նախանձի վատ հետեւանքների թեման ուղեկցում էր Գագիկ Ծառուկեանի ամբողջ խօսքը, հետաքրքրուեցինք՝ ինչո՞ւ է այդքան շատ նախանձից խօսում: «Որովհետեւ մարդիկ քնում, զարթնում են՝ Ծառուկեանին են տեսնում: Եթէ դու լաւ բան ես անում եւ քեզ վատ են վերաբերում, նեղում ես: Այսօր արտասահմանում Ծառուկեանին աւելի լաւ են վերաբերում ու յարգում, քան մեր Երեւանում: Սովորական մարդկանց մէջ նախանձ չկայ, բայց վերեւներում խանդն ու նախանձը շատ-շատ է», - ասաց նա:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**Ա. ԾՆՈՒՆԴ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՅՈՒՄՈՒՐ  
Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ  
ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՍԸ**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ**

«Եւ խաղաղութիւն Աստուծոյ որ ի վեր է քան զամենայն միտս պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս» (Փիլիպեցիս գլուխ Դ. 7)

«Եւ Աստուծոյ խաղաղութիւնը՝ որ վեր է ամէն միտքէ, պիտի պահէ ձեր սիրտերը եւ մտածումները Քրիստոս Յիսուսով» (Փիլիպեցիս գլուխ Դ. 7)

Քրիստոնեայ աշխարհի համար Աստուծոյ խաղաղութիւնը մարմնաւորուած նշմարտութիւն մըն է մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի Ծնունդը: Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է Յիսուսի Ծնունդը, որն աշխարհի մարդկութեան մէջ հաստատեց նոր հանգրուան մը, որպէսզի Իր Անձին մէջէն նստագայթող խաղաղութիւնը դառնար նախապահ, կեանքն ու նշմարտութիւնը:

Աստուծոյ խաղաղութիւնը՝ Քրիստոսի գծած դէպի Աստուած տանող նախապահն է, իր ապրած կեանքի խորհուրդն է, եւ իր բերնով արտասանուած պատգամներուն հաղորդած նշմարտութիւնն է: Ուրեմն, երբ Ծնունդը կը տօնենք, ապա մեր հոգեւոր կեանքը իր նոր ծնունդը կ'ապրի Յիսուս Քրիստոսի Ծնունդովը: Ուրիշ խօսքով Յիսուսի Ծնունդը մեզի կը ներկայանայ ոչ միայն որպէս Աստուծոյ սիրոյ առատացումը, այլեւ մեր կեանքի հայելին, որուն մէջ մարդը աւելի յատկապէս կը տեսնէ իր էութիւնը եւ ըստ այնմ կը ճշդեմք նաեւ մեր կեանքի ընթացքը: Ահա այս պահուն է որ կը հրաշագործուի մարդուն կեանքը:

«Եւ խաղաղութիւնն Աստուծոյ որ ի վեր է քան զամենայն միտս պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս»

Յիսուսի Ծնունդը աշխարհի մեծագոյն հրաշքն է: Մարդկային մեր միտքը անկարող է հասկնալու Յիսուսի ծննդեան խորհուրդ խորհրդը, որուն հաւատացողը եւս իր մէջ կ'ապրի նոր կեանքի ծննդեան հրաշքը:

Կ'ապրինք ժամանակներու մէջ, երբ գիտութիւնը ամէն վայրկեան նոր յաջողութիւններ կ'արձանագրէ մարդկութեան կեանքին մէջ, բայց թէ ինչհանձնով կ'արժեւորուին գիտութեան ձեռք բերած յաջողութիւնները, երբ Աստուծոյ հանդէպ մեր հաւատքը նահանջի մէջ է, ու այդ իսկ պատճառով ալ մարդիկ կը պարպուին բարոյական արժեքներու գիտակցութեամբ ապրելու տեսիլքէն ու գիտակցութենէն:

Յիսուսի Ծնունդը հրաշալի օրհնութիւն մըն է, որը խորհիմ մէջ Աստուածապարգեւ մեր կեանքը տօնի կը վերածէ, երբ Քրիստոսի Աւետարանը կը նստագայթէ մեր հոգիին ընդմէջէն: Քրիստոնեայ մարդուն համար Յիսուսի Ծնունդը տօնելու գործնական մէկ եղանակ կայ, որն է մեր մէջ վերարթնացնել Աստուծոյ հանդէպ հաւատքի նշխարները, մեր մէջարթուն պահել մեր նախնեաց հաւատարմութիւնը եկեղեցւոյ հանդէպ, ունենալ տեսիլք՝ ընտանեկան սրբութեամբ արժեւորելու համար մեր կեանքը, մեր գաւակներուն ջամբելու բարի ու ստեղծագործ աշխատանքներով կեանքը իմաստաւորելու գիտակցութիւնը: Այս բոլորին մէջ է խորացած Աստուծոյ խաղաղութիւնը, որը կը մերժէ խաւարն ու անոր գործերը:

Միքիլի հայ Բրիստոնեայ, մեր առջեւ կը բացուի Նոր Տարին 2008 բուականը, որպէս երկնատուր բարիք մը: Մեզի կը մնայ Նոր Տարին հարստացնել հաւատքի գործերով, որպէսզի մնայունօրէն մեր կեանքը դարձնենք վկայութիւն Քրիստոսի Անձին համար: Կեանքի այս ընթացքով խաղաղութիւն կը տարածենք մեր շուրջիններուն վրայ եւ Քրիստոսի սիրովը լեցուն մարդկութիւնը կը դառնայ մէկ սիրտ ու մէկ հոգի:

«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ, Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:


Թող այս մաղթանքը ձեր սրտերէն բխում առնող ու շրթներուն վրայ արտասանող աղօթք ըլլայ յարատեւօրէն: Քանզի ամէն անգամ երբ կ'արտասանենք մեր բայերը դէպի Աստուած առաջնորդող հոգեւոր ելեւորականացում մը կ'ապրինք մեր էութեան մէջ: Եւ երբ միմեանց կ'ողջունենք մոյն մաղթանք-աղօթքով, ապա խաղաղութեան պատգամները կը դառնան աշխարհի ու մարդկանց կեանքին մէջ:

Թող Մանուկ Յիսուսի Ծնունդը բոլորի մէջ առաւել ամրացնէ Աստուծոյ սէրն ու խաղաղութիւնը, որպէսզի բոլորս ձեռք-ձեռքի, սիրտ ի սիրտ մեր կեանքն ընծայաբերենք մեզուն մեր հայրենիքի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամերիկայի օրհնեալ հողին, մեր Մայր Դաստիարակ՝ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին, գալիք բոլոր առաքելութեանց եւ այս բոլորը որպէս յարգանք մեր նահատակներուն եւ որպէս գեղեցիկ ու արդար ընծայում Աստուծոյ փառքին համար:

Թող Քրիստոսի Ծնունդը խաղաղութիւն, առաւել կեանք, բազմաողջութիւն ու նորանոր յաջողութեանց օրհնութիւններ բերէ համայն աշխարհին, ամէն ընտանիքէ, ներս ու բոլոր հիգիներուն:

Մնամք սիրոյ ողջունիւ,  
Աղօթարար՝

**ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ  
Առաջնորդ**



**ԱՐՅԻԱՊԱՏԻՒ ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆԻ  
ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՍԸ**

**ԾՆՈՒՆԴԸ՝ ՅՈՅՍԻ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐ**

Մանուկի մը աշխարհ գալը լաւագոյն ապացոյցն է Աստուծոյ սիրոյն: Ամէն անգամ որ մարդկային էակ մը կը ծնի, ի յայտ կու գայ Աստուծոյ ստեղծագործող գորութիւնը, որուն ինքն իսկ, Աստուած, կ'ուզէ բաժնեկից դարձնել մարդը, ցոյց տալով թէ որքան կը գնահատէ եւ կ'արժեւորէ մարդը: Աստուածային սիրոյն գեղումը եւ գերագոյն արտայայտութիւնը՝ իր Որդիին մարդկային ծնունդն է:

«Աստուածային սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ՝ որպէսզի աշխարհը փրկուի անով», ըսաւ նոյնիմն Յիսուս թերահաւատ Նիկողեմնոսին, որ չէր կրնար հաւատալ թէ մեղքով դատապարտուած մարդը կրնայ վերստին ծնանիլ եւ Աստուծոյ գաւակ դառնալ:

Այսինքն սէր տիեզերքի արարչին ու տիրոջ կողմէ իր արարածին հանդէպ՝ մարդկօրէն անըմբռնելի է եւ անհաւատալի: Բայց Յիսուս միշտ ասոր համար եկաւ աշխարհ. համոզել մեզ թէ այդ կարելի է, որովհետեւ Աստուած սէր է, եւ չի կրնար թողուլ որ իր ստեղծած էակը դատապարտուի ու դժբախտ դառնայ: Այս պատճառով մարդացաւ, մեր բնութիւնն առաւ եւ մեզի նման չարչարանքի ու մահուան ենթարկուեցաւ՝ գիտակից եւ կամաւոր կերպով:

Պարգապէս որովհետեւ անսահման սիրով սիրեց մարդը: Աւելի բացայայտելով իր աշխարհ գալուն նպատակը, Քրիստոս աւելցուց. «Ես եկայ որպէսզի մարդիկ կեանք ունենան, եւ առատօրէն ունենան»: Քրիստոսի խոստացած կեանքն ու րախոսութեան եւ յոյսի աղբիւր է:

Ուրախութիւն՝ որովհետեւ իր գալուստով իրականացաւ խոստում մը մեր փրկութեան: Ծնորհիւ անոր՝ մեզնեզատարմեցանք մեղքի գերութենէն եւ անոր հետեւ անկեանքէն: Դարձանք լոյսի գաւակներ, որոնք ալ չեն խաբիս-բիր խաւարի մէջ, այլ գիտենք թէ ինչու համար աշխարհ եկած են:

Յոյս՝ որովհետեւ գիտենք այսուհետեւ թէ մեր ապրած կեանքը իմաստ եւ նպատակ ունի: Գիտենք որ մեր կեանքի պայմարը եւ կրած տառապանքները անհեթեթ ու անօգուտ բաներ չեն, այլ կը ծառայեն երջանիկ ապագայ մը պատրաստելու, ոչ միայն անդեմականի այլ նաեւ այս աշխարհի մէջ:

Ծնունդի ուրախութիւնը, որպէսզի հարագատու կատարեալ ըլլայ, չի սահմանափակուիր եւ չ'արդարանար խրախնամքի եւ նուէրներու փոխանակումով, այլ պէտք է թափանցէ եւ ներշնչէ մեր սրտերը, միտքը, մեր ամբողջ էութիւնը եւ կերպարանափոխէ մեր կեանքին բոլոր ծայրերը:

Այսօր, համայն աշխարհը Ծնունդ կը տօնէ, նոյնիսկ անոնք որ անոր իմաստն իսկ չեն գիտեր կամ կ'անտեսեն: Ամենէն աւելի վաճառականներն են որ անհամբեր կը սպասեն այս տօնին, իրենց ֆաւակները պարարտացնելու համար: Մեր Ծնունդը անով կը յատկանշուի որ մեզ կը մօտեցնէ նախ Աստուծոյ, ապա մարդերուն: Տիրութեան Ծնունդը ուր բացակայ է Աստուծոյ եւ մարդոց սէրը՝ որ կը հրաւիրէ մեզ հաշտութեան եւ խաղաղութեան, եւ ամենէն հաստատ գրաւականն է մեր երջանկութեան:

Մեր սրտերը թող յորդի ուրախութեան եւ յոյսի զգացումներով, որպէսզի ամէն անգամ որ Ծնունդը տօնենք, գիտնանք թէ Աստուած մեզի մօտ է եւ կը հրաւիրէ մեզ որ իր սէրը բաժնենք մեր եղբայրներուն հետ, որպէսզի անոնք ալ գիտնան թէ Յիսուս աշխարհ եկած է մեզի երջանկութիւն բերելու համար:

Ծնորհաւոր Սուրբ Ծնունդը բոլորիդ:

**ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ  
Առաջնորդ Կաթողիկէ Հայոց**

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԻ ԾՆՈՒՆԴԱՆ ՊԱՏԳԱՍԸ  
ԾՆՈՒՆԴՈՎ ՄԵԶԻ ՅԱՅՏՆՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԸ**

Սուրբ Ծնունդը տօնակատարութիւնն է մասնայատուկ, անմասն ու չնաշխարհիկ մանուկի մը ծննդեան, որ կը կոչուի Յիսուսի Քրիստոս. Անոր, որուն միջոցաւ Աստուած կը գործէ մարդկային պատմութեան մէջ: Այս Յիսուս Քրիստոսը որ ամենէն համեստ պայմաններու մէջ ծնաւ եւ մեծցաւ՝ եղաւ մարդկութեան ամենէն տիրական եւ կարեւոր Անձնաւորութիւնը, եզակի դէմք մը, որ երբեք չի շնորհուած է մեր այս մոլորակին: Ան մարդացած Աստուածն էր, մարդկութեան յոյսն ու յոյսը՝ միակ «նամբան, նշմարտութիւնն ու կեանքը»: Այդ, Ծնունդը տօնակատարութիւնն է անկրկնելի դէպքի մը, Աստուծոյ մարդեղութեան, որուն նմանը երբեք չէ եղած եւ երբեք պիտի չ'ըլլայ:

Ի՞նչ տեսակ Աստուած մը կը գտնենք Ծնունդին մէջ: Առաջին, Ծնունդով մեզի յայտնուած Աստուածը Միքող Աստուած մըն է: Այն Աստուածը որ մեզի յայտնուեցաւ Ծնունդին միջոցաւ՝ եկաւ հաստատելու, թէ ոչ միայն մտահոգուած է մարդկութեան նահատարողով, այլ նաեւ միջամտիս եղած է անոր կեանքին: Աստուած այն «բացակայ տանտէր» չէ, ոչ ալ այն «հրաշագործ ժամագործ»ը, որ ժամացոյցը շինելէն ետք՝ կը հեռանայ անկէ: Ծնունդով յայտնուած Աստուածը «էմանուէլ» է, այսինքն «Աստուած մեզի հետ», Ան ամէնօրեայ իրականութիւն է, մշտական ներկայութիւն:

Այդ Աստուծոյ (որ կու գայ մեզի Քրիստոսի Ծնունդով) իսկական բնութիւնը սէր է: Այդ Աստուածը «այնչափ սիրեց աշխարհը որ իր Միածին Որդին դրկեց, որպէսզի անոր Անոր հաւատալ չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3.16): Այդ մասին խօսելով Պողոս Առաքելաւ վկայեց, «Աստուած իր սէրը որ մեզի հանդէպ ունէր յայտնեց երբ դեռ մեղաւոր էինք՝ Քրիստոս մեզի համար մեռաւ» (Հռով. 5.8): Ծնունդով յայտնուած այդ նոյն Աստուածը կոչ կ'ուղղէ բոլորին յայտարարելով, «նոր պատու իրան մը կու տամ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի» (Յովհ. 13.34):

Երկրորդ, Ծնունդով մեզի յայտնուած Աստուածը խաղաղութեան Աստուածն է: Դարեր առաջ եսայի Մարգարէն Քրիստոսի Ծնունդը մարգարէա-

# ՎԵՐՉ ՏԱԼ ՊԱՏՐԱՆՔԻՆ ԵՒ ՑՈՒՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՅԱՐՈՒԹՅՆ ԴԱԻԻԹԵԱՆ

«Մասիս»-ի 1998-99 Նոր Տարուայ բացառիկին մէջ լոյս տեսած «Կը Փնտռուի Առաջնորդ» խորագիրը կրող մեր յօդուածով կը շեշտէինք կարեւորութիւնը, մեր պատմութեան այս բախտորոշ եւ ճակատագրական ժամանակաշրջանին, ունենալու «յատակատեսիլ դեկավար մը որ ժողովուրդի ողջ կարողականութիւնը ուղղէ եւ առաջնորդէ այդ տեսիլքի ուղղութեամբ»: Հոն կը մատնանշէինք թէ՛

«Այսօր, յոյժ կարիքը կը գգանք առաջնորդներու, որոնք գիտակից են իրենց առաքելութեանց՝ որպէս պահապանը մեր ազգի աւանդութեանց եւ իտէալներուն, փայփայիչը անոր յոյսերուն եւ խթանիչը անոր հաւատքին, մտքի ու բազկի ուժին: Առաջնորդը գլխաւոր դեր կը խաղայ ժողովուրդի հոգեվիճակի աշխուժութեան մէջ: Ան տեսիլք ունեցող մարդ է եւ պարտի ժողովուրդը առաջնորդել այդ տեսիլքի ճամբով:

Այսօր, ցաւով կը հաստատենք, որ անկեղծ, ազնիւ ու վստահութիւն ներշնչող ղեկավարներու պակասը գզալի է Հայաստանի թէ՛ Սփիւռքի տարածքին: Ու ասոր արդիւնք է ժողովուրդի ապրած հիասթափութիւնը: Շարքը չի կրնար հետեւիլ ղեկավարի մը, որու խօսքը գործին համագործ է:

Մեր յօդուածի վերջաւորութեան մտահոգիչ կը գտնէինք որ Ռոպերթ Քոչարեանի մօտ կը պակասէր այդ տեսիլքը, փիլիսոփայական մօտեցումը:

Այսօր, ցաւով կը հաստատենք, որ իր իշխանութեան առաջին 10 ամիսներէն կրած մեր տպաւորութիւնը, 10 տարիներ ետք կը մնայ նոյնը: Ռոպերթ Քոչարեան չեղաւ «անկեղծ, ազնիւ ու վստահութիւն ներշնչող ղեկավար մը», այլ դժբախտաբար՝ մեծամիտ, քինախնդիր եւ արհամարհոտ: Անցնող 10 տարիները ցոյց տուին, որ Քոչարեանի խօսքը համագործ չեղաւ իր գործին, այլ եղաւ միայն ցուցակաւ (show) եւ պատրանքային: Խօսինք օրինակներով:

### ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑ

Տասը տարիներ առաջ Քոչարեան իշխանութեան եկաւ մերժելով Ղարաբաղեան հարցին փոխզիջումնային եւ փուլային տարբերակը, ամբաստանելով նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, Ղարաբաղը ծախելու յանցանքով: Այսօր թէ՛ Քոչարեան եւ թէ՛ Սերժ Սարգսեան համաձայն են փոխզիջումնային ու փուլային տարբերակին, բայց ցուցականօրէն մեզի կը փորձեն համոզել, որ աւելի նպաստաւոր դիրքի վրայ ենք, մինչ իսկութեան մէջ, հակառակը ճիշտ է:

### ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑ

Տասը տարիներ առաջ Քոչարեան իշխանութեան եկաւ Յեղասպանութեան ճանաչման հարցը մեր արտաքին քաղաքականութեան հիմքերէն մին դարձնելու խոստումով: Անցնող տասը տարիները ցոյց տուին որ այդ մէկը ցուցակաւ բնոյթի էր, մանաւանդ երբ նկատի առնենք իր այն յայտարարութիւնը, թէ՛ Հայաստանը թուրքիայէն հողային պահանջ չունի: Երկու շաբաթներ առաջ, Դեկտեմբեր 8-ի հանրահաւաքին, նախկին նախա-



գահ Լեւոն Տէր Պետրոսեան կը բացայայտէր հետեւեալը.

«1997 թուականին, երբ ես վարչապետ Քոչարեանին առաջարկեցի գլխաւորել «Հայաստան-Սփիւռք շարաբերութիւնների համակարգման պետական խորհուրդը», նա հրաժարուեց պատճառ բռնելով այն հանգամանքը, որ խորհրդի գործունէութեան ծրագրում բացակայում է Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ կէտը: Երբ ես «Հայաստան համահայկական հիմնադրամի» տնօրէն Մանուշակ Պետրոսեանի ներկայութեամբ, խնդրեցի հիմնաւորել իր տեսակէտը, Քոչարեանն ասաց բառացիօրէն հետեւեալը. «Ես չգիտեմ, թէ ինչ բան է ցեղասպանութիւնը, բայց հաստատ գիտեմ, որ դա պէտք է Սփիւռքին: Եթէ մենք մտցնենք այս կէտը, ապա Սփիւռքը կ'օգտուի եւ աւելի մեծ նիւթական օժանդակութիւն կը ցուցաբերի Հայաստանին: Աւելին, եթէ Հայաստանը պաշտօնապէս ներկայացնի Յեղասպանութեան ճանաչման պահանջը, ապա թուրքիան տեղի կը տայ եւ մէկ տարուց կը բացի հայ-թուրքական սահմանը: Բացի այդ, նա աւելի անկողմնակալ դիրք կը գրաւի Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում եւ այլեւս Չանսիրաբար չի պաշտպանի Ատրպէյճանի դիրքորոշումը»: Աւելորդ կը նկատենք յաւելել մեկնաբանութիւն ընել:

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿՔԱՂԱՔԱՑՅՈՒԹԻՒՆ

Տասը տարիներ առաջ Քոչարեան իշխանութեան եկաւ ՀՀ Սահմանադրութիւնը բարեփոխելու եւ երկքաղաքացիութեան հարցը լուծելու խոստումներով: Մենք ականատես եղանք թէ ինչպէ՛ս 2005-ին սահմանադրական հանրաքուէի աղաղակող խախտումներով «ընդունուեցաւ» նոր սահմանադրութիւնը եւ «լուծուեցաւ» երկքաղաքացիութեան հարցը որ մինչեւ օրս որեւէ գործնական արդիւնքի չէ հասած:

### ԱՂՏԻ ԳՕՏԻ

Տասը տարիներ առաջ Քոչարեան իշխանութեան եկաւ Աղէտի Գօտի հասկացողութիւնը մի քանի տարիէն վերացնելու խոստումով: Երկու շաբաթներ առաջ, Ազգային ժողովի փոխ-խօսնակ Գալուստ Սահակեան դարձեալ խոստացաւ որ երեք տարիէն երկրաշարժի հետ կապուած բոլոր հարցերը պիտի լուծուին: Իսկ «Հայոց Աշխարհ»

իշխանամէտ թերթըր աւելի յառաջ երթալով, գրեց թէ «իշխանութիւնները վերականգնման խնդրին առաջնահերթ կարեւորութիւն տուին: Արդիւնքում՝ ներկայիս արդէն կարելի է խօսել «Աղէտի Գօտի» հասկացողութեան վերացման մասին»: Նշենք թէ, ըստ Գիւմրի քաղաքի պաշտօնական տուեալներուն, տակաւին 3972 ընտանիք (մօտ 20,000 անձ) անօթեւան կը սեպուին ու դեռ չենք խօսիր Գիւմրիի շրջակայքի գիւղաքաղաքներու յաւելեալ 2,000 ընտանիքներու անօթեւան վիճակի մասին:

### ԱՐՏԱԳԱՂԹ

Տասը տարիներ առաջ Քոչարեան իշխանութեան եկաւ Արտագաղթը կասեցնելու խոստումով: Իր իշխանութեան առաջին տարիներուն այդ մէկը աւելի սաստկացաւ, իսկ վերջին տարիներուն մտահոգիչ երեւոյթ դարձած է Ղարաբաղէն արտագաղթը, գոր մարդիկ կը խու-

### ՍԱԿԻՆ ԲԱԳՔ Ի ԲԱԳ ՔՆՆԱՐԿԵԼՔ: ՑՈՒՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

. Երեւանի Կեդրոնի շինարարութիւնը մէկ պատկերաւոր արտայայտութիւնն է քոչարեանական ցուցականութեան: Փոքր տարածքի վրայ շրջում, մինչ երկրի ջախջախիչ մեծամասնութիւնը կը տուալտի աղքատութեան մէջ: Իսկ այդ երեւութեան շրջումն իսկ մտահոգիչ խորք ունի: Աստուած մի արասցէ եթէ Սպիտակի երկրաշարժի նման հատ մըն ալ Երեւանը ցնցէ: Այդ նորակառոյց բարձրարժեք ու խճողուած շէնքերը ինչպիսի՞ ապահով հիմերու վրայ դրուած են:

. Քոչարեանական ցուցականութեան մէկ այլ օրինակը Հայաստան-Սփիւռք 3 խորհրդաժողովներն են: Հազարաւոր մարդիկ ներկայ եղան, օրերով հարցեր քննարկուեցան, պաշտօնական որոշումներ առնուեցան (նոյնիսկ ի յառաջագունէ), բայց գործնական ի՞նչ իրականացուցինք որոնցմով կրնանք նպատակաւոր:

. Քոչարեանական ցուցականութեան մէկ այլ օրինակը կաշառակերութեան դէմ պայքարի յանձնարարութեան է: Գայլը հոտին պահապան, կ'ըսէ հայկական առածը: Նոյնիսկ երբ մօտ 3 միլիար տոյար արժողութեամբ միջազգային օգնութիւնները քննարկելու կոչուած Ազգային ժողովի յանձնարարութեան խորհրդականներէն Պրոս Թասքըր, չարաչահումներ կը յայտնաբերէ, թէ՛ Յանձնարարութեան եւ թէ՛ Միջազգային Դրամատուրը կը փորձեն ծածկել գանձը: Դեռ չենք խօսիր Royal Armenia-ի խեղկատակութեան եւ մաքսային պետի, անոր տեղակալին տասնեակներով business-ներուն չարաչահումներուն եւ պաշտօնի բարձրացման մասին:

Շարք էջ 6

## ՇՆՈՐՀԱԴՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԵԴՐԱԿ ԵՒ ԱԼԻՆ ԱՃԷՄԵԱՆ

ՎԱՅԱՍԱՆ - 2007

ՎԵՐՋ ՏԱԼ ՊԱՏՐԱՆՔԻՆ ԵՒ ՅՈՒՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Շարունակում էջ 5-էն

Քոչարեանական ցուցակա- նութեան մէկ այլ օրինակը մեզի հրամցուեցաւ Հայաստան Համահայ- կական Հիմնադրամի վերջին թելե- թօնին: Թեման սահմանամերձ գիւ- դերու օգնութեան հասնին էր: Բայց առաջին տեսաժապաւէնը ցոյց տուաւ Քոչարեանը դահկորդի հագուստնե- րով, մինչ խօսնակը կը յայտարարէր որ Հայաստանի քաղաքացիները փո- խանակ ուրիշ երկիրներ երթալու ձմեռնային արձակուրդի եւ սահնա- կի համար, այդ մէկը կրնան ընել Ծաղկաձորի մէջ...: Կրկնէք թէ թե- ման խեղճ ու կրակ գիւղերու օգնու- թեան հասնին էր:

Քոչարեանական ցուցակա- նութեան մէկ այլ օրինակը ազատ ու անկախ մամուլի պատրանքն է: Մէկ կողմէ հաւաստիացումներ կը տրուին, իսկ միւս կողմէ կը փակ- ունին Ա1+ եւ Նոյեան Տապան հե- ոուստակայանները, մնացեալները ստրկօրէն կը ծառայեն իրեն, իսկ եթէ պատահի, որ Գիւմրիի «Գա- լա»ի նման անկախ վարքագծի դուզն արտայայտութիւն իսկ ունե- նան, անմիջապէս կ'ենթարկուին ձնշումներու:

Քոչարեանական ցուցակա- նութեան մէկ այլ օրինակը այն հաւաստիացումներն էին որ Պա- քու-ձէյհան քարիւղատարը կամ Կարս-Ախալքալաք-Պաքու երկա- թուղազիծը չեն իրագործուիր: Առաջինը արդէն բանուկ է, իսկ երկրորդը շուտով իրականութիւն դառնալու ճամբուն վրայ է: Կը խօսինք համաշխարհային կառուց- ներու մէջ ընդգրկուելու մասին, բայց կը մեկուսացուինք մեր իսկ տարածաշրջանին մէջ:

Քոչարեանական ցուցակա- նութեան մէկ այլ օրինակը լա 45 միլիոն տոլար արժող նա- խագահական օդանաւն է, որուն «նուիրատուները» գաղտնի կը մնան: Մեզի համար դժուար է հասկնալ թէ ինչո՞ւ համար համա- հայկական ուժերով համաշխար- հային թելեթօններ կազմակերպե- լով 3-4 տարիներու վրայ հազիւ կրնանք ռազմավարական արժէք ներկայացնող Արցախի Հիւսիս- Հարաւ «ողնաշար» ճանապարհին համար անհրաժեշտ 25 միլիոն տոլարը հաւաքել (ու դրամահա- ւաքի աւարտին 3 տարիներ ետք իսկ ճանապարհը չհամբողջացնել), իսկ անդին իր իշխանութեան մնա- ցած 3 ամիսներուն համար 45 միլիոն տոլար արժող օդանաւ մը նուիրել Քոչարեանին: Ինչպէ՞ս կրնանք «գոչք պարտքի դիմաց» համաձայնութեամբ, 100 միլիոն տոլարի դիմաց վաճառել «Մարս» արտադրական միաւորումը, «Մեր- կելան» ինստիտուտն ու գործա- րանը, Հրազդանի ԶԷԿ-ի անա- ւարտ բաժինը, Սեւան-Հրազդան քասքատը, Աթոմակայանի ֆինան- սական կառավարման իրաւունքը եւ... 45 միլիոնով օդանաւ մը գնել:

Յօդուածի մը պարտադրած սահմանափակումները արգելք կ'ըլ- լան մեզի երկարելու շարքը այլ օրինակներու, ինչպէս Հոկտեմբեր 27ի անաւոր սպանդի խայտառակ դատավարութիւնն ու ծածկումը, դրամի «արժեւորման» պատրան- քը երկրի երկնիշ «վազրային յա- ուաջխաղացքը», նախագահական թեկնածուներու ունեցուածքի խայ- տառակ յայտարարագրերը, մեծա-

գոյն ձեռնարկութիւններու հարկա- յին խեղճուկ մուծումները, պաշ- տօններու քմահաճ նշանակումները եւ այլն, եւ այլն, որոնք բոլորն ալ պատրանք ստեղծելու եւ կամ ժող- վուրդին հանդէպ արհարհոտ կեց- ուածքի արտայայտութիւններ են:

Իր սեպհական ժողովուրդի հան- դէպ արհամարհոտ կեցուածք կրնայ ունենալ միայն ազգային ինքնագի- տակցութենէ, ազգային իտէալներէ ու արժէքներէ պարպուած պատե- հապաշտ, ետակեղրոն, մեծամիտ ու քինախնդիր անձը: Իշխանութիւնը գրաւած այսպիսի անձինք չեն վա- րանիր իրենց անձնական հարստաց-



ման համար շահագործել եւ հարս- տահարել երկիրն ու ժողովուրդը: Այսպիսուս անոնք ինքզինքնին կ'օտա- րացնեն ժողովուրդէն: Երկիրը դարձնելով խոցելի ու գայն գրկելով յառաջխաղացքի իր հիմնական ազ- դակէն՝ ժողովուրդի աշխոյժ մաս- նակցութենէն:

Անցնող տասը տարիներու ըն- թացքին ծաւալող այս գործընթա- ցին արդիւնքն է այն համատարած անտարբերութիւնը, յուսալքու- թիւնը, որ գոյութիւն ունի այսօր ժողովուրդին մէջ: Տարուէ տարի այսպիսիներու թիւը տակաւ շատ- նալով հասած է համաճարակային վիճակի, որուն պէտք է անմիջա- կան վերջ մը դնել: Անցնող տասը տարիներու ընթացքին, հրապա- րակի վրայ եղող քաղաքական գոր- ծիչները, անհատապէս թէ հաւա- քաբար, փաստեցին իրենց անկա- րողութիւնը ձերբազատուելու քո- չարեանա-սերժական այս պատե- հապաշտ վարչախումբէն եւ փո- խելու տիրող համակարգը: Նախ- կին նախագահ Լեւոն Տէր Պետրոս- եանի քաղաքական աշխոյժ դաշտ վերադարձը, միակ յուսադրիչ գոր- ծօնն է այս փոփոխութեան: Հետե- ւաբար, եթէ այդ քաղաքական գործիչները իրապէս անկեղծ են իրենց համոզումներուն մէջ՝ ձեր- քազատուելու այս օտարացուած վարչախումբէն, ուրեմն տրամա- բանականօրէն պէտք է թիկունք կանգնին Լեւոն Տէր Պետրոսեանին: Անցնող երեք ամիսներու փորձը ցոյց տուաւ թէ որո՞նք անկեղծ են եւ որո՞նք ցուցական: Ժամանակը հասած է ձերբազատուելու ամէն տեսակի պատրանքային եւ ցուցա- կան երեւոյթներէ եւ գործիչներէ: Ժամանակը հասած է, որ ժողովուր- դը անսա՛ պատմութեան կանչին, հողի՛ կանչին ու իր արեան կանչին, իշխանութեան հասցնելով անկեղծ, ազնիւ ու վստահութիւն ներշնչող դեկավարներ, որոնց գործը համա- գօր ըլլալ իրենց խօսքին: Մեր համոզումով, այսօր այդպիսի բե- կումնային փոփոխութեան առաջ- նորդող միակ ներագրեցիկ ուժը Լեւոն Տէր Պետրոսեանն է:

ՍՊԱՍՈՒՈՂ ՏԱՐԻ ԱՐՄԵՆՈՒՅԻ ԲՈՅԱՄԵԱՆ

Տարիներ արագ անցնում եւ գնում Դառնում են յուշեր, դառնում պատմութիւն, Տանելով իրենց հետ վառ երագների խափուած յոյսերի մի ամբող- ջութիւն:

Որքան երագներ մնացին անկատար Որքան արցունքներ թափուեցին ի գուր, Որքան մայրերի աչքեր կարօտած Սպասում են իրենց բալեքին կորցրած:

Եւ տարիներին այդ լուռ հեռացող Աւելանում են միշտ նորերն անդարձ, Իսկ եկող տարուան մենք սպասում ենք Յոյսի եւ սրտի ողջ կարողու- քեամբ:

Այս եկող տարուան սպասում ենք անկեղծ Սրտի թրթիռով, պայծառ յոյսերով, Կապոյտ, վարդագոյն վառ երագներով Եւ ապագայի ակնկալիքով:

Այս անցնող տարում, որքան գեղեցիկ Սրտեր թնդացին, որքան նոր սրտեր Իրար միացան, որքան նոր դէմքեր փայլատակեցին Որքան պատրանքներ իրականացան:

Ցանկանք սպասուող տարին սպագայ, Բերի իրեն հետ մեծ երջանկութիւն Եւ խաղաղութիւն այնքան սպասուած Աշխարհին բերի բարիք անսահման:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՐԵՐ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ


Արի, քեզ հետ բեր սեր ու հաշտութիւն, Ու հանգիստ քայլի խաղաղ աշխարհում, Տոպրակներով բեր խաղալիք ու սեր Ու ջերմ համբոյրներ որբերի համար...

Արի, քեզ հետ բեր խրատներ բարի, Լցրու մենզ ոգուն չարագործների, Կրակ չը վառեն չորս կողմն աշխարհի Արի, այս դաժան կրակը մարի...

Արի, միշտ արի, դու անգօրի հայր՝ Ու անգին մայրը ամբողջ աշխարհի, Եւ նրանց սիրով խնդրի Աստծուն Գուք դնի սրտին, կրակ վառողի...

Արի, դու արի խաղաղ նոր տարի, Յէզ բանաստեղծիս իղծը կատարի, Կրկին քեզ հետ բեր խաղալիք ու սեր Ամբողջ աշխարհի սրտերը վառիր...

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԼՈՒՍՏ ԵՒ ԼԵՆԱ ՏԵՐՏԵՐԵԱՆ

**ՎԱՅԱՍՏԱՆ - 2007**

**ՄԵՐՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՅՈՑ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՈՎ**

**ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ**

Արշալեցին ասորին, պարսիկը, հռովմայեցին, բիզանդացին:

Գրոհեցին արաբը, մամլուքը, թիւրքմէնը:

Ներխուժեցին սելճուքեան թուրքը, թաթար-մոնկոլը, թուրք օսմանցին:

Կիսավայրենի հորդաներ ու վաչկատուն ցեղախումբեր նուաճեցին, բռնագրաւեցին, յափշտակեցին, աւերեցին եւ աւարեցին ամէն բան:

Քարուքանդ ըրին հայոց աշխարհը:

Ասպատակեցին ու թալանեցին իր ինչքը:

Կոտորեցին ու սուրէ անցուցին իր քաջերը:

Գերեվարեցին իր կիներն ու զաւակները:

Ստրկացուցին հայու ճարտար ձեռքերն ու ստեղծագործ միտքը, եւ զինք դարձուցին հլու կամակատարը իրենց շահերուն ու քմայքներուն:

Աւելի ուշ, եկաւ Սովետը՝ փրկութեան խոստումով, սակայն որմէ ծնունդ առած երազները մղձաւանջ դարձան շուտով:

Ապա, անակնկալօրէն, տասնըվեց տարիներ առաջ մեզի մատուցուեցաւ՝ Հայաստանի այնքան երազուած անկախութիւնը: Միաժամանակ, արցախահայութիւնը ազատագրեց իր երկիրը Ատրպէյճանի տիրապետութենէն: Անկախութիւնը, սակայն, արագօրէն վերածուեցաւ ներքին նորատեսակ ստրկութեան: Արցախահայ քաջարի ազատամարտիկներու հայանուն հարստահարիչները, զոհուած աննման զիւնցազուններէն կորզուած փառապապկը անարժանօրէն իրենց գլխուն, փոխադրուեցան Երեւանի քաղաքական ճիշդ կեդրոնը: Հայաստանի աւագանին զանոնք հաստատեց իշխանութեան ամենավերին ոլորտները, որպէսզի հովանի ըլլան համայն հայ ժողովուրդին: Բայց անոնք դարձան պատուհասը հայութեան, արիւնով ներկեցին հայ նորանկախ պետականութեան ամբողջ համակարգը, ահաբեկեցին ու միւսնու ախար հաշմանդամ վիճակի մէջ ձգեցին անկախութեան հազիւ բաբախել սկսող սիրտը՝ հայկական խորհրդարանը: Երկրի ամբողջ տարածքին հաստատեցին սարսափի, ոճիրի, անբարոյականութեան համապարփակ տիրապետութիւնը: Հայրենի գերագոյն շահերուն դաւաճանութիւնը, կաշառակերութիւնը, քաղաքական սպանութիւնը դարձան իշխանութեան գլխաւոր գործելակերպը, պաշտօնական լեզուն: Այսպէս, հայ անունը կրող յեյլուզակներու փոքրաթիւ աւագակախումբ մը անողորք «ազատութեամբ» պատանդ առաւ, ասպատակեց ու հոգեվարքին հասցուց՝ իր պատմական հողատարածքի տասը տոկոսին իջած «ազատ, անկախ» Հայաստանի Հանրապետութիւնը:

Եւ այսօր՝ շփոթ, ապշահար, կրաւորական գայրոյթով եւ անգոր ցասումով ամէնքս ալ – հայրենիքի մէջ եւ Սփիւռքի տարածքին – լուռ մեղակցութեամբ կը դիտենք արտառուց տեսակի անորակելի անկախութեան մը ահաւոր սայթաքումը իր երթուղիէն, արագ քայքայուած եւ մօտալուտ գահավէժ անկումի ստոյգ կանխանշանները: Կը դիտենք՝ առանց ցուցաբերելու պահի

Քաղաքականութեան մէջ մեր մասնակցութիւնը զլանալուն հետեւանքով մեր կրած պատիժներէն մէկն ալ այն է որ, ի վերջոյ, կը կառավարուինք մեր ստորադասներուն կողմէ:

Պղատոն

լրջութեան համազօր արթնամտութիւնը, գիտակցութիւնը, ողջախոհութիւնը: Առանց կորովի եւ քաջասիրտ վճռականութեան՝ անյապաղ առնելու այն պարտադիր քայլերը որոնք, թերեւս, կարենային կասեցնել կործանարար այս խօլ ընթացքը:

.1.

Այն օրէն ի վեր երբ մարդ էակին մօտ մտածելու կարողութիւնը դադարեցաւ գուտ կրաւորական ներհայեցողութիւն ըլլալէ ու դարձաւ իր շրջապատը վերափոխող ներգործ ուժ, մարդը ինք եղաւ իր անհատական ու հաւաքական ճակատագրի պատասխանատուն: Կարելի է բազմաթիւ ու բազմապիսի արտաքին ազդակներ ու պատճառներ վկայակոչել իր ձախողութիւնները չքմեղելու կամ իր պատասխանատուութիւնը նուազեցնել փորձելու համար: Իրենց հասկնալի ու տրամաբանական բոլոր բացատրութիւններով հանդերձ, սակայն, նման փորձերը նուազագոյն չափով իսկ պիտի չբարելաւեն իր վիճակը: Ան իր ձախողութեան հետեւանքները պիտի կրէ՝ նոյնիսկ եթէ հարիւրներով իրական պատճառներ ու մտացածին պատճառաբանութիւններ ցանկագրէ անոնց որպէս արդարացում: Այդպիսի պատճառաբանական մտային մարզանքը օգուտ կ'ունենայ սպազայի հաշտոյն միայն – եթէ, անշուշտ, ան մտային պայծառուտեութիւնն ունենայ անհրաժեշտ դրական դասերը հետեւեցնելու իր անցեալի ձախող փորձերէն:

Հայկական լեռնաշխարհի մեր չարքաշ ու յամառ նախահայրերը չկրցան ստեղծել ու պահպանել կեդրոնացեալ հօր, միաձոյլ պետութիւն մը: Մեծ ու փոքր լեռնաշղթաներով սահմանազատուած, անոնք անջատ աւատապետութիւններ էին – հարկահաւաքներն իրենց ճորտերուն եւ, իրենց կարգին, հարկատուները շրջանի գլխաւոր աւատապետին (իշխան, թագաւոր) կամ ներխուժող օտար գերիշխաններուն: Լեռնային տարանջատումը, բնականաբար, զանոնք առաւել եւս խոցելի կը դարձնէր արտաքին թշնամիներու եւ կիսավայրենի հորդաներու անվերջ արշաւանքներուն:

Այլ երկիրներու իր բախտակից ճորտերուն նման, հայ ճորտը եւս ո՛չ ուժը պիտի ունենար եւ ո՛չ բաւարար շարժառիթը՝ լաւագոյնս պաշտպանելու համար հողատարածք մը որուն տէրը եւ որմէ օգտուողը զինք չարաչար շահագործող աւատապետն էր գլխաւորաբար, եւ որուն կերակրատաշտէն լիովին կ'օգտուէին նաեւ իրեն անմիջականօրէն ծառայող գորական ու կղերական առաջնորդները: Պատմականօրէն անհիմն են մեզի հասած ժամանակագրութիւններու այն վարդապոյն պատկերացումները որոնք գրուած են՝ այդ օրերու հայ «բարեպաշտ ու զթասիրտ» աւատապետներուն ծառայող վարձկաններու կողմէ – յարգելի բացառութիւններով անշուշտ: Մեր աշխատասէր ու համբերատար նախահայրերուն կեանքը դժնդակ գողգոթա մը եղած է՝ ներքին եւ

արտաքին հարստահարիչներու ծանր լուծին տակ: Ասոր համոզուելու համար բնաւ պէտք չկայ մեր պատմութեան անցեալի հին էջերը քրքրելու: Կը բաւէ արագ աչք մը նետել մերօրեայ քոչարեանական «ազատ, անկախ» Հայաստանի աւագակապետութեան եւ անոր գազանացած հարստապետերու անողորք շահագործման լուծին տակ տնքացող մեր քոչրերու եւ եղբայրներու ստրկական անտանելի վիճակին: Ներկայ իրադրութենէն մեկնելով, աւելի դրական վիճակ մը կարելի է մտապատկերել պատմական անցեալի մեր ժողովուրդին ապրած դժնդակ կեանքին առնչութեամբ: Իր լայն գիծերուն մէջ, հայկական լեռնաշխարհի ահա այսպիսի անբաղձալի վիճակին տրամաբանական շարունակութիւնն է հայ ժողովուրդի ներկայ ճգնաժամային իրադրութիւնը՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ հաւասարապէս:

.2.

Մեր պատմութեան հազարամեակներ տեւող ներքին եւ արտաքին կեղեքիչներու պարտադրած ստրկութենէն ետք, եւ Սովետ Միութեան կիրարկած կեղծ-ընկերվարական հասարակարգի փլուզումին հետեւանքով, մէկ օրէն միւսը անկախացաւ Հայաստան՝ առանց որեւէ պայքարի: Ատրպէյճանի դէմ զինեալ կռիւներով իր անկախութեան տիրացաւ Արցախը եւս: Սակայն շուտով ի յայտ եկաւ թէ հին անիծեալ ստրկութիւնը պարզապէս նոր պատմութեան հազարամեակի հայաստանի եւ Արցախի մէջ: Ազատ շուկայական կոչուած

անտառային, հակաժողովրդական ու հակաժողովրդավարական համակարգը երկրին բախտը առանց պայմանի յանձնեց հասարակութեան ամենէն կարճամիտ, անխիղճ եւ ազահ աւագակախումբին: Անյապաղ թալանի ենթարկուեցան՝ ամբողջ ժողովուրդին պատկանող եւ իր արցունքով, քրտինքով եւ արիւնով գոյութիւն առած այն նիւթական բարիքները որոնք կերտուած էին սովետական իշխանութեան եօթնասուսն գրկանքի տարիներուն:

Այսպէս՝ հիմնուեցաւ Հայաստանի ազատ, անկախ, «ազատ շուկայական» աւագակապետութիւնը՝ աշխարհի ամենէն զիջատիչ տեսակի սանձարձակ դրամատիրական երկիրներու «բարի» օրինակով՝ առ ի հակադրութիւն սովետական ձախողած իրաւակարգին: Սովետական նախկին պետական դրամատիրութիւնը վարկաբեկող ժողովրդային ընդվզումը հասկնալի եւ արդարացի է ինքնին: Սակայն անհասկնալի եւ անարդարանալի է այն ծուռ, հապէս մոլորեալ «տրամաբանութիւնը» որով «ազատ շուկայական» այս արտառուցութիւնը ժողովուրդին ներկայացուեցաւ որպէս սովետականը փոխարինելու ատակ կարելի միակ այլընտրանքը, որպէս ամենէն արդիական ու յառաջադէմ համակարգը որ պիտի գար իբր թէ լուծելու տնտեսական-քաղաքական-ընկերային բոլոր խնդիրները եւ դրախտի վերածելու երկիրը – ինչպէս լեզուական նմանօրինակ գունազեղ բաց խաբուսիկ ծրարումով հին ատեն պարզ ժողովուրդին ծախած էին «երկնային» արքայութիւնը ու դեռ երէկ՝ «կոմունիստական» դրախտը: Ու ժողովուրդը այս անգամ ալ

Շաբ.ը էջ 8

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**



**ՍԱՀԱՐԱ ԶԱՇԱՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ**

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՈՎ

## Շարունակում է 7-էն

ուզեց հաւատք ընծայել այս թափանցիկ կեղծիքին ու գայն ընդունիլ որպէս իր փրկութեան լաստը: Ժողովուրդին չտրուեցաւ, սակայն, ճշմարիտ այլ ուղիներ կամ իր շահերուն աւելի համապատասխան այլ համակարգեր որոնելու առիթն ու ժամանակը: Յափշտակողական փութկոտութեամբ շուտով կողոպտուեցան եւ ընչազրկուեցան երկրին բոլոր պարկեշտ քաղաքացիները, մինչ վարպետորդի ածպարարի արագաշարժութեամբ միլիոնատէրեր – ու քաղաքական անձնաւորութիւններ – դարձան երէկուայ անողնահար պատեհապաշտները, երբեմն նոյնիսկ փողոցի կարգ մը անճոռնի ստահակները, որոնք իրենց մակաբուծութեամբ արժանի էին հասարակութեան արտաքսուելու միայն:

Եւ ինչպէս ստրկատիրական, աւատապետական, սեչնուք-թաթարմոնկոյական, օսմանեան-թրքական եւ ապա սովետական ժամանակներուն, նոր աւագակապետութեան այս նորագոյն լուծին տակ եւս ժողովուրդը պահեց – ու մինչեւ այսօր դեռ կը պահէ – իր լուծիւնը, կրակորական սպասողականութիւնը, դիմադրութենէ խուսափումը: Վախը:

Քոչարեանական քաղցկեղանման ամենակուլ համակարգը, Անդրանիկ Մարգարեանի եւ ապա Սերժ Սարգսեանի անմիջական գործակցութեամբ ու կարգ մը երկրորդական ուղեկիցներու գործօն մեղսակցութեամբ, համարեա կազմալուծեց ճշմարիտ ընդդիմութիւնը, կամազրկեց դատարանները, անհեթեթ բայց ոճրահոտ թատրոնի վերածեց խորհրդարանը (Ազգային ժողովը), կտրեց զանգուածային անկախ լրատուութեան միջոցներու թելերը: Ծաղր ու ծանակի առարկայ դարձուց ժողովրդավարութիւնը:

Մրցանիչ կտրող ամենակարճ ժամանակի մէջ Հայաստան եղաւ երկիր դրախտավայր – բայց ո՛չ տքնող եւ արեւի տակ իր տեղը որոնող պարկեշտ ժողովուրդին համար, այլ հազիւ ափ մը գողերու, մարդասպաններու, ոճրագործներու, եւ անոնց ծառայող խուժանին համար: Այս վերջինները իրենց իշխանութեան ենթարկեցին ամբողջ երկիրը, «մաքրագործեցին» ժողովուրդին բարօրութեան եւ արժանապատուութեան հետամուտ բոլոր առողջ տարրերը եւ հիմնեցին իրենց աւագակային հարստապետութիւնը գոր անպատկարօրէն անուանեցին Հայաստանի Հանրապետութիւն: Այս համակարգին մէջ տեղ չկար ճշմարիտ ժողովրդավարութեան համար ուր ներդաշնակ կիրարկուեց զիրար ամբողջացնելին տնտեսական եռուն բայց ոչ անիշխանական գործունէութիւնը (եղեմտական, արդիւնաբերական, առեւտրական, զբօսաշրջական եւ բոլոր յարակից այլ բնագաւառներով), քաղաքական ազատութիւնը իր բոլոր երեսներով (օրէնսդիր, գործադիր ու դատական), զանգուածային լրատուութեան միջոցներու ազատութիւնը, ընկերային արդարութեան կարելի գերագոյն մակարդակի ապահովման ձգտումը, եւ երկրին ու ժողովուրդի յարաձուռն վերելքին ստատորոգ բազմապիսի այլ գործունէութիւններու քաջալերանքը:

Իրենց ոճրային մենատիրու-

թիւնը հաստատելու համար, քոչարեանական իշխանութեան ներկայացուցիչները գրաւեցին երկրի տնտեսական ու քաղաքական բոլոր լծակներն ու ոլորտները, օր ցերեկով սպաննեցին իրենց միահեծան իշխանութիւնը հարցադրող քաղաքագէտները եւ պարտադրեցին իրենց անառարկելի «հեղինակութիւնը»:

.3.

Նախ, տնտեսական բնագաւառին մէջ, անկախ Հայաստանի ազգային արդիւնաբերութիւնը մինչեւ այսօր ըստ էութեան չէ մեկնարկուած տակաւին: Մեծ մասամբ երեսի վրայ ձգուած են ու չեն



արտահանուիր ընդերքի բնական հարստութիւնները – մասնակի բացառութիւններով միայն: Տեղական գետնի վրայ, նոյնպէս, միայն կարգ մը երկրագործական արտադրութիւններ դեռ կը քաշուին շատ նախնական վիճակով՝ գիւղական շրջաններու մէջ:

Արտասահմանէն ուղարկուող գումարները կարելոր մէկ մասը կը կազմեն Հայաստանի եկամուտին: Արդիւնաբերութեան գրեթէ չգոյութեան ներկայ պայմաններուն տակ, միայն զբօսաշրջութիւնն է որ յաւելեալ որոշ նկատառելի եկամուտ կ'ապահովէ երկրին: Տարադրամի յարատեւ արժեզրկումը եւ տեղական դրամի արուեստական «արժեւորումը», սակայն, ժողովուրդին համար մօտաւորապէս կիսով կը նուազեցնէ դուրսէն եկող այդ գումարներուն փոխանակման արժէքը, մինչ միւս կէսը, ոճրային ուղեւորումով, ի վերջոյ կը մտնէ երկրի ափ մը աւագակապետութեան գրպանը: Միւս կողմէ, դրամի չնախարհիկ «արժեւորման» հետեւանքով աժանալու տեղ, ընդհակառակը բազմապատիկ արագութեամբ կը սղին ներածուող ապրանքներու գիները որոնց հասոյթները եւս կը բռնեն աւագակային գրպաններու ճամբան:

Երկրորդ՝ ներքին քաղաքականութեան ներկայ ապառողջ վիճակը անընդունելի է ժողովուրդին համար: «Ազատ շուկայական» խաբուսիկ պիտակին տակ, ժողովուրդին անխնայ շահագործումը ընկերային հեղձուցիչ փակ դաշտի կամ արդի Արշակաւանի մը վերածած է անկախ Հայաստանը ուր սակաւաթիւ աւագակախումը մը սանձարձակ ազատութեամբ կը կողոպտէ երկրին իսկական տէրերը՝ ժողովուրդը: Այս անկուշտ խմբակը իր թալանած ժողովուրդին չի հանդուրժեր ապրուստի նոյնիսկ նուազագոյն տանելի պայմանները՝ ընկերային արդարութեան ազատա-

կան-դրամատիրական ընդունուած չափանիշերով: Նման տմարդի համակարգը կարելի չէ ընդունիլ որպէս ճակատագրի շղթայ մը որ միանգամընդմիջտ ու վերջնականօրէն անցուած ըլլայ հայ ժողովուրդին վիզը՝ չափի ու կշիռի ամէն զգացում կորսնցուցած հայանուն կեղեքիչներու կողմէ:

Երրորդ՝ տարածաշրջանի արտաքին քաղաքականութեան բնագաւառին մէջ, քաղաքական զգալի յաջողութիւններ կ'արձանագրեն Հայաստանի սահմանակից թշնամիները: Վերջին տարիներուն, քարիւղի զանգուածային արտահանումը դարձած է Ատրպէյճանի

պէս աւելցուցած են իրենց արդիւնաբերական-ուազմական օժանդակութիւնը եւ քաղաքական-դիւանագիտական գործակցութիւնը Ատրպէյճանի հետ: Այս աջակցութիւնը առաւել եւս ընդլայնուած է՝ Ռուսիան ուազմականօրէն օղակելու ամերիկեան հանրայայտ ծրագրին մէջ Ատրպէյճանի ստանձնած յառաջապահ դերին պատճառով՝ Թուրքիոյ եւ Վրաստանի առընթեր:

Ասոր դիմաց, Հայաստանի ունեցած արտաքին միակ նեցուկը Սփիւռքն է իր խայտաբղէտ քաղկացուցիչներով, օժանդակութիւններով ու խնդիրներով: Սակայն անսպառ չեն Սփիւռքի միջոցները – եւ համբերութիւնը: Առանց չաքարապատելու պէտք է ըսուի թէ Հայաստանի կառավարութեան ներկայ վարչակազմը չարաչար կը գործածէ սփիւռքահայութեան եւ բարի կամեցողութիւնը, եւ համբերութիւնը, եւ ինչպիսիք անձնագոհութեամբ հաւաքուած օգնութիւնները – առանց պայմանի հայրենասիրութիւնը: Սփիւռքահայութեան կողմէ իրենց հայրենի եղբայրներուն ու քոյրերուն համար ուղարկուած դրամական օգնութեան փոխանցումները կարելոր մասամբ ապօրինաբար կ'իւրացուին ափ մը անպարկեշտ քաղաքական դեկավարներու կողմէ՝ կա'մ ուղղակիօրէն, կա'մ ալ տարադրամի արուեստական-պայմանագրական անհամոզիչ արժեզրկումով: Եւ այդ դեկավարներու կողմէ ոչ մէկ ճիգ՝ սփիւռքահայութեան վերապահութիւններն ու կասկածները փարատելու համար:

\*\*\*

Ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ, կենաց եւ մահու մարտահրաւէրներ ծառայած

Շարք էջ 9

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



ՐԱՅԱՍՏԱՆ - 2007

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՈՎ

Շարունակում էք 8-էն

են Հայաստանի ժողովուրդին ու պետութեան առջեւ հաւասարապէս:

Անկախութիւնը պահպանելու համար նախապայման է անկախ մտածողութեան հետամուտ ժողովուրդ մը որուն անդամները համարձակօրէն կը գործեն նախաձեռնութեան ինքնավստահ ոգիով ու քաղաքացիական պատասխանատուութեան անտեղիտալի գիտակցութեամբ - բայց կը գործեն ու կրաւորական շարժումներով անշարժ դիրքերու վրայ սպասողական վիճակի մէջ չեն մնար մինչեւ երկրին կործանումը: Հայաստանի մէջ ըլլալ թէ աշխարհի որեւէ այլ տեղ, երկրին գերագոյն հարստութիւնը եւ ժողովուրդավարութեան լաւագոյն երաշխիքը իր գիտակից ժողովուրդն է գոր կարելի չէ խաբել անիմաստ գունազարդումով կամ կուրցնել շլացուցիչ ակնափոշիով: Աչալուրջ, բազմատեղեակ եւ արթնամիտ ժողովուրդ մը որ պատրաստ է տէր կանգնելու իր արդար իրաւունքներուն, որ գիտէ անյապաղ կարգի բերել այդ իրաւունքներն անտեսող կամ արհամարհող քաղաքական պատասխանատուները: Կարճ՝ ժողովուրդի գերագոյն շահերուն գերագոյն պահպանը նոյնինքն ժողովուրդն է:

Ասոր կը հետեւին՝ իշխանութենէն բոլորովին անկախ զանգուածային լրատուութեան միջոցները (մամուլ, ռատիօ, հեռուստացոյց, համացանց, եւ այլն) որ արտայայտեն ժողովուրդի մեծամասնութեան ե՛ւ փոքրամասնութեան ազատ կամքը - բան մը որուն չափացոյցերէն ողբալիօրէն հեռու է Հայաստանի ներկայ դրութիւնը:

Կարելի չէ աչք գոցել Հայաստանի մէջ ներկայիս տիրող ծայրայեղ չքաւորութեան, գոր իշխանութիւնները կը փորձեն ծածկել՝ մակաբոյժ նոր վերնախաւին համար երեւանի կեդրոնը ցուցադրականօրէն սարքուած գուարճավայրերու եւ ճոխութեան շլացուցիչ կղզեակներով: Այս չքաւորութեան տնտեսական-քաղաքական պատճառներուն տակ կ'իջնան՝ ազգային արդիւնաբերութեան համարեա բացակայութիւնը, ներածման մենաշնորհներու կողմէ հայրենի բնակչութեան անխնայ շահատակումը, ապրուստի անկարելիութեան պատճառով եւ իր հետեւանքներով փաստօրէն ցեղասպանութեան համագոր զանգուածային արտագաղթը, իշխանութեան կողմէ ընդհանրացած եւ ոճրայինի հասնող օրինախախտումները, վերէն վար իշխանութեան բոլոր ճիւղերու (օրէնսդիր, գործադիր եւ իրաւադատական) նոյնացումը աւագակային-ոճրային մափիային հետ: Եթէ չդարմանուի անյապաղ, նման անյուսալի իրավիճակը կրնայ ուշ կամ կանուխ յանգիլ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան անկումին: Հակառակ ներկայ իշխանութեան կողմէ անխուսափելիօրէն ըլլալիք բոլոր ճնշումներուն եւ ընտրակեղծիքներուն, այս առնչութեամբ ճակատագրական կարե-

ւորութիւն ունին 2008-ի Փետրուարի նախագահական ընտրութիւնները: Հասկնալիօրէն, բաւական ուշացաւ ու դեռ ամբողջական չէ ընդդիմադիր համախմբումը: Ամէն պարագայի, սակայն, բարելւման նոր կարելիութիւններու դուռ պիտի բանար այդ ընտրութիւններուն ընդդիմադիր ժողովրդավար ուժերու յաղթանակը ներկայ աւագակապետական համակարգին դէմ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի նախագահական թեկնածութեամբ - պայմանաւ, միշտ, որ ժողովուրդը իր իրաւունքներուն գերագոյն որոշիչը եւ արթուն իրաւարարը մնայ ընտրութիւններէ առաջ ե՛ւ ետք:

Արտաքին քաղաքականութեան բարեփոխութիւնը տրամաբանօրէն կը հետեւի ներքին քաղաքականութեան: Իր ժողովուրդի բարօրութեան նախանձախնդիր իշխանութիւն մը անպայման դրական, արդիւնաւէտ ճիշդ պիտի գործադրէր՝ իր դրացի երկիրներուն հետ յարաբերութիւնները կարելի եղածին չափ բնականոնացնելու համար: Միջազգային-տարածաշրջանային քաղաքականութեան մէջ ամենահեշտ բանն է դրացի երկիրներու դէմ հռետորական մեծխօսիկութիւններով եւ ամբոխավարութեամբ պղպշակային ժողովրդականութիւն շահիլ եւ քչիկ մը աւելի երկար բազմած մնալ իշխանութեան աթոռներուն վրայ: Սակայն աղիտաբեր կրնայ ըլլալ նման անպատասխանատու գործելակերպը - Հայաստանի պարագային ծայր աստիճան կործանարար՝ երկրի ապագային եւ ժողովուրդի գոյատեւման համար: Սուղ ժամանակի վտանգաւոր վատնում է արտաքին քաղաքականութիւն մը որ կը մերժէ տեսնել միջոցներու եւ ուժերու իրական պատկերը, որ կը շարունակէ տոն-քիշոթեան յամառութեամբ - ու չիմարութեամբ հաւանաբար - անվերջ գրոհել հողմաղացներու դէմ: Իր բոլոր դժուարութիւններով ու յարաբերաբար դժուարամարս կողմերով հանդերձ, միայն փոխադարձ համաձայնութեամբ ամրագրուած տարածաշրջանային միջպետական յարաբերութիւններն են որ կարելիութիւններ կը ստեղծեն խաղաղ ու բարօր պայմաններ ընձեռելու Հայաստանի բնակչութեան:

Վերջին չիշեցում մը եւս: Դրացի երկիրներու հետ գալիք կարելի - յուսանք ո՛չ հաւանական - բախումի մը պարագային դժբախտաբար Հայաստանի եւ Արցախի ի նպաստ չէ որ կ'աշխատի ներկայ ժամանակը: Արցախեան ազատամարտի յաղթական օրերէն ետք շատ ջուր հոսած է կամուրջին տակէն: Հետեւաբար, պահ մը մոռնալով մեր փքուն ու կարճատես մեծխօսիկութիւնը, ժամանակն է վերջ տալու մեր ցերեկնային երազատեսութեան: Նոր հակամարտութեան մը պարագային կարելի չէ նախատեսել թէ անպայման պիտի կրկնուի արցախեան փառապանծ յաղթանակի աննախընթաց հրաշքը: Մեր զգաստ ողջախոհութիւնը պիտի հանդիսանար այսօրուա՛յ հրաշքը:

ՍԻՐԵԼԻ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԻ ԱՐՄԵՆ ՏԱՏՈՐ

Մանուկ հասակէս ամէն Ամանորի կը գրեմ քեզի, կը յայտնեմ հրճուանքս ու կը ներկայացնեմ խնդրանքս:

Ու միշտ ալ սիրած ձեռովդ կամ եղանակովդ ձայն կու տաս ինձի՝ բարի, ազնիւ: Թէեւ մանկութիւնը տասնամեակներ առաջ ձգեմ եմ ետեւ, մանուկը միշտ ալ ներկայ է հոգիիս մէջ, աղուոր յոյսերով կը լեցնէ հոգիս ու կը մղէր իմաստաւորեմ կեանքս, լաւագոյն ձեռով:

Բարիքը որ կը փնտռենք այսօր՝ քու օգնութեամբ պիտի յաջողինք ունենալ, իբր թանկագին նուէր խաղաղութիւն մեծին ու պզտիկին, ունեւորին ու աղքատին, անգամ հոգիով աղքատին որ էն խղճալին է աշխարհի վրայ:

Մանուկ մարդկութիւնը խաղալիք նուէրի չի կարօտիր այնքան որքան կը ճգնի հասնիլ կատարեալ ու շքեղ նուաճումներու՝ գիտական, ընկերային, անգամ հոգեւոր որդորտներու մէջ:

Կաղան Պապի,

Կը հաւատամ հրաշագործ ուժիդ ու կարեկցող սիրտիդ որ կարելի կը դարձնեն անկարելի:

Գուցէ երբ ըլլանք միասիրտ, հոգիով ալ, կը փրկուինք ազգովին ու վառ կը պահենք մեր յոյսերը՝ որ մարմին առնեն ու դադրինք երագելէ...:

Սիրելի Կաղան Պապի, կը կարօտինք քու հրաշագործութեանդ, հասնելու մեր երագին որ ամբողջ դառնայ Հայաստանը, Մասիս մեր սարով, Վանայ Լիճով, ամէն ամէն սրբավայրերով որ լեցուին ժողովուրդով՝ ազատագրուած աստանդական կեանքէն:

Կը համբուրեմ քեզ կարօտալի սիրով:

ԶՍԵՌ ՊԱՊԻՒՍ ՄԱՂԹԱՆԲԸ ԱՐՄԵՆՈՒՅԻ ԲՈՅԱՄԵԱՆ

Աշխարհի բոլոր բարիքները ձեզ իմ շատ սիրելի անուշ բալիկներ, Եկել եմ հեռու, շատ հեռուներից Ձիւնոտ, փոթորկոտ խեցնթ ճամբաներից, Որպէսզի բերեմ ես ձեզ անհամար Շատ խաղալիքներ եւ գրքեր առատ:

Իսկ ես գալիս եմ անգին բալիկներ Միայն եւ միայն այն բանի համար, Որ լինէք բարի բոլորի համար, Լինէք երջանիկ, ժիր ու խելացի եւ ձեր մշտարթուն հոգով սիրելի Ձեր մացնէք սիրտը ձեր ծնողների:

Երբ քաղաք, փողոց, անտառ ու ձորակ Ծածկուեն սպիտակ ձիւնէ ծածկոցով, Ժիր կատակներով, Ժպտուն դէմքերով Յրտից կարմրած կարմիր այտերով, Թաւալուէք փափուկ ձիւներում առատ Ձեր երագների հեքիաթում չքնաղ:

Ես ձեզ այսուհետ էլ չեմ մոռնայ Ձեր նուէրները դուք միշտ կը ստանաք, Երբ խաղիցոյցանով ազդեղախտուն Ձեր շողշողացող սիրուն աչքերով Կը տեսնենք այնտեղ մէկ ուրիշ հրաշք՝ Ձու գուած, զարդարուած մի մեծ տօնածառ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱԿՈՒ ԵՒ ԱՏՐԻՆԷ ԱՃԷՄԵԱՆ

ԱՇԽԱՐԿ - 2007

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 2007 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Տարի մըն է որ պատմութեան կ'անցնի: Ինչ յոյսերով եւ ակնկալութիւններով սկսուած, եւ սակայն ինչ յուսահատութիւններով է որ 2007 թուականն ալ փոխանցուի պատմութեան: Երանի այդ փոխանցումը ըլլար առանց հետք ձգելու, այսինքն սկսող Նոր Տարին, 2008 թուականը, սկսել մաքուր, սրբուած, մաքրուած քարէ տախտակի մը նման: Այս մէկը սակայն կարելի չէ եւ ուրեմն, 2008 թուականին կը փոխանցուին նախորդ տարուայ գրեթէ բոլոր իրադարձութիւնները, մանաւանդ անոնք որ երկարաձգուող հանգամանք որ երկարաձգուող հանգամանք ունին, արդէն իսկ սկսուած եւ տակաւին շարունակուող փոքր թէ մեծ պատերազմներու նման: Այս իմաստով, սկսող Նոր տարին դժուար թէ «կոչ» նկատուի, այսինքն «մաքուր» իր բովանդակութեամբ, այնքան որ բաներ կան իրեն փոխանցուող:

Ամէն պարագայի տակ, 2008 թուականին անցնելէ առաջ, հետաքրքրական պիտի ըլլայ աչքէ անցնել, թէեւ պարտադրաբար թուուցիկ, 2007 թուականին տեղի ունեցած դէպքերն ու անցուղարձները, ոչ թէ անպայման զանոնք վերջիչելու, այլ անոնց վրայ կարգ մը նկատումներ ընելու համար:

Այս ընելու համար, օգտակար կը նկատեմ որոշ դասաւորումներ ընել, որպէսզի ընթացողը կարենայ կողմնորոշուիլ, եւ երեւոյթները զետեղել իրենց պատկանած շրջագիծերէն ներս:

Ուրեմն կը սկսիմ մեր գտնուած եւ ապրած երկրով, որ կը ներկայացուի իբրեւ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՄԵՐ

Աշխարհի հզօրագոյն երկիրը նկատուող այս մեծ հանրապետութիւնը ներկայիս ենթակայ է թէ ներքին եւ թէ արտաքին դժուարութեանց, այնքան մը որ իր ունեցած համաշխարհային ազդեցութիւնը երթալով կը տկարանայ եւ այլ նոր, եւ աւելի փառասէր պետութիւններ կը սպառնան իրեն: Ի մտի ունինք յատկապէս Չինաստանն ու Հնդկաստանը, որոնք շատ հաւանաբար գալիք տասնամեակներուն, ղեկավար դիրքեր գրաւեն միջազգային գետնի վրայ: Եթէ այս երկուքին վրայ աւելցնենք փութիւնի Ռուսաստանը, եւ Եւրոպական Միութիւնը, յատկապէս կը դառնայ թէ ինչպէս Ամերիկան շատ հաւանաբար կորսնցնէ ցարդ ունեցած եւ վայելած դիրքը, թէ իր տնտեսական, մանաւանդ տոլարի որոշ արժեզրկումի եւ թէ իր գինուորա-քաղաքական ազդեցութեան նուազումի պատճառաւ: Ներկայիս, խիստ ակնեղէ է որ Ամերիկայի ազդեցութիւնը ՄԱԿ-էն ներս որոշապէս թուլցած է, եւ իր հետապնդած նպատակներուն համար, օրինակ, Հիւսիսային Քորէայի կամ Իրանի պարագաներուն, Ամերիկան անկարող է իր տեսակէտը ոչ միայն պարտադրել, այլ նոյնիսկ ընդունելի դարձնել:

Ամերիկայի ազդեցութեան նուազումի պատճառներէն մէկն ալ տոլարի արժեզրկումն է միջազգային շուկաներէն ներս: Նախատեսութիւններ կան որ տոլարը շարունակէ պահել իր ներկայի արժեզրկուած վիճակը եւրոպական դրամի, ճափոնական ենի (yen) եւ

այլ դրամանիշերու հետ բաղդատած, եւ վախ չկայ նոր ցնցումներու, մանաւանդ այս տօնական օրերուն: Տոլարի սոյն արժեզրկումը հասկնալիօրէն, արդիւնք է երկրի տնտեսութեան տկար վիճակին, յատկապէս ներքին քաղաքական անկայունութեան եւ արտաքին, մղուող իրաքեան եւ աֆղանիստանեան պատերազմներու պատճառաւ: Ոչ միայն ամերիկեան, այլ համաշխարհային տնտեսութիւնը ներկայիս կը տառապին ֆոնտային յատկացումներու պակասէն, այնպէս որ անհաստատ կողմէ տեղի ունեցող ներդրումները իրենք եւս կը տուժեն: Դրամական այլ միաւորներ, ինչպիսիք են աստրալիական, գանատական, անգլիական, նոյնիսկ հայաստանեան, պիտի վերարժեւորուեն եւս ինքնուրու, ոմանք նոյնիսկ քաղաքական շարաշահումներու, ինչպէս Հայաստանի պարագային: Միջազգային շուկան դեռ երկարատեւ պիտի մնայ անկայունութեան միջնորդի մէջ, այնքան ատեն որ Ամերիկայի կացութիւնը կը մնայ, չեղչեղուկ եւ պղտոր: «Wall Street»-ի յարաբերաբար ճախող «քոնթրոլ»-ը իր վատ ազդեցութիւնները պիտի ունենար միջազգային շուկաներու վրայ: Իսկ եթէ, ինչպէս ոմանք կը նախատեսեն, ամերիկեան տնտեսութիւնը անցնի անկումի (recession), քիչ մը ամէն մարդ, անհատ թէ ընկերութիւններ - դրամատուներ - մեծապէս պիտի տուժեն:

Ամերիկայի ներքին ճակատի բազմաթիւ լուրջ տկարութիւններէն կարելի է նշել գաղթականութեան ցարդ չլուծուած հարցը (immigration) երկրի քաղաքական բեւեռացումի մտահոգիչ պարագան, հանրապետականներու եւ տեմոքրատներու միջեւ, որ անկարելի կը դարձնէ երկրէն ներս համաձայնական (compromise) լուծումներ գտնելը, տնային քաղաքականութեան ճախողութիւնը, որ կը յանգի սնանկացման (foreclosures), երկրէն ներս ապօրէն գտնուողներու եւ անոնց գործ հայթայթելու դժուարութիւնները (illegal aliens), եւ եթէ ասոնց վրայ աւելցուցին իրաքեան եւ աֆղանիստանեան պատերազմներու պատճառած մարդկային, տնտեսական եւ քաղաքական դժուարութիւնները, կարող ենք պատկերացնել այս մեծ երկրի դժուարութեան տարողութիւնն ու ազդեցութիւնը, թէ ներքին թէ արտաքին ճակատներէն ներս: Ամերիկայի բազմաթիւ դժուարութիւններէն մասնաւորաբար մէկը մեզի կը հետաքրքրէ Լիբանանի պարագան է, երկրի մը որուն անցնող երեք տասնամեակներու ցնցումները կարծես չէին բաւեր, ներկայիս ան միւրճուած է քաղաքական այնպիսի անել կացութեան մը մէջ, որուն ճակատագիրը կը մնայ անձանօթ եւ լուծումն ալ անգտանելի: Քաղաքական լուրջ բեւեռացում մըն լա Լիբանանի մէջ գոյութիւն ունի, մէկ կողմէ փրօ-Սուրիա եւ փրօ Իրան հոսանքներու ղեկավարութեամբ «Հըզպալլա» կրօնա-քաղաքական միաւորին, եւ միւս կողմէ «Մարտ 14» ճանչցուած հակաուրիական ճակատին, որոնք կառչած կը մնան Լիբանանի անկախութեան եւ գերիշխանութեան: Ամերիկայի Պուշի իշխանութեան եւ Սուրիոյ Պաշար Ասատի իշխանութեան միջեւ կատաղի մրցակցութիւն մը հաստատուած է Լիբանանի ճակատագրի վերաբերեալ,

որուն արդիւնքէն կը թուի կախեալ ըլլալ Միջին Արեւելեան խաղաղութեան մը հաստատումը:

Լիբանանի նախագահական ընտրութեան մը անկարելիութիւնը քաղաքական լուրջ պարագայ մը կը ստեղծէ, որուն շարունակման պարագային, կարելի կը դարձնէ քաղաքացիական լուրջ տագնապ, երկրի բաժանումին առաջնորդող: Դժուար

նենայ Ամերիկա-Սուրիա փոխ-չարաբերութեանց վրայ, մինչ մէկ կողմէ Սուրիայէն կ'ակնկալուի Ամերիկայի օգնել իրաքէն ներս ահաբեկչութիւնը նուազեցնելու համար, եւ միւս կողմէ Սուրիոյ ունեցած ազդեցութիւնը իրանի վրայ, նոյն մտահոգութիւններով: Վերջին ամիսներու իրաքեան չարաբերական նուազումը ահաբեկչական



ընտրութիւնները միայն նախագահի մը ընտրութիւնը չէ, այլ շատ աւելի անդին կ'երթան, նոր կառավարութեան մը կազմութեան, բանակի ղեկավարութեան, երկրի տնտեսական կառուցներու, ինչպէս նաեւ կրօնական բաժանումներու գծով: Ուալիտ ձուձուլաթ մը կը յայտարարէր թէ «կարելի է 2008ը անցնել առանց նախագահի եւ սակայն դժուար թէ կառավարութիւն մը գոյութիւն ունենայ առանց նախագահի»:

գործողութեանց կը վերագրուի սուրիական միջամտութեան: Նաեւ կ'ակնկալուի որ սուրիական դիրքի մեղմացումը կրնայ նպաստաւոր արդիւնքներու հասնիլ, ոչ միայն իրաքի, այլ Պաղեստին, Իսրայէլ եւ այլ ճակատներու վրայ:

Քիչ մը բոլոր կողմերէն, ոչ միայն Ամերիկա, այլ նոյնիսկ Ֆրանսա կը միջամտեն Սուրիոյ վրայ Լիբանանի տագնապին լուծում մը գտնելու համար: Ներքին գետնի վրայ, քաղաքական սպանութիւն-

Շաքը էջ 11

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**


**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՌՈԶԻԿ ՏԵՐ ԴԱՒԻԹԵԱՆ**

ԱՃԽԱՐԸ - 2007

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 2007 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 10-էն

ները կը շարունակուին, վերջինը Զօր. Ֆրանսուա Հաժի, որ կը նկատուէր հաւանական ղեկավարը Լիբանանեան բանակի, այն պարագային երբ Զօր. Միշել Սուլէյման ընտրուէր երկրի նախագահը: Զօր. Հաժ կը նկատուէր սուրիական շահեռու դէմ ղեկավար մը: Անդին, տակաւին կայ Ռաֆիք Հարիրիի սպաննութեան չլուծուած հարցը, որ ՄԱԿ-ի քննիչ յանձնարուածքի եզրակացութիւններուն գործադրութեան կը սպասէ: Եզրակացութիւնը այն է որ Ամերիկա-Սուրիա տարակարծութիւնը կը վնասէ արաբ-պաղեստինեան-իսրայէլեան հարցի հաւանական լուծման, մինչ Լիբանան կ'ապրի իր ողբերգութիւնը:



րու, Իսրայէլի ապահովութեան, Իրանի վրայ հսկելու բարդ տրամադրութեանց: Ներկայիս Ամերիկա, իր 160 հազար բանակով, կը տապալակի իրաքեան աւազներուն մէջ եւ կը մնայ անորոշ: Նոյն այս պատերազմի պատճառաւ ալ, այս մեծ երկրի ներքին քաղաքական կեանքը կը մնայ բեւեռացած եւ տազնապալի: Այս պայմաններու տակ, արդէն շրջանէ մը ի վեր սկսած են եւ տենդազին կը շարունակուին նախագահական ընտրութեան մը աշխատանքները: Հրապարակ ելած են տեմոքրատ կուսակցութենէն, նախկին նախագահ Պիլ Քլինթընի կինը, Հիլըրին, երիտասարդ ծերակուտական Պարաթ Օպաման եւ ձոն էտուըրզ, որ 2004 թուին, թեկնածու էր փոխնախագահի պաշտօնին: Մօտ օրե-

են այս ընտրութիւնները: Մինչեւ Նոյեմբեր 2008 տակաւին երկար ժամանակ կայ, կացութիւնը յստակացնելու համար: Ի հարկէ, Ամերիկա ի վերջոյ պիտի ունենայ նոր նախագահ մը որուն ուսերուն պիտի ծանրանայ իրաքեան եւ աֆղանիստանեան պատերազմներու հարցը, Ամերիկայի կորսնցուցած միջազգային վարկը, տնտեսութիւնը եւ սոլարի վերականգնումի հարցերը, երկիրը կառավարելու փափուկ, դժուարին գործը, հակահաբեկչական պայքարը, սահմաններու հսկողութիւնը եւ բազմաթիւ ուրիշ լուրջ հարցեր: Աւելի քան 220 տարիներ շարունակուող այս երկիրը միշտ ալ կարողացած է իր հարցերու լուծել, եւ ներկայիս ալ հարցերու լուրջ վերանայում մը կրնայ լուծումներ փնտոել եւ գտնել առկայ բոլոր հարցերուն...  
\*\*\*

ՄԻԶԱԶՊԱՅԻՆ ՆՈՐ ԲԱՐՂՈՒԹԻՒՆ ՄԸ - ՓԱՔԻՍՏԱՆ «Մասիս»ի նախորդ թիւին

Շաբ.ք էջ 12



րու դէմ: Իրաքեան եւ Աֆղանիստանեան պատերազմները, ուղղակի կամ անուղղակի արդիւնք են Սեպտեմբեր 11ի գործողութեանց: Արագ յաղթանակներու ակնկալութիւններով ձամբայ ելլող այդ գոյգ պատերազմները աւելի քան 5 տարիներէ ի վեր կը շարունակուին, թէ Ամերիկայի եւ թէ այդ երկիրներէն ներս լուրջ վերիվայրումներ յառաջացնելով, պատերազմական, տնտեսական, թէ քաղաքական մարզերէն ներս: Իրաքեան պատերազմի պարագային, Ամերիկայի յայտարարուած պատճառաբանութիւնը Սատտամ Հիւսէյնի բռնատիրութեան վերջ տալու տրամադրութիւնն էր, իսկ Աֆղանիստանի պարագային թալիպաններու իշխանութեան տապալումը: Երթալով յստակ պիտի դառնար որ, Իրաքի պարագային, Ամերիկա ունէր բազմաթիւ լուրջ հետապնդումներ, բացի Ս. Հիւսէյնի տապալումէն, եւ կը վերաբերէին քաղաքացիական պատերազմներու «պազա»ներ-

րուն տեղի կ'ունենան «Այովա» եւ «Նիւ Հեմփշիր» նահանգներու նախընտրական ժողովները (Caucus), որոնց ընթացքին կրնայ յայտնի դառնալ թիւ մէկ թեկնածուն, երկու կուսակցութեան պարագաներուն ալ: Հանրապետական կուսակցութիւնն ալ ունի իր բազմաթիւ թեկնածուները - ձիւլիանի, Ռոմնի, Մքքէյն, Հուքայի, եւ ուրիշներ: Վիճակագրական ընկերութիւնները կ'ընեն իրենց նախատեսութիւնները շաբաթէ շաբաթ, թէ երկու կուսակցութեան պարագային, ո՞վքեր կրնան հաւանական յաղթականներ ըլլալ, եւ սակայն յայտնի է որ երկու պարագաներուն ալ ժողովուրդը տակաւին իր վերջնական ընտրութիւնը չէ կատարած եւ պիտի գալիք ամիսներուն սպասէ: Մինչ այդ միլիոնաւոր սոլարներ կը ծախսուին ընտրական աշխատանքներուն եւ շատերուն համար, մտային մարզանքի եւ ընթացիկ հետաքրքրութեանց պատճառ

մէջ, երբ քաղաքական յօդուած կը գրէինք Փաքիստանի եւ անոր նախկին վարչապետ Պենազիր Պութոյի մասին, հակառակ այդ երկրէն ներս գոյութիւն ունեցող մտահոգիչ կացութեան, մեր մտքէն չէր անցներ որ, շաբաթ մը ետք, Փաքիստան պիտի մխրճուէր քաղաքական լուրջ տազնապի մը մէջ նոյնինքն Պենազիր Պութոյի սպաննութեամբ: Արդարեւ, երկու շաբաթներ ետք երկրէն ներս տեղի ունենալիք ընտրութեանց համար մէկ հաւաքին, երկու փամփուշտով եւ անձնասպան եղող երիտասարդով մը իր մահուան պիտի առաջնորդուէր երկրի վարչապետութեան ամենէն հաւանական թեկնածու, նախապէս երկու անգամ վարչապետ եղած Պենազիր Պութոն վայրագօրէն պիտի սպաննուէր: Երբ այս տողերը կը գրուին, Ամերիկայի եւ անոր մղած հակահաբեկչական պատերազմի կարեւոր օղակ հանդիսացող Փաքիստանը մխրճուած է քաղաքական լուրջ տազնապի մը մէջ, ներքին խառնակութիւններով, եւ ապահովական տակնուվրայութիւններով: Ովքեր ուզեցին հրապարակէն վերցնել Պութոն: Հասցէները բազմաթիւ են եւ կ'երթան նոյնինքն երկրի նախագահ Փերվէզ Մուշարրաֆէն մինչեւ Թալիպանները, իսլամ ճիհատիստները, երկրէն ներս գործող հակա-ամերիկեան դիրք ունեցող շրջանակները: Հարց է ներկայիս թէ ինչ կրնայ ըլլալ Փաքիստանի ճակատագիրը, Պութոյի անհետացումէն ետք: Մէկ բան յստակ է որ կորսնցնողը, շատ հաւանաբար, Ամերիկան ըլլայ, քանի որ Փաքիստանը ենթարկուի ներքին ցնցումներու որոնցմէ տուժէ հակահաբեկչական պատերազմը, աշխարհի վտանգաւոր այդ շրջա-

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՀԷ ԵՒ ՄԱՐՕ ԱԶԱՊԱՀԵԱՆ

ԱՃԽԱՐԸ - 2007

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 2007 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Շարունակում էք 11-ին

նէն ներս: Աֆղանիստան, Ուազիրիստան, Փաքիստան երկիրներ են որոնք Ուսամա Պըն Լատընի Ալ-Քայիտայի եւ անոր կրօնական, ծայրայեղ իսլամական շրջանակներու հարագատ բոյներ են: Ամերիկան իր զօրքերով եւ տոլարներով, դժուար թէ կարենայ յաղթանակ տանիլ այդ երկիրներու հաւատքին եւ համոզումներուն վրայ: Նոյնինքն Մուշարրաֆ բազմաթիւ անգամներ մահափորձէ ազատեցաւ: Յաջորդ անգամ կրնայ ինք ալ ենթարկուիլ Պոլիթոյի ճակատագրին: Մինչ այդ, հակառակ

այլ ճակատներու վրայ, օրինակի համար, Թուրք-Իրաք կացութեան վրայ: Առ այժմ 106 բանաձեւը, այն բանաձեւը որ ցեղասպանութեան վերջնական ճանաչումը պիտի յաջողցնէ ամերիկեան գոնկրեանէն ներս, սառեցուած է, Թուրք-ամերիկեան քաղաքական շահերու լոյսին տակ: Մինչ այդ, այդ բանաձեւի լոյսին տակ, Թրքական ուրացման քաղաքականութիւնը, հակառակ որոշ մտաւորականներու մօտ ցեղասպանութեան նկատմամբ ցոյց տուած հասկացողութեան, կը շարունակէ իբրեւ բիրտ քաղաքականութիւն, մեզի, հայերուս պարագային, կը մնայ շարունակել հետապնդումը

քարայրներու մէջ ապաստան գտած քիւրտ ըմբոստներու վրայ, Ամերիկայի գիտրակցութեամբ եւ քաղաքականութեամբ: Եթէ Ամերիկայի քաղաքական եւ գինուորական իշխանութիւնը կը կարծէ որ այս ընթացքով Իրաքի մէջ յաղթանակ կրնան տանիլ, շատ կասկածելի է: Իրաքի անբաժան մասերէն մէկը քրտական Իրաքն է, ուրիշ հակաթուրք գործողութիւններ կ'ընեն քիւրտ ըմբոստները: Թէ պետական, թէ քաղաքական եւ թէ տնտեսական իրաւունքներ ունեցող համայնք մը կը կազմեն քիւրտները, եւ Ամերիկան, Թուրքերն քաղաքներով հիւսիսային Իրաքի ումբակոծումները, ամենեւին պէտք է չունայ արդար լուծումներ գտնելու խառնակ այդ շրջանէն ներս...



խոստովանի թէ Փոլիթինի հոգը չէր թէ գինք կը սիրէինք թէ ոչ. ուրեմն ըստ «Թայմ» թերթի, Փոլիթինի նախագահութեան վերջին տարին, այսինքն 2007-2008 տարին, իր ութը տարիներու ամենէն չաջողը եղած է, սորուած ըլլալով իր տունէն, ասինքն Ռուսաստանէն ներս, Փոլիթին ապահոված է իր քաղաքական ապագան: (Ծանօթ է որ Փոլիթին, նախագահութենէ հրաժեշտէ, որ վերընտրելի չէ սահմանադրութեամբ, որոշած է Ռուսաստանի վարչապետի պաշտօնը ստանձնել): Ռուսաստանէն դուրս, Փոլիթին չաջողած է իր ընդարձակ ազդեցութիւնը բանեցնել համաշխարհային տարողութեամբ: Այս երկու պատճառներով ալ, ան ընտրուած է իբրեւ «Տարուայ Մարդը»:

Բաւական տարածուն յօդուածներու մէջ, «Թայմ»-էն ներս գետեղուած են Փոլիթինի ձեռք ձգած յաջողութիւնները: Տանք միայն խորագիրները.  
«Ազատութենէ առաջ, կարգ

Շաբ.ք էջ 13



նախագահական թեկնածուներու իւրաքանչիւրին ցաւակցական արտայայտութեանց, յստակ է որ մտահոգիչ կացութիւն մը ստեղծուած է այդ շրջանէն ներս եւ կը մնայ Ամերիկային Աֆղանիստանին եւ Փաքիստանի ղեկավարներուն արագ լուծումներ գտնել կացութիւնը հակակշռելու համար: Այդ երկիրներէն ներս տեմոքրատի կարենալ ստեղծելու համար, բազմաթիւ նախապայմաններ անհրաժեշտ են, որոնք, գէթ առ այժմ անկարելի կը թուին: Մինչ այդ Աֆղանիստանի եւ Փաքիստանի նախագահները, երբ հանդիպին, կրնան իրար խոստանալ ահաբեկչութեան դէմ պայքարի համար գաղտնի ոստիկանական գործակցութիւնը սերտացնել, եւ յուսալ որ կը յաջողին: Ներկայ պայմաններու տակ այս եւս շատ կասկածելի կը թուի...

մեր քաղաքական շահերուն, եւ պահանջել ոչ միայն ցեղասպանութեան ճանաչումը, այլ աւելի անդին, անոր հետ առնչուած եւ անկէ ուղղակի թելադրուած, արդարութեան հետապնդումը: Ի վերջոյ, ցեղասպանութեան ճանաչումը միակ մէկ երեսն է հայկական դատին, անոր հետ կան հատուցման եւ հողային վերադարձի հարցերը, որոնք արդարութեան կը կարօտին:

Թուրքիան, անկախ հայութեան հետ ունեցած հարցէն, ունի բազմաթիւ ներքին քաղաքական եւ տնտեսական հարցեր, որոնց լուծումը այդքան ալ հեշտ չեն երեւիր: Թուրքիոյ Եւրոպայի Միութենէն ներս մուտքի պարագան, քրտական ներքին հարցը, տնտեսական, եւ սահմանադրական փոփոխութեան, զանազան խուճաբերու միջեւ, մանաւանդ կրօնական եւ աշխարհական հոսանքներու փոխյարաբերութեանց, ընկերային, եւ ապահովական ինդիքները, ուրեմն այս բոլորը Թուրքիան կը պահեն մտահոգ վիճակի մէջ, նոյնիսկ եթէ ան ապահոված զգայ իր ամերիկեան բարեկամութիւնը: 2006 թուականին, Թուրքիա կը նկատուէր 57րդ տեղին վրայ, իբրեւ պիզնեսային երկիր, ըստ համաշխարհային դրամատան: Թուրքիոյ ներկայ ղեկավարները համոզուած են որ երկիրը կը գտնուի աւելի լաւ դիրքի մէջ քան հինգ տարիներ առաջ, եւ սակայն տակաւին երկար ճամբայ ունին կտրելիք: Ի՞նչ կը վերաբերի Թուրքիոյ մուտքին եւրոպական Միութեան մէջ, նոյնիսկ այս ուղղութեամբ Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեանի բերելիք նպաստին, Թուրքիա տակաւին երկար պիտի սպասէ, շնորհիւ Ֆրանսայի նոր նախագահ Սարքոսիի նախատեսութեանց:

Մինչ այդ Թրքական օդանավերը իրենց ումբակոծումները կը շարունակեն հիւսիսային Իրաքի

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կարելի չէ 2007 թուականի մասին խօսիլ առանց անդրադառնալու հայկական իրականութեան մասին խօսելու: Ի վերջոյ, տակաւին գէշ-աղէկ գոյութիւն մը ունինք, թէ արտասահմանեան եւ թէ հայաստանեան բաժիններով, որոնցմէ ներս կարեւոր հարցեր ունինք լուծելիք: 2007 թուականի հայ իրականութեան ներկայացող հիմնական հարցը հայկական ցեղասպանութեան փշոտ ճանապարհին, ամերիկեան Գոնկրեսի արտաքին գործերու յանձնախումբէն ներս մեր տարած յաղթանակն էր, այն ակնկալութեամբ որ ի նպաստ մեզի, 27 թեր եւ 21 դէմ քուէարկութեամբ ցեղասպանութեան պատմական իրողութեան քաղաքական ճանաչումը Ամերիկայի կողմէ, կրնայ եւ պէտք է մղել անոր վերջնական լուծման: Բոլորին յայտնի եղաւ թէ ի՞նչ փոթորիկ ստեղծուեցաւ նոյնիսկ այդ վտիտ յաղթանակին իբրեւ արդիւնք, թէ Ամերիկայի, թէ Թուրքիոյ եւ թէ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՔԱԹԻԱ ԽՈՏԱՆԵԱՆ

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 2007 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 12-էն

ու կանոն»:

«Փուլիսի սովորական քաղաքացի մը չէ: Չունի յատուկ գրաւչութիւն, եւ սակայն կը պաշտուէ իր ժողովրդին կողմէ: Քառասնի մէջ գտնուող երկիր մը առաւ, եւ գայն վերածեց ըստ իր պատկերին - կարծր, տառապեալ, անզիջող»:

- «Փուլիսի իշխանութիւնը կը նմանի ռուս ձարերու իշխանութեան, Լենինեան յեղափոխութեամբ ընդմիջուած»:

- «Փուլիսի իշխանութիւնը հիմնուած է քարիւղային ռուսական տնտեսութեան վրայ: Մոսկուա աշխարհի այն քաղաքներէն է որ ամենէն շատ միլիարտատէրեր ունի»:

«Յետ-խորհրդային քառասուն պատմութեան կ'անցնի: Կեդրոնական իշխանութիւնը շատ աւելի գորաւոր է քան տասնամեակներ առաջ»:

«Ապահովութեան տեսակէտէն, Չեչնիա հակալիզուի տակ է, սակայն քաղաքներու մէջ ոճիւրը լուրջ հարց է»:

- «Տեմքրասի» - ի՞նչ տեմքրասի: Ընտրութիւնները ձեւական են, մամուլը գապուած, փտախտը համատարած»:

- «Տնտեսութիւնը քարիւղի վրայ հիմնուած է: Սակայն սղաճը ընդհանուր է»:

- «Արտաքին քաղաքականութիւնը խիստ գորաւոր է համաշխարհային գետնի վրայ, սակայն Ամերիկայի հետ յարաբերութիւնները ներկայիս գաղջ են եւ անհանգիստ»: Իր մասին, նպաստաւոր կարծիքներ ունին, նախագահ Պուշ, Հենրի Բիսինճըր, եւ ուրիշներ...

## ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը գետեղեցինք անմիջապէս Փուլիսի Ռուսաստանէն ետք, թէ աշխարհագրական, եւ թէ

մանրանկարն է այն վիճակին, որուն յատկանիշները, քիչ վերը, որոշ չափով ներկայացուեցան փուլիսեան Ռուսաստանի պարագային:

Այսպէս, 1991 Սեպտեմբերեան անկախութենէն, 16 տարիներ ետք, ի՞նչ պատկեր կը ներկայացնէ Հայաստան, մանաւանդ որ թէ Ռուսաստանի եւ թէ Հայաստանի քաղաքական կեանքէն ներս, նախագահական ընտրութիւններ պիտի տեղի ունենան: Ռուսաստանի պարագային, նոր նախագահը պիտի ըլլայ Տիմիդրի Մետվետեւ անուն Փուլիսի պաշտպանեալ մը, որ հասկնալիօրէն, պիտի ըլլայ Փուլիսի եմթակայ անձ, ցնոր տնօրինութիւն, իսկ Հայաստանի պարագային, մինչեւ Լեւոն Տէր Պետրոսեանի թեկնածութիւնը, նախագահական պաշտօնին, տիրող իշխանութիւնը, որ ինչպէս ըսինք, մէկ մանրանկարն է փուլիսեան իշխանութեան, ամէն ինչ կրնար ընթանալ ամենայն կեղծաւորութեամբ, կառակերութեամբ, եւ իշխանութեան բոլոր լծակներ կատարել եւ ամբողջական օգտագործումով: Իշխանութեանն թեկնածուն, Սերժ Սարգիսեան, կրնար առանց քունը փախցնելու, հասնիլ նախագահի պաշտօնին, եթէ իր չար բախտէն, մէջտեղ չելլեր Լեւոն Տէր Պետրոսեանը, իբրեւ լուրջ հակառակորդ եւ շատ հաւանական, յաղթական իր ընտրապայքարին մէջ, դէպի երկրի նախագահութիւն: Այլ խօսքով, Սերժ Սարգիսեանի թեկնածութիւնը, հալած իւղի պէս պիտի իջեցուէր Հայաստանի ժողովուրդի կողորդէն վար, ժողովուրդ որ, եթէ նախորդ ընտրութիւնները օրինակ պիտի ծառայէին, իր քուէն պիտի տար փոխան կաշառքի, իր տարբեր բաղկացուցիչներով, տուար, ցորեն, թելեվիզիոնային սարք, պաշտօն, եւ այլն:

Սերժի չար բախտէն, ուրեմն, Լեւոն Տէր Պետրոսեան քաղաքական հրապարակ պիտի իջնէր 10 տարուայ բացակայութենէ մը ետք,

Փուլիսի պարագային, եթէ հարց չկայ նախագահութենէն վարչապետութեան փոխանցումը, քոչարեան-սարգիսեան գոյգի պարագային, խնդիրը այդքան ալ հեշտ չի թուիր: Երջանէ մի վեր խօսք կայ որ Սարգիսեանի նախագահութիւն

կանութեան» այն ձեւով որ կը ներկայանայ: Ըսուեցաւ արդէն որ Քոչարեան-Սարգիսեան Հայաստանը փուլիսեան Ռուսաստանի մէկ մանրանկարն է, մէկ հիմնական տարբերութեամբ որ եթէ ռուս ժողովուրդը պաշտամունքի հաս-



ացնելէ ետք, Քոչարեան կը ծրագրէր վերադառնալ, Փուլիսի նման, վարչապետի պաշտօնին, որպէսզի ընթիւնը ապահովէ իր վերապրումը, որ կը նշանակէ նաեւ երկրի արան-թալանի շատուրանկութիւնը իշխանութեան բոլոր լծակներուն տիրացած մարդոց միջեւ: Նաեւ այն վախը կայ որ Լեւոն Տէր Պետրոսեանի յաղթանակի պարագային, Քոչարեան-Սարգիսեան իշխանութիւնը իր բոլոր մանկլաւիկներով, կրնայ դատական հետապնդումի ենթարկուիլ, եւ իրենց մէջ հաշիւ պահանջուի անցնող 10 տարիներու չարաշահութեանց համար:

ցուցած է իր վերաբերմունքը, Փուլիսի նկատմամբ, Հայաստանի տիրահաշակ գոյգին համար, ժողովուրդին զգացումները շատ հեռու են նման տրամդրութենէ: Բացի «բուրձագեւ» իշխանութենէ, արտայայտութիւնը Լ. Տէր Պետրոսեանին կը պատկանի, իր բոլոր շահագործող եւ թալանող միաւորներով, որոնց մէջ անշուշտ «օլիկարխ» դասը, այս իշխանութեան հանդէպ ժխտական գրամադրութենէ գատ, ուրիշ տրամադրութիւն գոյութիւն չունի: Հետաքրքրականը այն է որ ընթիւնը գիտէ այս մէկը, եւ շատ ալ հոգ չընէր այդ մասին: Հաստատուած են, տիրացած են, եւ ամէն ինչ պիտի ընեն շարունակելու համար:

Շար.ը էջ 28




յատկապէս քաղաքա-տնտեսական, վարչակարգային նկատումներով: Մեզի համար, երկու երկիրներու պարագային, նմանութիւնները այնքան շատ են որ, եթէ նախկին Խ.Միութեան պարագային, Հայաստան այդ միութիւնը կազմող 14 երկիրներէն մէկը կը հանդիսանար, իր գաղափարախօսական, տնտեսական կարգ ու սարքով, այդ միութեան փլուզումէն ետք, թէեւ ձեւական անկախութեան մը տիրացած, եւ սակայն, առանց այլեւայլի, կարելի է պնդել որ Հայաստանը մէկ

եւ Սերժի յաղթանակի թուղթերը պիտի խառնուէին: Հասկնալի է անշուշտ թէ ինչո՞ւ տիրող վարչակարգը, սկած է մտահոգուիլ, եւ իր վերապրումի ապահովութիւնը վտանգուած զգայ: Անշուշտ կարելի չէ ըսել որ Սերժի յաղթանակը իրապէս վտանգուած է, քանի որ ինչպէս ըսինք, տիրող ապօրէն եւ բռնատիրական իշխանութիւնը ամէն ինչ պիտի փորձէ իր յաղթանակի ապահովելու համար, քանի որ, իրենք համար, մահու-կենաց հարց է: Աւելցնենք նաեւ որ ինչպէս

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ



# **ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ**



**Middle Eastern &**

**European Cakes**

**Delicious Pastry**

**For All Occasions**

**(Glendale, Anaheim & Pasadena)**



# Massis Weekly

Volume 27, No. 48

Saturday, JANUARY 5, 2008

## Finland Assumes OSCE Chair

HELSINKI -- Finland on Tuesday assumed the chair of the 56-nation Organization for Security and Cooperation in Europe (OSCE). Finnish Foreign Minister Ilkka Kanerva said as chair, Finland "will focus, above all, on intensifying the organization's operation and on the observance of existing commitments." Finland succeeds Spain as chair.

Issues in 2008 were likely to include the issue of Kosovo, conflicts involving Nagorno-Karabakh and breakaway regions in Transnistria in Moldova and the Treaty on Conventional Armed Forces in Europe, Kanerva said in a statement issued in Helsinki. The OSCE is also engaged in election monitoring. In 2009, Greece will take over from Finland as OSCE chair.

## New Year Celebration At Vanak Church In Isfahan



This is the most important and famous historical church in Isfahan from the viewpoint of architecture and decorations values and wall paintings. This church has other names such as san sour or Amena Perkich that means savior. This splendid church was built in 1015 H / 1605 AD. It has a great dome, tall walls and vaults that is now the residence of Armenian caliphate of Iran and India.



Iranian Armenian women attend the New Year Mass at the Vank church in the city of Isfahan 234 miles (390 kilometers) south of the capital Tehran

## U.S. Defends Armenia Election Surveys

YEREVAN -- The U.S. embassy in Yerevan defended on Friday the objectivity of U.S.-funded pre-election opinion polls conducted in Armenia, which has been questioned by Prime Minister Serzh Sarkisian's main election challengers.

The polls, financed by the U.S. Agency for International Development (USAID) and commissioned by the International Republican Institute, have been conducted on a regular basis since March 2006 with the aim of gauging public opinion on key issues facing Ar-

menia. Respondents have also been asked by pollsters from the Armenian Sociological Association (ASA), overseen by the U.S. Gallup Organization, to rate the country's main political leaders and parties.

Ամանորը եւ Ա. Ծնունդը Քրիստոնեայ աշխարհի գեղեցիկ տօներն են: Ամանորը՝ տարին նոր սկսուելու տօնն է: Ամանորի Պատգամն այն է՝ որ սրտով, հոգով եւ մտքով վերանորոգուած, հնի անախորժութիւնները մոռացած, անցեալի ցաւերից ու խոցերից բաժանուած, նոր կորովով ու եռանդով սկսենք նոր տարեմուտը՝ շրջապատի նկատմամբ սէր ու յարգանք տածելով, հետամուտ լինելով գեղեցկութեան գնահատման ու կերտման:

Ա. Ծնունդը Յիսուսի ծննդեան եւ յայտնութեան տօնն է՝ Աստուածայայտնութիւն: Նոր տարուց վեց օր յետոյ, Յունուար 6-ին, մեծ շուքով տօնում է Աստուածորդու ծնունդն ու մկրտութիւնը: Մեր Տէր Յիսուսն է պատգամել աշխարհի մարդկութեան՝ սէր, եղբայրութիւն, արդարութիւն եւ խաղաղութիւն:

Ամանորեան գեղեցկութիւնները պէս-պէս են, հետաքրքրական եւ ոգեւորիչ:

Որքա՞ն գեղեցիկ տեսարան է, երբ նոր տարուայ սեմին, նկատում ես, հայրը կամ մայրը զաւակի ձեռքը սեղմած գնում են եղեւնու ծառ գնելու: Ծառը ընտրելուց յետոյ նրանք ինչ ուրախ ու կայտառ տուն են տանում, անեցիկների հետ միասին լծում են նրա զարդարանքին: Ծառը գուգուում է շարիկներով, գոյնգոյն լոյսերով, կարմիր աստղը գազաթին, կարմրափափախ ձմեռապապիկը ներքեւում, ծառի տակ: Եղեւնին դառնում է տօնածառ գեղեցկափայլ՝ ականջօղերով ու պսպղուն զարդերով: Նա կանգնում է բնակարանի մի անկիւնում պճնուած որպէս

տան ժամանակաւոր ուրախաբեր անդամը, երփներանգ լոյսերի մէջ թաթախուած:

Որքա՞ն գեղեցիկ է նաեւ, երբ ընտանեկան կազմը, մեծից՝ փոքր՝ տատիկն ու պապիկը, բոլոր անդամներով միասեղ հաւաքում են տօնական սեղանի շուրջը եւ սկսում են հայկական կեր ու խումը՝ դէմքերից ժպիտն առկայծող, շրթունքներից երգն ու խինդը դիւթող, սրտերից սէրը յորդող, նրանք ընդառաջ են գնում ժամանող տարուան բարի գալուստ ասելով, լոյսեր կապելով: Նրանք տօնական սեղանի շուրջը բոլորած կենացներ են խմում մաղթանքներով լի՝

Աշխարհին խաղաղութիւն լինի:

Հայաստան աշխարհին բարգաւաճում լինի:

Հայրութեան սէր եւ միաբանութիւն լինի:

Հայ ժողովրդին երջանկութիւն լինի:

Մեր երիտասարդութեան վսեմին ու վեհին ձգտում լինի:

Մարդկանց մէջ հաճութիւն լինի:

Տարին բարեբեր լինի:

Հիւանդներին բժշկութիւն լինի:

Այրուած սրտերին ուրախութիւն լինի:

Ապա ջերմ սիրոյ համբոյցներ են փոխանակում, բոլորը խոնարհաբար համբուրում են տատիկի եւ պապիկի ձեռքերը որպէս երախտագիտութեան սուրբ պարտականութիւն: Տունը իր մեծերով է ամուր եւ կանգուն: Հայկական առածը ասում է՝ մարդու տանը որ մեծ չլինի, մի մեծ քար թող բերի դնի ու մեծի տեղ ընդունի:

Որքա՞ն գեղեցիկ է նաեւ թաթախման գիշերայ տօնական սեղանը Յիսուսի Ա. Ծննդեան տօնի առիթով բոլորով միասին շուրջը բոլորած, Ա. նշխարքը գինու մէջ լուծուած բաժակներով իրար շնորհաւորում եւ բարեմաղթանքներ կատարում:

Այս մտածումներով եւ աւանդական մեր սովորութիւնների վերանորոգման ցանկութիւններով ընդառաջ գնանք Ամանորին գեղեցկացնելով մեր կեանքը մեր ազգօգուտ եւ հայրենասէր արարքներով ու գործերով:

Այն ժողովուրդն է յարատեւում պարծանքով, երբ արթուն է պահում արմատները եւ կանաչ ու փարթամ է պահում իր ճիւղերը:

Ինչպէս տօնածառն է շողջողում լոյսերի եւ զարդարանքների մէջ, թող մեր ժողովրդի կեանքն էլ սիրոյ, աշխատանքի եւ նուիրումի ոգով փայլի ու ցոլայ լազուր երկնակամարի տակ:

Շնորհաւոր Ամանոր եւ Ա. Ծնունդ:

## ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

### ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

Մեր ժողովուրդի մեծանուն եւ անգուգական բանաստեղծներէն՝ Վահան Թէքեան, ունի յատկանշական եւ իմաստալից քերթուած մը՝ «Միջնորդութիւն» վերնագրեալ:

Բանաստեղծը, վերոյիշեալ քերթուածը գրած է տարիներ առաջ՝ սրտի խորունկ ցաւով, տեսնելէ ետք հայ ժողովուրդէն ներս գոյութիւն ունեցող ներքին վէճերը, կռիւները եւ իրերամերժ պայքարները:

«Միջնորդութիւն» քերթուածին իմաստն ու ոգին, նոյնքան եւ աւելի կը պատշաճի ներկայ մեր ժամանակներուն հետ՝ որքան նախկինին: Դժբախտաբար հիմա ալ կը շարունակուին տակաւին՝ նոյն իրերամերժ պայքարները, ներքին վէճերն ու կռիւները թէ՛ հայրենիքէն ներս եւ թէ՛ դուրս:

Կռիւ եւ պայքար կայ Հայաստանի մէջ իշխանաւորներու եւ անիշխանաւորներու միջեւ: Կուսակցականներու միջեւ եւ կուսակցութիւններէ ներս:

Բանաստեղծ Վահան Թէքեան, իր յաւիտենական հանգիստին մէջ՝ վերէն տեսնելով մեր այս աւելորդ, անտեղի, աղիտալի, շահադիտական վէճերն ու կռիւները, կրկին անգամ պիտի խնդրէր «Միջնորդութիւն»ը՝ մեր «աստուածօրէն գիտուն» նախնեաց՝ իր նախապէս գրած յետագայ քերթուածով.

»Ո՛վ իմ նախնիքս, եթէ մերք՝ կը պատահի դեռ ձեզի

Վերադառնալ երկրիս վրայ եւ հետեւիլ քայլերուն

Անոց՝ որոնց սրտին մէջ արիւնը ձեր կը հոսի,  
Որոնք ձեզմով են հպարտ՝ եւ են ձեզմով ալ նրկուն...:

Ո՛վ դուք, որ մեզ կը տեսնէք՝ օրը չեղած իրիկուն,  
Իրարու դէմ տասն անգամ բաժնուած տասը մասի,  
Եւ կը տեսնէք, դուք որ այժմ աստուածօրէն էք գիտուն՝  
Որ հին յանգանքն է եւ նոյն թոյնը՝ որ մեր մէջ դեռ կը խօսի...:

Ըսէք, ո՛վ դուք, եթէ չէք զգուած մեզմէ եւ ձեզմէ...

Եւ կայ Աստուած մը եթէ, քառսին վրայ մեր կեանքին...

Ըսէք Անո՛ր, որ հերիք, ալ այս պատիժն հերիք է...:

Որ այս սիրտերն իրարու կը բզբտեն մոլեգին,  
Անոնք խեղճ են որք են... իրար՝

սերտիւ եւ պինդ սեղմելով,  
Միայն պիտի գտնէին քիչ մ'ըսփոփանք ու կորով...:

Մարգարէաշունչ այս քերթուածին մէջ արծարծուած հայրենասիրական մտահոգութիւնները, այնքան ճշմարիտ են եւ հարազատ, որ չեն կարօտիր վերլուծումի:

Կը կարօտին միայն հաստատման:

Մենք ցաւ ի սիրտ կը հաստատենք, որ մեր հայրենիքի մէջ ներկայիս տարաբախտաբար կան շատ «բաժանումներ», անճշդութիւններ եւ եղբայրատեաց պայքարներ:

Վերահաս նախագահական ընտրութեան նախօրեակին շղթայագերուած են թշնամական բրտութիւններ: Վարձկան կոռուարներ՝ աներկիւղ կռիւներ կը սարքեն ընտրաշահաներու մասնակցող շատ մը հայ անմեղ քաղաքացիներու դէմ: Մենք Սփիւռքի մեր հեռաւոր կայքերէն, «օրը չեղած իրիկուն», ինչպէս որ բանաստեղծը պիտի ըսէր, կ'իմանանք ու կը տեսնենք «օրը տասն անգամ՝ տասը մասի բաժնուած» կուսակցութիւններու շղթայագերած պայքարը աթոռաձուլութեան ի խնդիր:

Շատ մը կուսակցապետներու մօտ չկայ փափաքը միասնականութեան, միութեան, որովհետեւ անոնց սրտերուն մէջ բացակայ է եղբայրական սէրը:

Եւ որ ամենէն կարեւորն է՝ անոնց մօտ թերի է հայրենասիրութիւնը:

Անհատական շահախնդրութիւնը, իշխանական դիրքերու վրայ կառուած մնալու տենչասիրութիւնը, կաշառատութիւնը եւ կաշառակերութիւնը գլխաւոր պատճառներն են՝ հայ ժողովուրդէն ներս ծագում առած բաժանումներու, պայքարներու եւ դժբախտութիւններու:

Անհատական շահադիտութիւնն է չարեաց մեծագոյնը:

Տար Աստուած, ինչպէս կ'աղերսէ բանաստեղծ Վահան Թէքեանը, որ մեր հայրենիքին մէջ վերահաստատուի արդարադատութիւնը, անշահախնդրութիւնը, օրինաւորութիւնը, ժողովրդավարութիւնը եւ կարեւորագոյնը բոլորէն՝ հաստատուի եղբայրական սէրը:

Հոս կը կրկնենք բանաստեղծի քերթուածին վերջին երկու տողերը՝ մեր անմեղ ժողովուրդին համար ըսուած կամ գրուած... – Անոնք:

«Որք են, խեղճ են եւ իրար սերտիւ եւ պինդ սեղմելով,  
Միայն պիտի գտնէին քիչ մ'ըսփոփանք ու կորով...»:

### ԺԱՄԱՆԱԿԸ ԳԱՆՈՒՏ ԽԱՆԵՆՑ



Տի՛նկ-տա՛նկ, տի՛նկ-տա՛նկ,  
Ժամանակը չի կանգնելու...  
Ցերեկները յաջորդում են գիշերներին,  
Եւ յաճախ էլ գիշերները մնում,  
Ու չեն անցնում...:

Ժամանակը մեզ վիճակուած Կարճ է ու թանկ,  
Շարժուենք, շարժուենք, որ չուշանանք,

Հասնենք կայարանին,  
Հասնենք պայծառ իմացութեան,  
Մեր շուրջ լինի միշտ լուսավառ,  
Կեանքի ճամբին ու սրտից սիրտ

Ծիածանը կապի համար:  
Տի՛նկ-տա՛նկ, տի՛նկ-տա՛նկ,  
Ժամանակը կարճ ու թանկ...

### ՏՕՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Տօնական գիշեր  
Նոր օր, ամանոր,  
Ինչ յուշե՛ր, յուշե՛ր,  
Թողեցի այնտեղ՝  
Հեռու մշուշում,  
Ի դձեր, երագներ  
Մնացին կիսատ...  
Թերի, անաւարտ...  
Տօնական գիշեր,

Նոր օր, ամանոր,  
Անցած յուշերս եմ  
Փորում, փորփորում,  
Տխուր ու մոլոր,  
Փնտրում այս գիշեր,  
Անցած, գնացած  
Օրերս բոլոր՝  
Ու նոր ամանոր,  
Մի նոր ամանոր...

# ԼՈՅՍԻ, ՅՈՅՍԻ, ՍԻՐՈՅ, ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

## ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Նախկին հագարամեակներում, ձմեռուայ միջին ժամանակահատվածում հին ժողովուրդները տարբեր տոնախմբութիւններ էին կատարել: Մինչև Յիսուսի Մնունդը, դեռևս քսան եւ աւելի դարեր առաջ, արեւելքի ժողովուրդները եւ վաղ եւրոպացիները տոնախմբել էին լոյսի ծնունդը, բնութեան հէքիաթային երեւոյթները պատկերած աստուածների պաշտամունքի հանդէսներ: Ձմեռուայ արեւադարձին, հին աշխարհի երկրագործ ժողովուրդները ուրախ էին եղել, որ ցուրտ, բուք օրերը անցնում էին: Արեւադարձ էր, լոյսի երկար օրեր էին գալու, յարատեւ կեանքի պաշտամունք էր եղել լոյսը:



Հիւսիսային ժողովուրդները Դեկտեմբերի 21-ից տոնախմբել էին «Մնունդ Տեառն» տօնը, իսկ ձմեռային արեւադարձը Յունուարի ընթացքում: Արեւի վերադարձը տոնախմբելու համար հայրերը ու իրենց զաւակները վառելու համար խոշոր կոճղեր էին տուն բերել: Մինչև այն լրիւ վառուէր, 12 օրեր անընդհատ խնձոք էին առել: Հաւատացել էին, որ կրակից առկայծող իւրաքանչիւր կայծը խորհրդանշում էր գալիք տարում մի նոր խոճկորի կամ հորթի ծնունդը:

Եւրոպական շատ երկրներում, Դեկտեմբերի վերջին օրերը յարմարագոյն ժամանակն էին համարել տոնախմբութիւններ կատարելու: Տարուայ այդ ժամանակահատուածին արջաւի մեծ մասը մորթւում էր, որպէսզի ձմեռուայ ընթացքում ստիպուած չլինէին կեղտակրելու նրանց: Առատ մսամթերքի ժամանակն էր եղել, բացի դրանից տարուայ ընթացքում պատրաստուած գինին ու գարեջուրը վերջնականապէս խմորուած էին եւ պատրաստ խմելու ու խրախմանալու:

Հռովմ, աշխարհը նուաճած կայսրութիւն, իր լեզուներով հասել մինչև հայոց սրբազան Արածանի գետի ափեր: Արեւելքի Արքաների Արքայ հայոց Հայկազուն Տիգրանը իր հայկեան այրուծիով ջախջախել էր նրանց գնդերը որ չպղծէին իրենց լեռների ձիւնոտ ջրերը: Հռովմ առաջարկել էր հայոց արքային դաշնակից լինել իրեն: Իր մայր ոստանի ժայռին էին փորագրել աշխարհի քարէ քարտէսը, այն բաժանել էին երկու մասի՝ Հռովմ, ուղղահայեաց գիծ եւ այն կողմը աշխարհի՝ Արմէնիա: Հռովմէացիք տոնախմբել էին երկրագործութեան աստուած՝ Սատուրնի ծնունդի տօնը՝ ձմեռնամուտի շաբաթից մինչև Դեկտեմբերի ձմեռային արեւադարձի օրերը, այն կոչել էին (Սատուրնալիա», որը հեթանոսական բարքերի փառաբանումն էր եղել: Ուտելիքն ու խմիչքը առատ էին եղել, կեանքի վայելքի ու հեթանոսական խրախմանքի արբեցում էր եղել: Տօնախմբութիւնների մէկ ամսուայ ընթացքում ստրուկները դառնում էին ազատներ, գիւղացիները տնօրինում էին քաղաքները, դպրոցները եւ գործատեղիները փակուած էին, այնպէս որ ամէն ոք կեանքի գուարճանքն էր ըմբոշանում:

Հռովմի պատանիներին պատուելու համար տոնախմբել էին նաեւ «ձուվենալիան»: Բարձր դասակարգի մարդիկ Դեկտեմբերի 25-ին տոնախմբել էին անյաղթ արեւ աստուծոյ՝ Միթրայի ծնունդը:

Միթրան ծնուած էր եղել ժայռից: Հռովմէացիների համար Միթրայի ծննդեանը տօնը ամենայ սրբազան օրն էր եղել: Միթրան խորհրդանշել էր լոյսի, երկնքում պայթած արեւն էր, իրենց մոլորակի կեանքը: Միթրան հայոց լեռնաշխարհի արեւապաշտ արմէնների Միհրն էր: Միհր, հինգ հագար եւ աւելի տարիներ առաջ հայկական լեռնաշխարհի Արմէնների «Ար» արեւ աստուծոյ պաշտամունքն էր եղել, հաւատացել էին որ իրենք արեւի լոյսում էին ծնուած եղել եւ իրենց անուանել՝ արեւ աստուծոյ որդիներ:

Իմաստուն այրեր, հետեւելով երկնականարի աստղերի երթին, հասել էին Բեթղէհէմ, որի քարայրի մտրուում մի մանչ էր ծնուել, իր հետ տիեզերքից բերելով սիրոյ, խաղաղութեան, յոյսի, հաւատքի պատգամ: Յիսուս էր եղել այդ մանչի անունը, որին յետոյ տիեզերական խորհուրդով օծուած Քրիստոս էին կոչել: Վաղ քրիստոնէաները իրենց Վարդապետի Մնունդը չէին տօնել, հիմնականում տօնել էին Ջատիկը: Քրիստոնէական եկեղեցու պաշտօնատարները 431 թուին Եփեսոսի ժողովին որոշել էին հիմնադրել Յիսուսի Մնունդեան տօնի օր՝ Յունուարի 6ը: Աստղագետների հաշուարկներով, Յիսուսի Մնունդեան ժամանակ կնկարագրուած որոշ աստղերի չափանուէրը երկնականար կարող էր պատահած լինէր տարուայ ժամանակի այդ հատուածում: Դժբախտաբար Աստուածաշնչում չիշատակուած չէ Յիսուսի Մնունդեան օրը, որի համար Մաքրակրօն, Խստակրօն (Puritans) հետեւորդները ժխտում էին Յիսուսի Մնունդեան տօնի համար սահմանուած այդ օրը: Նրանց մի փաստարկը ենթադրում էր նաեւ որ այն կարող էր պատահած լինէր գարնանը, ինչու հովիւները իրենց անասունների հօտերը արօտի պիտի տանէին ձմրանը, քանի որ սովորաբար այն անում էին գարնանը:

Հռովմի Յուլիոս Ա. Պապը, հրահանգել էր Դեկտեմբերի 25ը համարել Յիսուսի Մնունդեան օր, հեթանոս աստուած՝ Սատուրնալիա-Միհրի տոնախմբութեան օրերին գուգադիպու համար, այն կոչելով «Տօն Մնունդեան»: Անգլիայում կատարուել էր վեցերորդ դարից, իսկ Սկատինաւեան երկրներում ութերորդ դարից սկսած: Յունական եւ Ռուսական Ուղղափառ եկեղեցիները հաւատարիմ էին մնացել Եփեսոսի ժողովին,

Յունարուի 6ին տօնելով Յիսուս մկրտութիւնը, իսկ 7ին Մնունդեան տօնը: Հայ եւ արեւելքի եկեղեցիներ մկրտութիւնը եւ Մնունդը տօնում են Յունուարի 6ին: Յիսուսի Մնունդը տօնելով Դեկտեմբերի արեւադարձի Սատուրնալիա-Միհրի տօնի հետ նոյն ժամանակ, եկեղեցու առաջնորդները նպատակադրուած էին եղել հնի յիշողութիւնը խամբել:

Յիսուսի Մնունդը փառաբանու համար կրօնական ու աշխարհիկ բազում երգեր էին յօրինուած եղել: Արարողական գգեստներով երեխաները, մոմեր վառած, տուներ էին այցելում Յիսուսի Մնունդը երգերով ակնարկել: Մնունդի գեղերգեր (Christmas Carol) էին նրանք, որոնց մի մասը ստեղծագործել էր Անգլիացի գրող Չարլզ Տիկինսը:

Ամերիկեան յեղափոխութիւնից յետոյ անգլիական սովորոյթները երկրում նախընտրելի չէին

համարուել, ներառեալ Յիսուսի Մնունդը: Կոնգրէսը 1789 թուականի Դեկտեմբերի 25ին ամերիկեան սահմանադրութեան սաստատման նիստ էր գումարել եւ այն Մնունդի օրուան էր համընկած եղել: Մինչև 1870 թուականի Յունուարի 26ը Մնունդը յայտարարուած չէր եղել որպէս դաշնակցային պաշտօնական տօն՝ Christmas Day, որը այժմ ինչքան շքեղ է տօնուած:

Վաշինգտոն Իրվինկի գիրքը, որը 1819 թուականին լաւագոյն ծախուող գիրքն էր համարուած եղել, պատմուածքների շարք էր, որտեղ նկարագրուած էր եղել մի ազնուականի դղեակում Մնունդի տօնակատարութիւնը, գիւղաբնակ մարդկանց հրաւիրուած էր եղել իր ապարանք: Խանդակաթ, հրճուալից, տօնախմբութիւն էր եղել, պարել, երգել, հարբել ու ողջագուրել էն իրար: Իրվինկը անձամբ մասնակից էր եղել տօնախմբութեանը, ան երեւակայել էր որ Մնունդը մարդկանց սրտերին լոյս, սէր է կաթում:

Christmas Tree, Տօնածառ: Հայոց լեռնաշխարհի Արրատա-Հայասի արեւ որդի արմէնները ծառին պաշտամունք էին նուիրել, այն բարիք էր արարել իրենց եւ ծառեր էին տնկել որպէս խաչեր իրենց նախնիներին: Նոր Տարի, իւրաքանչիւր հայու տուն տօնածառ է կանգնած, գարդարուած նորահարսի նման, արեւավառ լապտերիկներից լոյս է հոսում նրա վրայ, կարծէք նախնիների արեգակունք ակներն են ժպտում իրենց:

Դեռևս Քրիստոնէութիւնից շատ վաղ, կանաչը ձմեռուայ ժամանակ յատուկ նշանակութիւն էր ունեցել մարդկանց համար: Տուները գարդարել էին եղեւու, սոճի, մայրի ծառերի ճիւղերով: Կարծել

Շաբ.ը էջ 22

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ՄԱՐԻԱ ՄՈԼՈՅԵԱՆ**

# ԼՈՅՍԻ, ՅՈՅՍԻ, ՍԻՐՈՅ, ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Շարունակում էք 21-էն

էին որ այն իրենցից հեռու կը պահէր կախարդներին, չար ոգիներին: Հին ժողովուրդները հաւատացել էին, որ արեւը աստուած է, նա հիւանդ լինելու պատճառով է ձմեռ լինում: Արեւադարձը, Դեկտեմբերի 21-22, տօնել էին, որ արեւ աստուածը նորէն պիտի առողջանար, հզօրանար, ծառերը նորէն պիտի կանաչէին եւ ամառը նորէն պիտի վերադառնար:

Եգիպտացիների աստուած ՌԱ-ի (այնտեղ հասած հայոց ԱՐ արեւի աստուածը) թագին բազմած էր եղել բոցավառուող արեւը: Զմեռային արեւադարձին, երբ ՌԱ-ն ապաքինում էին համարում, իրենց տները բերում էին արմաւենիի կանաչ ճիւղեր, այն համարելով յաղթանակի խորհրդանիշը մահուան հանդէպ:

Գերմանիային է վերագրւում տօնածառի աւանդութեան սկզբնաւորումը, երբ 16րդ դարում Քրիստոնեաները սկսել էին իրենց տներ բերած ծառերը վարդարել: Մարտին Լուդերը՝ 16րդ դարի եկեղեցու բարեփոխիչ բողոքականների հայրը, առաջինը վառուած մոմեր էր կախել տօնածառին: Զմեռային մի գիշեր իր տուն վերադառնալու ժամանակ, հմայուել էր կանաչների արանքներից շողշողացող աստղերի փայլատակումից: Նոյն պատկերը իր ընտանիքում վերակենդանացնելու համար, տանը մի ծառ էր կանգնեցրել ու նրա ճիւղերից կապել վառուող մոմեր:

Տօնածառի սովորութիւնը շատ ուշ էր ընդունել Ամերիկայի նորաբնակների շրջանում: 1659 թուականին Մասաչուսեթս նահանգի գերագոյն ատենադահլիճ էր ընդունած եղել Դեկտեմբերի 25ի տօնակատարութիւնը պատժական յանցանք համարել, մարդկանց տուգանել տներին վարդարանքներ կախելու համար: Օրէնքը շարունակել էր գործել մինչեւ 19րդ դար, երբ Գերմանացի ու Հոլանտացի գաղթականների հոսքը ականահարել էր այդ արգելքը:

1846 թուականին, Անլիա-յի Վիկտորիա թագուհին, իր գերմանացի ամուսին եւ զաւակների հետ տօնածառի շուրջ բոլորը կանգնած պատկերուած էր եղել London News լրագրում: Այն սիրով էր ընդունել Ամերիկայի արեւելեան ափի ընկերացութեան մարդկանց կողմից: Տօնածառը մուտք գործել Ամերիկայի Միացեալ Նահանգներ: 1890-ականներին Տօնածառը ամբողջ Միացեալ Նահանգներում սկսել էր ժողովրդականութիւն վայելել եւ դարձել աւանդական սովորութիւն, չքեղ տօնախմբութիւն, քաղաքներ ու գիւղեր վառուած են իրենց նախնիների պաշտած լոյսով, քրիստոնէական հաւատքի դրոշմազանների պատկերներով:

Զմեռային արեւադարձի տօներ, Մոսկուի տօնախմբութիւն, Նոր Տարի-Նաւասարդ-Ամանոր-կաղանդ, մարդկային երեւակայութեան ճախրանք, ըզձանք, որ գալիքը լինէր երջանիկ, առատ բերքի հունձք լինէր: Արարել

էին Սանթա-Կլաուս, որ իրենց մանչերին նուէրներ բերէր, որ մանչերն սրտայոյզ նրա գլխատեան սպասէին: Սանտա-Կլաուս-ի առասպելը, 280 թուականին ծնուած Սուրբ Նիկոլաս վանականի անուան հետ է առնչուած: Իր բարութեամբ ու բարեպաշտութեամբ սրբացել էր, նրա անձին շուրջ բազում առասպելներ էին յօրինուել: Աւանդուած են, որ ժառանգած ամբողջ հարստութիւնը փոխանցել էր ուրիշին եւ ճանապարհորդել երկրում: Նրա մասին ամենայն ճանաչուած պատումը եղել է՝ իրենց հօր կողմից գերութեան վաճառուելուց երեք աղքատ աղջիկների փրկելը եւ ամուսնանալ կարողանալու համար նրանց օժիտ հայթայթելը: Նա համարուել էր մանչերի ու նաւարկողների պաշտպանը: Նրա յիշատակութեան տօնակատարութիւնը կատարուել է մահուան տարեկիցի օրը, որը նկատուել էր խոշոր գնումներ անելու ու ամուսնանալու երջանիկ օր: Մինչեւ վերածնունդի շրջանը, Նիկոլասը Եւրոպայում եղել է ամենայն ժողովրդական Սուրբը: Բողոքական բարեփոխումներից յետոյ էլ, երբ սուրբերի մեծաբանքը սկսել էր չքաջարուել, Սուրբ Նիկոլասը պահպանել էր իր դրական հուշակը, մասնաւորապէս Հոլանտիայում: Սուրբ Նիկոլասի աւանդութիւնը ամերիկեան ժողովրդական մշակոյթ թափանցել է 18րդ դարի վերջը: Նիւ Եորքի մի լրագիր 1773 եւ 1774 Դեկտեմբերի ամիսներին տեղեկացրել էր, որ Հոլանտացի ընտանիքների մի խումբ հաւաքուել էին մեծարելու Սուրբ Նիկոլասի տարեկիցը:

Սանդա Կլաուս, Զմեռ Պապ, անունը ծագել է Հոլանտական Սինդր Կլաս կեղծ անունից յապաղուած ձեւը Սինթ Նիկոլասի: 1804ին, Նիւ Եորք քաղաքի պատմութեան ընկերութեան անդամ Ջօն Փինթարտը, Սուրբ Նիկոլասին նուիրուած պատուանշան էր փայտագրել, որի հակառակ երեսին փորագրուած էր եղել այժմեան Սանդայի պատկերը՝ գուլպաներ լցուած խաղալիքներով եւ պտուղներ կախուած կրակարանի վրայ: Գրող Վաշինգտոն Իրվինգը իր հրատարակումներով ժողովրդականացրել էր Սինդր Կլաս - Սանդա Կլաուսին, անդրադարձ լղելով Սուրբ Նիկոլասին որպէս Նիւ Եորք քաղաքի պաշտպան:

1897 թուականին էր, Նոր Տարի էին տօնելու Նիւ Եորք քաղաքում: Ութ տարեկան Վիրճինիա անունով մի աղջնակ, հաւատացել էր որ այդ գիշեր իրենց տուն այցելութեան էր գալու Սանդա-Կլաուսը, նոյն ինքը մեր Զմեռ Պապը: Սակայն նրա խաղընկեր աղջնակներ ու տղաներ ասել էին իրեն, որ Սանդա-Կլաուսի գոյութեան մասին հարցում անելու, այսպէս:

«Ես ութ տարեկան եմ: Իմ փոքրիկ ընկերներից ոմանք ասում են Սանդա-Կլաուս չկայ: Հայրիկիս ասում է եթէ դու այն տեսնում ես The Sun լրագրում, ապա այն այդպէս է: Խնդրում եմ ասէք ինձ կայ Սանտա-Կլաուս?» Վիրճինեայի նամակը հասել էր լրագրի Francis P. Church անունով մի երկարամեայ խմբագրի, որը հետեւեալ պատասխան էր հրատարակել:

«Վիրճինիա քու փոքրիկ ըն-

կները սխալ են: Նրանք ազդուած են իրենց տարիքի թերահաւատութիւնից, նրանք չեն հաւատում բացի նրանից ինչ որ տեսնում են: Նրանք մտածում են ոչինչ կարող է լինել, որը հասկնալի չէ իրենց փոքրիկ ուղեղներով: Վերճինիա, բոլոր մտքերը՝ թէկուզ լինեն մարդկանց կամ երեխաների, փոքր են: Մեր այս անհուն տիեզերքում, մարդը համեմատուած անեզր աշխարհի հետ պարզապէս մի միջատ, մըջիւն է իր ինտելեկտով եւ ինչպէս կարող էր իր մտածողութեամբ ըմբռնել ամբողջ ճշմարտութիւնը եւ բոլոր գիտելիքները:

«Այո Վերճինիա, կայ Սանդա-Կլաուս»:

«Նա անտարակոյս գոյութիւն ունի, այնպէս ինչպէս սէրը, ազնուութիւնը, բարեպաշտութիւնը գոյութիւն ունեն եւ դու գիտես արդեօք որ նրանք յորդում են քու կենսութիւն եւ հրճուանք: Աւաղ: Ինչպէս տրտում պիտի լինէր աշխարհը եթէ չլինէր Սանդա-Կլաուսը: Աշխարհը նաեւ նոյնքան տխուր պիտի լինէր եթէ չլինէին Վիրճինիաներ: Այն ատեն պիտի չլինէին ոչ մանկական հաւատք, ոչ բանաստեղծութիւնից բացի մենք ուրիշ վայելք պիտի չունենայինք: Այն արտաքին լոյսը որով մանկութիւնը լցնում է աշխարհը պիտի մարէր:

«Զհաւատալ Սանդա-Կլաուսին, դու նոյնպէս կարող էիր չհաւատալ պարիկներին: Դու կարող էիր նոյնպէս խնդրել քու հայրիկին, որ Մոսկուի Նախօրեակին մարդիկ վարձէր, որպէսզի հսկէին բոլոր ծխնելոյզները հանդիպելու համար Սանդա-Կլաուսին, սակայն եթէ դու նոյնիսկ չէիր տեսնի Սանդա-Կլաուսին վայր իջնելիս, ինչ պիտի ապացուցէր այն: Ոչ ոք չի տեսնում Սանդա-Կլաուս-

սին, բայց այն իրականութիւն չէ որ չկայ Սանդա-Կլաուսը: Աշխարհում ամենաշատ իրական բաները այն են, որ ոչ երեխաները եւ ոչ էլ մարդիկ կարող են տեսնել: Դու երբեքից տեսել ես պարիկներին մարգագետիններում պարելիս: Անուշտ ոչ, սակայն այդ ապացոյց չէ որ նրանք այնտեղ չեն: Ոչ ոք կարող է ըմբռնել կամ երեւակայել չտեսնուած ու չնշամարուելիք բոլոր այն հրաշքները որոնք կան աշխարհում:

«Դու մաս, մաս պատուիր պուպրիկները, տես ներսում ինչն է աղմուկի շառաչման պատճառը: Սակայն կայ մի վարագոյր, որը ծածկում է անտեսանելի աշխարհը, որը ոչ ամենահզօր մարդը եւ ոչ էլ որեւէ ժամանակ ապրած ամենահզօր մարդկանց միացեալ ուժը կարող էին այն պատուել: Միայն հաւատքը, բանաստեղծութիւնը, սէրը, երեւակայութեան սիրերգութիւնը կարող են մի կողմ հրել այդ վարագոյրը եւ տեսնել, եւ նկարահանել այդ երկնային գեղեցկութիւնը եւ նրա այն կողմի երկնային փառքը: Այդ բոլորը ձէլիչ են: Ահ, Վերճինիա, այս ամբողջ աշխարհում չկայ ուրիշ ոչինչ իսկական ու հաստատուն:

«Ոչ Սանդա-Կլաուս: Փառք Աստուծոն, նա ապրում է եւ ապրելու է յաւիտեան: Վերճինիա, հիմակուանից հազար տարիներ առաջ, դրանից բացի տասը անգամ տասը հազար տարիներ յետոյ էլ նա պիտի շարունակի մանկութեան սրտերը գուլարթ պահել:

Նոր տարի, հայոց աշխարհին բարիք հոսիր, հայրենի արտերում ու այգիներում առատ բերքի հունձք յորդիր, հայոց հոգիներին համերաշխութիւն ու միասնութիւն անձրեւի:

Շնորհաւոր Նոր Տարի ու Սուրբ Մոսկու:

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

# ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻ ՍՐՏԱԳԻՆ ԿՈՉ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՄ

**ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ**  
(Յատուկ «Մասիս»-ին յղված)

Լիբանանի եղբայրասպան պատերազմը, որ շուրջ 15 տարի տեւել է յետոյ աւարտեցաւ, սակայն տակաւին զանազան ձեւերով կը շարունակուին անհամաձայնութիւնները: Որովհետեւ տաք կամ պող պատերազմին պատճառները չեն վերացած: Տակաւին համայնքի մը մէջ կը տիրէ այն մտայնութիւնը թէ իրենք են հարազատ լիբանանցիները՝ երկրին տէրերը:

Երկար ժամանակ ֆրանսական գաղթատիրութեան տակ ապրել է յետոյ լիբանանցի ժողովուրդին անկախութեան պայքարին եւ արտաքին աշխարհի մէջ տեղի ունեցող ազատութեան ծաւալող շարժումին ճնշումին տակ, Ֆրանսա պարտաւորուեցաւ հրաժարիլ գաղթատիրութենէն՝ իշխանութիւնը փոխանցելով Մարոնիթ համայնքին: Դժուար է դատաստան տեսնել շուրջ 60 տարի առաջ կատարուած այս կարգադրութեան մասին: Գուցէ Մարոնիթ համայնքը այդ ժամանակ մեծամասնութիւն էր, կամ Ֆրանսան պարզապէս կրօնական հիման վրայ խտրական կարգադրութիւն մը ըրաւ: Պատմութիւնը ուսումնասիրելու հարց է, որ այս յօդուածին հետ կապ չունի: Այս յօդուածին նիւթը այսօրուան վիճակն է, որ շարունակութիւնն է Ֆրանսական գաղթատիրութեան ըրած կարգադրութեան, ըստ որուն երկրին նախագահը պէտք է ըլլայ Մարոնիթ: Որոշում մը՝ որ ի սկզբանէ անարդար եւ հակադեմոկրատական է, եւ որ տակաւին կը շարունակուի իբրեւ անգիր օրէնք: Երկիր կառավարելու խտրական այս աւանդութիւնը անընդունելի է քաղաքակիրթ եւ ժողովրդավարական սկզբունքներու հաւատարմող ժողովուրդի մը համար եւ խորքը կը կազմէ Լիբանանը խռովող հակամարտութիւններուն, գործուող ոճիրներուն եւ պատերազմին, որ վերջ գտած է ըստ երեւոյթին, բայց դեռ կը շարունակուի այլազան ձեւերու տակ եւ պիտի շարունակուի այնքան ատեն որ կողմնակալ ու խտրական գործելակերպը ի գորտ մնաց Լիբանանի վերին իշխանութիւնները կազմելու առընչութեամբ:

Լիբանանցի ժողովուրդը կը բաղկանայ քրիստոնեայ եւ իսլամ համայնքներէ, որոնք ունին իրենց ստորաբաժանուածները կրօնական եւ ազգային հիմերու վրայ: Այսպէս՝ քրիստոնեայ համայնքը կազմուած է մարոնիթներէ, օրթօտքսներէ, կաթոլիկներէ եւ բողոքականներէ՝ իւրաքանչիւրը ծագումնային ատորաբաժանումներով: Օրինակ, հայ համայնքին մեծամասնութիւնը կը դասաւորուի օրթօտքսներու մէջ, իր իւրաքանչիւր նկարագրով, մեր որակումով առաքելական: Կան նաեւ կաթոլիկ եւ բողոքական (աւետարանական) փոքրամասն հայ համայնքներ:

Լիբանանցի իսլամ ժողովուրդը կը բաղկանայ Սիւննի եւ Շիի երկու գլխաւոր դաւանանքի հետեւորդներէն, որոնցմէ առաջինին (սիւննի) տրուած է վարչապետական մենաշնորհը, իսկ շիիներուն՝ խորհրդարանի նախագահութիւնը: Այս ձեւով ֆրանսական գաղթատիրութենէն ժառանգուած անգիր համաձայնութեան հիման վրայ Լի-

բանանի նախագահը պէտք է ըլլայ մարոնի, վարչապետը սիւննի, իսկ խորհրդարանի նախագահը՝ շիի: Առաւել բանակի հրամանատարը եւս պէտք է ըլլայ մարոնի, ինչ որ բոլորովին կը խախտէ համայնքներու միջեւ հաւասարակշռութեան ենթադրեալ դրութիւնը: Այսօրուան կացութիւնը աչքէ անցընելով դժուար է տեսնել որ թիւի եւ ուժերու համեմատութիւնը բոլորովին փոխուած է: Մենաշնորհներու մէջ առաջնութիւն վայելող մարոնիթ համայնքը այն է ինչ որ կը կարծուէր անցեալին: Ոչ մեծամասնական թիւ եւ ոչ ալ գերակշիռ ուժ ունի, բայց տակաւին կը պահէ հինէն ժառանգուած մենաշնորհները: Սիւննի համայնքը եւս, որ մարոնիթ համայնքին հետ գործակցաբար Լիբանանի պետական ղեկը ձեռք առած էր, այն է ինչ որ կը կարծուէր, եւ այդ հիման վրայ կառավարական մենաշնորհներու երկրորդ տեղը կը գրաւէ: Ասոնցմէ զատ կայ նաեւ տիրոջ համայնքը, որ իր կարեւոր տեղը ունի Լիբանանի համայնքային խճանկարին մէջ, համեմատական չափով մասնակցելով Լիբանանի պետական կառուցին:

Այսօր շրջուած, բոլորովին փոխուած նոր կացութիւն մը կայ, որուն հիման վրայ պետական պաշտօններու բաշխումը եւ երկիրը կառավարելու ընդհանուր դրութիւնը պէտք է բարեփոխուի ժողովրդավարական սկզբունքներուն համաձայն: Ներկայիս եւ բաւական ժամանակ է ի վեր, շիի համայնքը շատ աւելի մարդկային թիւ ունի քան մարոնիթ եւ սիւննի համայնքները, որոնք տակաւին կը պահեն երկիրը կառավարելու մենաշնորհը, երրորդ դիրքը միայն գիջելով շիի համայնքին: Ահա թէ ուր կը գտնուի Լիբանանի մէջ շարունակուող խռովութիւններուն գլխաւոր պատճառը: Իսրայէլի կողմէ Լիբանանի վրայ կատարուած վերջին յարձակումը ցոյց տուաւ որ շիի համայնքէն կազմուած Հըզպալլահ գիւնեալ շարժումը միայն կրցաւ զսպել նախադրական, որուն առջեւ անգոր մնացեր էր լիբանանեան բանակը: Կը հետեւցուի, ուրեմն, որ եթէ թիւր եւ ուժն են որոշիչ ազդակները կառավարութեան մէջ գլխաւոր դիրքերը գրաւելու, շիի համայնքը առաջինը կու գայ ներկայիս:

Ուրեմն, խաղաղ, ժողովրդավարական եւ բարգաւաճ Լիբանան մը ունենալու համար պէտք է մոռնալ ֆրանսական հոգատարութեան օրերէն աւանդուած հին դրութիւնը, պէտք է դադրիլ համայնքային պատկանելիութեան վրայ հիմնուած մտածելակերպէն եւ մտածելու գործել իբրեւ Լիբանանցի միայն, ընդունելով որ կառավարական աթոռները կը պատկանին բոլոր լիբանանցիներուն հաւասարապէս՝ առանց կրօնական, դաւանական եւ համայնքային խտրութեան, որ չկան մենաշնորհեալ դասակարգեր ու անհատներ, որ Լիբանանը կը պատկանի բոլորին ու զայն կառավարողները՝ խորհրդարանի անդամէն մինչեւ հանրապետութեան նախագահ՝ կ'ընտրուին ժողովրդական քուէարկութեամբ:

Այս իրականութիւնը որքան շատ հասկանաւ մեր մենաշնորհեալ մարոնիթ եղբայրները, այնքան լաւ կ'ըլլայ թէ իրենց, թէ երկրին եւ

# ԽՕՍԸ ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Օգոստոս ամսուան ընթացքին անակնկալ կերպով սրտի չափազանց լուրջ գործողութեան ենթարկուեցան: Բարձրեւել Ս. ստուած Իր նախախնամութեան օրհնութեամբ մեզի պարգեւեց նոր կեանք մը:

Գործողութենէն որոշ ժամանակ ետ, այժմ կամաց-կամաց կը վերագտնենք մեր առողջութիւնը եւ կը փորձենք շարունակել մեր հոգեւոր եւ ազգային առաքելութիւնը:

Կ'ուզենք մեր սրտագին երախտագիտութիւնը յայտնել բազմաթիւ ծանօթ եւ անծանօթ անհատներու, որոնք իրենց աղօթով եւ բարի գգացումներով մեզի առողջութիւն մաղթեցին: Հիւանդանոցին մէջ, ապա տուն վերադառնալէ ետ, ստացանք բազմաթիւ ծաղիկներ, նամակներ, քարտեր եւ հեռագրային առողջութեան մաղթանքներ:

Կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իր աղօթներուն եւ առողջութեան բարի մաղթանքներուն համար: Կ'ուզենք մասնաւորաբար մեր շնորհակալութիւնը յայտնել Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գեորգ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, իր յանախակի այցելութեանց, աղօթներուն եւ բարի մաղթանքներուն համար, Գեորգ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանին եւ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, հոգեւորականներուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, Միացեալ Նահանգներէն, Եւրոպայէն, Հարաւային Ամերիկայէն եւ Հայաստանէն իրենց աղօթներուն եւ առողջութեան բարի մաղթանքներուն համար:

Կ'ուզենք նաեւ մեր շնորհակալութիւնը յայտնել Կլէմէտիի Ատվէրֆիսի հիւանդանոցի անձնակազմին, իրենց մասնագիտական եւ արդիւնաւէտ ծառայութեանց համար, մեր անձնական բժշկներուն, Տօքթ. Յարութ Մեսրոպեանին, Տօքթոր Ոնգարչիք Մարուսիին, Տօքթոր Ջէյմս Մրֆֆերսընին, Տօքթոր Ժան Փիէռ Անթաթիին, Տօքթոր Նարինէ Յարութեանին, Տօքթոր Զարմէն Իսրայէլեանին իրենց գուրգուրանքին եւ հոգատարութեան համար: Կ'ուզենք մասնաւորաբար մեր խորունկ շնորհակալութիւնը յայտնել մեր բոլոր՝ Տիկին Արշակունի Դաւիթեանին, որուն քաջատիկ խնամքին եւ գուրգուրանքին արժանացանք մեր հիւանդութեան ամբողջ շրջանին, մեր գերդաստանին եւ մեր զարմիկներուն՝ Տօքթորներ Աւետիս եւ Արա Դաւիթեաններուն:

Մեր մաղթանքն է, որ Ս. ստուած բոլորիս պարգեւէ առողջութիւն եւ մտքի ու հոգիի անդորրութիւնը:

**Սիրով եւ աղօթաբար՝  
Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեան  
Դեկտեմբեր 10, 2007**

\*\*\*\*\*

## WORDS OF APPRECIATION

During the month of August, I underwent an urgent, unexpected and serious cardiac surgery. Heavenly Father with his compassionate blessing granted me a new life.

After the operation, I have been gradually recovering my health and I am making efforts to continue my spiritual and national obligations.

I would like to express my heartfelt gratitude to many known and unknown individuals, who with their prayers and good wishes wished me a speedy recovery. In the hospital and thereafter at home, I received many flowers, letters, cards and telephone calls wishing me good health.

I would like to express especially my heartfelt gratitude to His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of all Armenians for his prayers and good wishes for my speedy recovery. I would like especially to express my appreciation to His Eminence, the primate of the Western Diocese, Archbishop Hovnan Derderian for his visits, prayers and good wishes. His Eminences Archbishop Khajag Barsamian and Archbishop Moushegh Mardirossian, to Clergy, organizations and individuals from United States, Europe, South America and Armenia for their prayers and good wishes for my recuperation.

I would like to Express my gratitude to the personnel of Glendale Adventist Medical Center for their professional and efficient service, my personal physicians, Dr. Harout Mesrobian, Dr. Onkarjit Marwah, Dr. James McPherson, Dr. Jean-Pierre Antaki, Dr. Narine Arutyunyan and Dr. Zarmen Israelian for their highly competent care. I cannot thank enough to my sister, Mrs. Arshagoughi Tavitian for her exceptional care during the period of my sickness and to my nephews, Drs. Avedis and Ara Tavitian, for their genuinely warm attention and care, and my entire dynasty.

It is my prayer that the Heavenly Father grant good health and tranquility of mind and soul to all of us.

**With Prayers and Blessings,  
Archbishop Vatche Hovsepian  
December 10, 2007**

ժողովուրդին համար ընդհանրապէս եւ նման հասկացողութեան մը գալու ինչ աւելի լաւ առիթ կայ, քան Նոր Տարին: Այդ գիշեր համբուրուեցէք իրարու հետ, ոչ այն կեղծ ու դաւադիր համբուրով, որ դիւանագիտական առիթներով կը կատարուի, անկեղծ, իսկական համ-

բուր՝ հայերէն այս բառին բովանդակ իմաստով - համ եւ բոցը: Եւ այդ համբուրը թող ըլլայ ձեր ամանորեան սեղանները շէնցող ընտիր լիբանանեան օղիին աղանդերը:  
Համբուրով օծուած Շնորհաւոր Նոր Տարի:

ԽՈՐԵՐ

ՆԱ ԵՒ ՆԷ ՇԵՌՈՒԿՍԱՑՈՅՑԻՆ ԱՌՋԵՒ (ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԽՈՐԵՐ)

Մարդը միայն մեկ բռնակալ ունի՝ տգիտութիւնը:

ՎԻԿՏՈՐ ԳԻԻԳՕ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

ՆԱ, - Է՛հ, Պրն. Ղուկաս, տարի մըն ալ գլորեցիր...: Մինչ երիտասարդները եւ երեխաները երջանկութեան մէջ են տարի մըն ա՛լ աւելի մօտենալով հասունութեանը, մենք, տարիք չալկածներս աչքերնիս աւելի յաճախ կ'ուղղենք տափարակ, կանաչ տարածութեան կողմը...: Նայէ կնիկ, նայէ, սա թէլեվիզոնին մարդուն նայէ, որ 80ը անց լեռնցի մըն է, հազիւ 50 տարեկան կրնաս տալ:

ՆԷ, - Դուն ալ քու տարիքդ չես ցցնէր, դերդ մի ըներ եւ մի մոռնար, որ ան Հայաստանի լեռներուն մէջ կ'ապրի եւ բնական ուտելիքներով կը անանի...: Հայդէ, հայդէ, գործիդ գլուխն անցիր, քիչ վերջ թոռներդ պիտի գան, սա փասթըրման եւ սոճուկը կտրտէ:

ՆԱ, - Է՛, թող գան, ի՞նչ ընենք, թող իրենք սորվին վերջապէս, փասթըրմա կտրտելն ալ արուեստ է: Կը չիշե՞ս Կեսարացիին ըսածը. «փասթըրմայիս գողցուիլը հոգս չէ, բայց գողը գիտէ՞ արդեօք փասթըրմա կտրել...»:

ՆԷ, - Ատոր համար է, որ պատրաստի, կտրտուած, ամբալաժ եղած փասթըրմա չես առներ: Ամէն խենթութեանդ վրայ ալ, երեւանէն փասթըրմա կտրելիք դանակդ բերիր, եւ ահա գրեթէ 40 տարի տխմար սովորութենէդ վազ չես անցնիր եւ միայն այդ դանակն է, որ կ'օտագործես ապուխտ կտրելու ատեն:

ՆԱ, - Էրկար՛ր ըրիր կնիկ, երկար, ինչ է, կ'ուզէիր, որ օրուան երիտասարդներուն նմա՞ն ըլլայի...: Ո՛չ, տիկինս, այսօրուան երիտասարդութիւնը անսկզբունք է, միտքով եւ մտածումով ալ թափառուն: Չէ՛, տիկինս, ես ինչ որ տեսած եմ մեծերէս՝ կ'ուզեմ պահել գանոնք սրբօրէն: Հիմակուան ջահել-ջուհուները բնաւ մտահոգուած չեն աւանդոյթը պահել...: նայէ, նայէ, սա թէլեվիզոնի վրայ երիտասարդներուն նայէ, թէ ինչպէս կը կուռին աղջկան մը համար...:

ՆԷ, - Օ, Ատուած իմ, գիրար կ'ապտակեն: Խեղճ Ֆելիքսը ընելիքը չի գիտեր, մէկ անոր կ'ուզէ գսպել, մէկ միւսին: Լաւ է, որ կուռարարներուն հայտնաբերող թելեվիզոնի դիտողներուն լսելի չըլլալու համար, օտար ձայնով մը

կը խլացնէ անոնց պոռչտուքը եւ քեաֆուր-քիւֆուրները:

ՆԱ, - Մի խօսիր, մի խօսիր...: արդէն միշտ, ամենակարեւոր լսելի տեղերուն գեղգեկութիւնդ կը բռնէ, կեցիր վայրկեան մը մտիկ ընենք... Տղան կը պոռայ առջկան երեսին.

«Դու աղջիկ չես, օրիորդ չես, ես պառկած եմ հետդ, ուրիշներ ալ, մէկ-մէկ գիտեմ անոնց»:

Աղջիկը կը պատասխանէ. - Ես շուտով Ամերիկա եմ մեկնում իմ նոր սիրածի հետ: Այնտեղ՝ աղջիկ-մաղջիկ հարցնող չկայ, դա յետամնացութիւն է...

ՆԱ, - Լսեցի՞ր անուշիկ տիկինս...: հոս աղջիկ-մաղջիկ չի կայ եղեր եւ ինծի պէս եղողները յետամնաց են օրիորդի հետ ամուսնացած ըլլալուն համար:

ՆԷ, - Շիտակը, Ղուկաս աղա, չի վայելեր երեւանին, որ ասանկ հաղորդումներ կու տայ: Մինչ, մենք հոս բարոյականութիւն կը քարոզենք, հոն՝ անբարոյականութեան «դասեր» կը տրուին, եկուր եւ հասկցիր, թէ ինչ գիծի եւ ուղղութեան պիտի հետեւի երիտասարդութիւնը:

ՆԱ, - Ինչ գիծ, ինչ ուղղութեան թիւն հանրամ, բաւ է, որ մարդ իրեն ուրախ եւ երջանիկ գգայ եւ այդ գգացումները ունենալ ճիգին մէջ, որեւէ խտրութիւն չդնէ: Բնաւ կարեւոր չեն միջոցները...: ողջ ըլլան ծնողները:

ՆԷ, - Նայէ՛, նայէ՛ Ղուկաս արապար...: սա ջլթիկին նայէ, կարծես արաբական քապարէի պարուհի մը ըլլայ...

ՆԱ, - Այսինքն, սա լաթի կտորն ալ եթէ առջեւէն առներ, աւելի ցցուն չէի՞ն ըլլար երգչուհին սրունքները, միեւնոյնն է, ամէն բան մէջտեղն է...

ՆԷ, - Պիտի ցնծայիր, այնպէս չէ՞...: անամօթ, ինչ է, երիտասարդութիւնդ միտքդ ինկաւ, թէ եւ այն ատեն ալ բան մը չէիր, գէթ ինծի համար...: տարիքդ ամչցիր, չամչըցած, այս տարիքիդ անգամ աչքդ չես կտրեր ատոր-անոր սրունքները դիտել: Ամօթ է, ամօթ, չխայնած...: աղջիկը ատանկ ուզեր է, ատանկ հագուեր է...

ՆԱ, - Ի՞նչ, ինչ ըսի՞ր, աղջիկ մը...: օրիորդախառն կնիկ ըսէ: Օրիորդ-մօրիորդ չմնաց այլեւս...: քիչ առաջուան պատկերը չէ՞ս չիշեր: Ան ջլթիկը Ամերիկա

պիտի գայ, որպէսզի ամուսնանայ, հոս աղջիկ, օրիորդ հասկացութիւն չի կայ եղեր: Խենթեալիք բան է բէ, ինչ օրերու հասանք:

ՆԷ, - Առաջուան կարմիր խնձորը մի փնտուր ամուսինս. ոչ հոս կայ, ոչ ալ հոն...: օտարածին, խառն ամուսնութիւններն ալ գլուխն առեր գացեր են:

ՆԱ, - Չե՞ս չիշեր կնիկ, անցեալ շաբաթուան հաղորդումներէն մէկը, որուն մէջ, երիտասարդ հայուհի տիկինը մեծ ոգելորութեամբ եւ հպարտութեամբ կը պատմէր թուրքին հետ ամուսնանալը եւ մահամետական կրօն ընդունիլը:

ՆԷ, - Այ՛ո, այ՛ո, ի՞նչպէս չեմ չիշեր, խեղճ Ազատ Գասպարեանն ալ ամերիկացի դուրս ելած, չէր գիտեր դատողութեան ո՞ր կողմապարհին մէջ թիմել այդ՝ հայ ազգին համար չափազանց վարկաբեկիչ եւ ստորնացուցիչ պատմութիւնը:

ՆԱ, - ... Օ՛հ, Աստուած իմ, սա ՌԵՏՐՕ չէ՞ղածն է նորէն... հասկըցանք պապամ, հասկըցանք...: ո՞րքան, քանի՞ անգամ կարելի է դիտել եւ մտիկ ընել նէնչիս տարուան փթթած ժապաւէնները: Ամիսը քանի անգամ հասկըցանք, բայց ոչ ամէն օր, եւ ան ալ նոյն յայտագիրը... կը բաւէ բէ, կը բաւէ...:

ՆԷ, - Ինչո՞ւ կ'այսպանես ՌԵՏՐՕ՞, ի՞նչ գէշ բան կայ ատոր մէջ, մեզի հին երգերը մտիկ ընել կու տան:

ՆԱ, - Չհասկցար կնիկս, ես ՌԵՏՐՕ՞ չէ որ կ'այսպանեմ, այլ օրուան յայտագիրները կազմողները, որ չափի գգացողութենէ գուրկ մարդիկ են...: Վերջերս, ԵՐԿՈՒ ԱՍՏՂ յայտագրին մէջ Երեւանցի շնորհալի երիտասարդ երգիչ-երգչուհիները որքան գեղեցիկ եւ հաճելի կատարումներով մեզի չիշել տուին 30, 40 տարի առաջ Հայաստանի մէջ յօրինուած սքանչելի, մշտապէս մեր ականջներուն մէջ նստած երգերը՝ բոլորովին նոր մշակումներով եւ արանժրմանով:

ՆԷ, - Շիտակ ես ամուսինս: Հապա ի՞նչ կ'ըսես կարգ մը անհետաքրքիր հաղորդումներու մասին, որոնք կը կրկնուին օրուան մէջ քանի անգամ, եւ կարծես թէ մասնաւոր Սփիւռքին համար ստեղծուած ըլլան: Ի՞նչ է, մեզի ապուշի, թէ՛ տգէտի տեղ դրած են: Ո՞ր դարու մէջ կ'ապրինք, ինչ է, Սփիւռքը անմշակ, աշխարհի անցուղարձէն անտեղեակ տարածք կը նկատեն:

ՆԱ, - Միշտ ատանկ եղած է, մենք ստորին դասին կը պատկանինք...: անոնք վերն են, մենք՝ վարը: Դժուար է երեւակայել ան-

գամ որ մարդոց հոգեբանութիւնն անգամ չէ փոխաւած, մենք նոյն ախպար-ախմախներն ենք, թէ եւ 60 տարիներ անցած են այդ պօզալի օրերէն:

ՆԷ, - Գոցէ պէ, գոցէ սա հեռատեսիլ կոչուածը...:

ՆԱ, - Կեցիր, կեցիր, քիչ վերջ լուրեր պիտի տան Երեւանէն:

ՆԷ, - Ի՞նչ լուր պիտի տան, նորէն գիրար պիտի չախեն, մէկը միւսին վար պիտի գարնէ, որ ինքն առաջ անցնի: Եկուր տէ մէջէն ելիր, ժողովուրդն ալ շփոթ վիճակի մէջ է: Իննը թեկնածու կայ, որո՞ւն ընտրէ...:

ՆԱ, - Որուն կ'ուզէ թող ընտրէ, ինծի համար կարեւորը հայրենի ժողովուրդիս բարւոք վիճակն է եւ երկրիս ապահովութիւնը: Այս տարի Սպիտակի եւ Լենինականի երկրաշարժի 20-ամեակն է, եւ կրնա՞ս երեւակայել, որ մինչեւ օրս դեռ վեց հազար ընտանիքներ փայտէ տնակներու մէջ կ'ապրին:

ՆԷ, - Կրնամ երեւակայել անոնց անմիթար վիճակը, մանաւանդ որ հիմա ձմեռ է, վառելիք չկայ, եւ ինչպէս միշտ սոսկալի ցուրտ կ'ընէ Շիրակի դաշտին կողմերը:

ՆԱ, - Դարձուր, դարձուր սա հեռատեսիլին կոճակը, նայինք եւրոնիւզին մէջ ինչ կայ, ինչ կ'անցնի, կը դառանք Միջին Արեւելիքի մէջ:

ՆԷ, - Ի՞նչ պիտի դառնայ, նորէն ռմբահարում, նորէն անմեղ մեռեալներ, նորէն ահաբեկչութիւն, մէկ խօսքով, ամբողջ աշխարհը խառն վիճակի մէջ է: Ես մեր երկրին, մեր ժողովուրդին մասին է որ կը մտածեմ...:

ՆԱ, - Իրաւունք ունիս սիրելիս, մեր երկրին վիճակը իսկապէս որ նախանձելի չէ: Ես մշտապէս կը չիշեմ ժողովուրդական առածը, որ կ'ըսէ. «Չըլլայ անանկ, որ երկու ցուլեր իրարու հետ կուռին եւ մէջտեղէն էլը վերանայ...»:

ՆԷ, - Եկուր մէկ կողմ ձգենք սա փոլոթիքան էրիկս, արդէն ամէն մարդ սա օրերուս փոլոթիքայով կը զբաղի. մէկը սանկ կ'ըսէ, միւսը՝ նանկ:

ՆԱ, - Մէկ խօսքով ըսել կ'ուզես, թէ մենք զիրար չե՞նք հասկընար...:

ՆԷ, - Եթէ ատանկ հասկցար, ուրեմն՝ ճիշտ հասկցած ես: Եթէ իրարու հասկըցած ըլլային, այս աշխարհին ծայրը չէինք հասներ:

ՆԱ, - Իրաւ որ, կնիկս: Ես միշտ կը մտածեմ, թէ աշխարհիս վրայ կա՞յ մեզի պէս ուրիշ երկիր մը, որուն գաւակներուն երկու

Մար.ք էջ 29

Advertisement for A.B.A. Insurance Services featuring the text 'Season's Greetings' and 'Մոնախան Օպտիմալ Վերսիոյ' along with contact information: 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# Ս.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿ

## ԴԱՄԱՍԿՈՍ

### Ս.Դ.Շ.Կ.-Ի 120-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ

Ս.Դ.Շ.Կ.-ի 120-ամեակի առիթով, Դամասկոսի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը կազմակերպած էր ազգային եւ յեղափոխական երգերու ճոխ փառատօն մը, Հինգշաբթի, 6 Դեկտեմբեր 2007ին, երեկոյեան ժամը 9:00ին Ռուսական մշակութային կեդրոնին մէջ: Հանդիսութեան ներկայ էին Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան՝ բարեջան Առաջնորդ Դամասկոսի թեմի, Գերայ. Տ. Յովսէփ Եպս. Արնութեան՝ Առաջնորդ Կաթողիկէ հայոց, Ս.Դ.Շ.Կ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ ընկ. Սեդրակ Աճէմեան, Հայաստանի Ս.Դ.Շ.Կ.ի վարիչ Մարմինի ատենապետուհի, ընկերուհի

որոնք իրենց ներդաշնակ նուազներով անբացատրելիօրէն ճոխացուցին եւ խանդավառեցին բոլոր ներկաները:

Օրուան բեմավարն էր Հ.Մ.Մ.ի ատենապետ՝ ընկ. Անդրանիկ Մարաշեան: Փառատօնը սկսաւ յոտնկայս սուրիական քայլերգով, ապա Ս.Դ.Շ.Կ.ի քայլերգով: Արաբերէնով բացման խօսքը արտասանեց ընկերուհի Լորա Շիրինեան: Հայերէն լեզուով բացման խօսքը կատարեց ընկ. Անդրանիկ Մարաշեան: Ան ողջունելով ներկաները, կուսակցութեան պատմական ներածականը ներկայացուց ներկայ ժողովուրդին, անդրադառնալով կու-

Տիկ. Անուշ Մարաշեան ապրումով արտասանեց՝ Աւետիք Իսահակեանի «Մեծ Յաղթանակի Օրը»: Բարձր տրամադրութեամբ բեմ բարձրացաւ յայտնի երգիչ՝ ընկ. Գէորգ Գատէհճեանը, եւ թնդացուց իր զեղեցիկ եւ թովիչ ձայնով



Ս.Դ.Շ.Կ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեան

բարձրացաւ թեմիս բարեջան առաջնորդ՝ Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը իր սրտին խօսքը փոխանցելու: Ան ըսաւ. «Յոբելեաններ կան որ աղամանդեաց կը կոչուին, յոբելեաններ՝ որ ոսկէ, իսկ ես այս յոբելեանը կը կոչեմ արմատաւորուած: Այն կուսակցութիւնը կամ կազմակերպութիւնը որ 120 տարիներ շարունակած է ապրիլ եկեղեցիներ եւ դպրոցներ հիմնելով եւ պահելով, իր արմատները տարածելով, ան երբեք չի՛



Դամասկոսի թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան

խանդավառելով ներկաները շարք մը ազգային եւ յեղափոխական երգերով: Ապա բեմ բարձրացաւ ընկ. Սամուէլ վարդանեանը իր զերծ ձայնով ներկաներուն միտքն ու սիրտը պահ մը անջատեց, տանելով հեռուները դէպի Մայր Հայաստան՝ դէպի պատմական գրաւուած հողերը: Երկու երգիչներն ալ իրենց ճոխ կատարումներով եւ ապրումներով խանդավառեցին ու տաքցուցին սրահը հայկական հոգիով եւ բարձր տրամադրութիւն պարզելով բոլոր ներկաներուն: Դարձեալ բեմ բարձրանալով տիկ. Անուշ Մարաշեան արտասանեց Գէորգ Էմինի «Սասունցիների Պարը»: Յատկանշական էր երիտասարդներուն խանդավառութիւնը, անոնք բարձր տրամադրութեամբ մասնակցեցան երգեցողութեան եւ հուրաներով: Վերջին երկու երգերու ընթացքին անոնք կուսակցութեան դրօշակները ճոճելով բեմ բարձրացան եւ միանութեան շուրջպարը պարելով բեմ հրաւիրեցին ընկ. Սեդրակ Աճէմեանը, ընկ. Լիւսմիր Սարգիսեանը, ընկ. Հրաչ Շիրինեանը եւ Դամասկոսի կուսակցութեան բոլոր ղեկավարները:



Երգիչ՝ Սամուէլ վարդանեան

չորնար այլ աւելի ընդարձակելով իր արմատները, իր առաքելութիւնը կը շարունակէ»:

Սրբազան հայրը գնահատեց արուեստագէտ երգիչներուն զեղեցիկ կատարումները եւ յայտադիրի վրայ բոլոր բաժին վերցնողները: Ապա Սրբազան հօր պահպանչով վերջ գտաւ անկրկնելի 120-ամեակի երգերու փառատօնը, քաղցր ապրումներ ձգելով մեր յիշողութեան մէջ:



Հանդիսութեան ներկայ հիւրերը

Լիւսմիր Սարգսեան, Դամասկոսի Ս.Դ.Շ.Կ.ի վարիչ Մարմնի ատենապետ՝ ընկ. Հրաչ Շիրինեան, Հայկէպի Հ.Մ.Մ.ի ատենապետ՝ ընկ. Վազգէն Մեսրոպեան, բարերար եւ քաղաքական գործիչ՝ ընկ. Վազգէն Գալթաքճեան, Տ. Աբգար Քհնյ. Քահնէճեան, Տ. Հայրի Քհնյ. Թանաշեան, ինչպէս նաեւ հոգեւորականներ, ազգային մշակներ, հասարակական գործիչներ, հիւրեր, եւ Հ.Մ.Մ.եան մեծ ընտանիքը:

սակցութեան արձանագրած պատուաւոր նուաճումներուն՝ հիմնուելէն մինչեւ օրս:

Բացման խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Ս.Դ.Շ.Կ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը 120-ամեակի պատգամը փոխանցելու: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Հնչակեան կուսակցութիւնը 120 տարեկան աշխույժ երիտասարդ է ոգիով»: Ան մէջբերեց իր խօսքին մէջ Հայաստանի ընտրութիւններուն առիթով. «Հայաստանի նախագահական ընտրութիւններուն մեր թեկնածուն է, մեծարդոյ՝ Լեւոն Տէր Պետրոսեանը, մենք մեր ձայնը իրեն պիտի տանք, իմ փափաքս է որ ընտրութիւնները ըլլան արդար եւ անշահախնդիր, վասն հայրենիքի զարգացման եւ բարօրութեան»:

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS  
**ARABIAN NIGHTS**

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS JELINA AND THE SAHLALAH DANCERS

- authentic cuisine
- full hookah bar
- VIP membership
- full cocktail bar
- live belly dancing
- live music and DJ

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

**ՆԵՅԼ ՍԻՄՈՆԻ «ՇՇՈՒԿՆԵՐ» ԹԱՏԵՐԱԽԱՂԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Շաբաթ 15 Դեկտեմբեր, 2007, կ.վ. ժամը 8:00ին, ներկայ գտնուեցանք Հ.Բ.Լ.Միութեան Փաստինայի թատերասրահին ներս «Մարի Մանուկեան» վարժարանի թատերական խումբի կողմէ ներկայացուած Ամերիկացի գրող Նէյլ Սիմոնի «Շշուկներ»ը թատերախաղին: Տարակոյս չունէինք, որ որոշ անակնկալներու առջեւ կրնայինք գտնուիլ հոն՝ լեզուի, նիւթի, բարձրու համընկման, մատուցման եւ խաղարկութեան տեսակէտէն, ինչ որ, ընդհանրապէս կը պատահի բոլոր թատերախաղերու պարագային:


Նէյլ Սիմոն, որուն գործերը, թող որ լայն տարածում արձանագրած են տեղական բեմերու վրայ, խոշոր անձանօթ մըն էր հայ շրջանակին համար: Երկրորդ՝ խաղարկութիւնը պիտի կատարուէր անգլերէն լեզուով, որ կրնար խաղարկութեան նիւթին ընկալման եւ հաղորդականութեան գծով որոշ դժուարութիւններ յարուցանել: Երրորդ, այդ հաղորդականութիւնը կրնար առաւել եւս բարդանալ երբ նկատի կ'ունենայինք, որ թատերախաղը երգիծական էր, ուստի, ոճային երգիծական դարձուածքներ կրնային խորթ, այլ տափակ թուիլ հայ հասարակութեան: Չորրորդ՝ դերակատարները, ազգային վարժարանի մը թատերական խումբի նորահաս, այլապէս անվարժ երիտասարդ-երիտասարդուհիներ պիտի ըլլային...:

Պահանջկոտ պէտք էր ըլլայինք:

Նէյլ Սիմոնի «Շշուկներ» թատերգութեան նիւթը կ'ընդգրկէր Չարլի եւ Միրա Պրուքներու, Նիւ-Եորքի՝ Ըննետօ կոչուած արուարձանի մէջ գտնուող տունը: Չարլի եւ Միրա ամուսնու ընթրիքի հրաւիրած են ունեւոր խաւի գոյգեր, միասնաբար տօնախմբելու համար իրենց ամուսնութեան տասներորդ տարեդարձը:

Քրիս Կորմանի (ձինա Շիրինեան) եւ Քէն Կորմանի (Արման Քիզիրեան) ժամանումին՝ կը պարզուի տհաճ, այլ մտահոգիչ երեւոյթ մը: Ո՛չ սպասաւոր եւ ո՛չ տանտիրուհի, ոչ մէկը կար տունը: Իրենց հետախուզութիւններէն ի յայտ կու գայ նաեւ այն, թէ տան տէրը, որ Նիւ-Եորքի քաղաքապետի օգնականն էր, անձնասպան եղած է... Կատակերգութիւնը կ'սկսի այն վայրկեանէն, երբ Հրաւիրեալներէն՝ վերոյիշեալ ծանօթ առաջին գոյգը, ամէն ջանք կը թափեն՝ նոր եկող հրաւիրեալներէ՝ մինչեւ տեղական ոստիկանութիւն եւ լրատուական միջոցներ, գաղտնի պահել ապարանքէն ներս տիրող թնձկալի մթնոլորտը, թող որ շշուկներ տակաւ մեղադրանքի փորձութեան կ'ենթարկեն գիրենք: Անշուշտ, կացութիւնը պիտի բերեղանար ապարանքի սենեակներէն մէկուն մէջ արգելափակուած Տանտիրուհիի, Միրա Պրուքի յայտնաբերումով... Մեր սկզբնական մտավախութիւնները ի դերեւ ելան:

Ներկայացումը, որ կը բաղկանար երկու արարներէ՝ ընթացակ հեղասահ, հաղորդական եւ առկախութեամբ (suspense): Մեր երիտասարդ դերակատարները, որոնք անթերի սորված էին իրենց դերերը, համարձակ էին իրենց շարժուձեւերուն, դէմքի խաղերուն եւ



իրենց արտայայտչական կերպերուն մէջ, որոնք կը թարգմանուին իրենց ստանձնած տիպարներուն լեզուամտածողական եւ նկարագրային գիծերու հարագատ դրսեւորումներով: Սա արժանիք մըն է, որ ձեռք ձգուած էր յամառ աշխատանքով, որուն համար պիտի արժէր գնահատել իւրաքանչիւր դերասան-դերասանուհի:

Մեր ուշադրութիւնը գրաւեցին Քրիս Կորմանի դերով՝ ձինա Շիրինեան, Քէն Կորմանի տիպարով՝ Արման Քիզիրեան, Քլեր Կանձի դերով՝ Նիլի Պապեան, իսկ Լեննի Կանձի տիպարով՝ Փաթրիկ Շամանաճեան: Հաճելի ներկայութիւն էին բեմին վրայ՝ Էրնի Քուզաքի եւ Քուքի Քուզաքի դերերով Մայքըլ Մաղաքեան եւ Անի Սըրմապէքեան, Կլէն Քոփերի եւ Քասի Քոփերի տիպարներով՝ Անտու Սուժեան եւ Ժամին Թերզեան: Վերջապէս, նոյնպէս հաճելի ներկայութիւն դարձան ոստիկաններ Ուէլքի եւ Փոլսնի դերերով՝ Մելիսա Սարակեան եւ Քոլլեթ Թորունեան:

Հանդիսատես հասարակութիւնը հեւիհեւ հետեւեցաւ «Շշուկներ» թատերախաղին, մշտապէս արձագանգելով բեմէն հաղորդուող ծիծաղաշարժ մէջ-բերումներուն, կատակախառն արտայայտութիւններուն, սրամտութիւններուն եւ փոխասացութիւններուն: Հանդիսատեսը ուրախ, խանդավառ էր թատերասրահին ներս:

Մեծ են այս տղոց եւ աղջիկներուն կատարողական յատկութիւնները: Անոնք կը յուսադրեն մեզ: Աշխատանքի իրենց թափը երաշխիք է վաղուան վարժարուեստագէտ-արուեստագիտուհիներու երեւան գայուն: Մեր գաղութը պէտք ունի մշակուած, թատերական դպրոցներէ հասած դերասաններու: Մեր թատրոնը պէտք ունի մասնագիտական ներդրումի, որպէսզի որակաւորուի մեր թատերական կեանքը մեր գաղութէն ներս: Մեր թատրոնի հիմնական կոչումն է մեր թատերական մշակոյթը ծանօթացնել հասակ նետող մեր նոր սերունդներուն: Ծանօթացնել տեղական օտար գանգուածներուն: Վերջապէս, սատար հանդիսանալ մեր ազգապահպանման գուպարին: Այս է օրուան հրամայականը:

Մեր գնահատութիւնը կ'երթայ նաեւ Հ.Բ.Լ.Միութեան «Մա-

Շաբ.ը էջ 31

**ՀԱՆԴԻՍԱԴՐՈՐ ՏՕՆԱԽԱՐՈՒԹԵԱՄ ԵՆՈՒԵՑԱԲ Ա. ՅԱԿՈԲ ՏՕՆԸ ՀԱՆԳԱՆԱԿՑՈՒԵՑԱԲ 70,000 ՏՈԼԱՐ**

Ն. Մ.

Մծբնացի Սուրբ Յակոբ Հայրապետի Տօնը, Լոս Անճելոսի Սուրբ Յակոբ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ նշուեցաւ հանդիսաւոր արարողութիւններով եւ պատշաճ տօնախմբութեամբ:

Արդարեւ՝ Շաբաթ, 15 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7ին, եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Մեծ Սուրբին նախատօնակը: Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան իր կողքին ունենալով սարկաւազաց դասը, հոգեգմայլ շարականներով եւ յատուկ աղօթքներով, պանծացուցին յիշատակը

յաւուր պատշաճի քարոզեց թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, աւրնթերակալութեամբ Արժ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեանի:

Լոս Անճելոսի ամէն շրջաններէն հաւատացեալներ փութացած էին Ս. Յակոբ Եկեղեցին, մասնակից դառնալու հոգեպարար արարողութեան եւ Ս. Յակոբի օրինակին հետեւելով իրենց սիրտն ու հոգին բանալու Աւետարանի լոյսին եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

Եկեղեցւոյ 66-ամեակի Անուանակոչութեան առթիւ, Ս. Պատարագի ընթացքին, Տէրունակ Աղօթքէն առաջ, «Ուրախ Լեր Ս. Եկեղեցի»



Մծբնացի Ս. Յակոբ Հայրապետին, որ մասնակցած էր Նիկիոյ Ս. Ժողովին, մաս կազմելով Արիստակէս Հայրապետի շքախումբին: Նախատօնակին կը նախագահէր Գերշ. Տ. Արսէն Արք. Պէրպէրեան:

Կիրակի, 16 Դեկտեմբերին, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ պատրագեց եւ

շարականի երգեցողութեամբ եկեղեցւոյ հովիւը, Ս. Խորան առաջնորդեց կիսասարկաւազ ձորձ Գիզիրեանը, որ երկար տարիներ կը ծառայէ եկեղեցւոյ: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հայցելով, Առաջ-

Շաբ.ը էջ 31

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**

**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**

Happy New Year  
Join Our New Music School in Pasadena  
By Experinedced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels  
Professional Digital Recording studio  
for all your audio recording needs

1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104  
Phones: (626) 797-8867 & (818) 599-1606  
and  
334 N. Central Avenue Unit 202  
Glendale, CA 91203

Phones: (818) 244-8244 & (818) 599-1606  
Visit us at: [www.musiclessons4u.com](http://www.musiclessons4u.com)

**ՏՈՒՆՅՈՒՆ**

**ՂԱՅ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՏՈՒՆԵՐԸ  
ԸՍՏ ՏՈՒՆՅՈՒՆՅԻ**

**2008 Նահանջ Տարուան Յատուկ**

**Ս. ԾՆՈՒՆԳ ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՈՒՄԱՐ 6 - Ս. ԶԱՏԻԿ ԿԻՐԱԿԻ ՄԱՐՍ 23**

**ԴՈԿՏ. Տ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ**

Յարգելի Խմբագիր ՄԱՍԻՍ Շաբաթաբերրի  
Տօթ. Արշակ Գազաննեան.

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան երջանկաբեր առիթներով կը շնորհաւորեմ Ձեզ, բերրի անձնակազմը, բոլոր կիցներն ու անձնուէր ընթերցողները մաղթելով բոլորիդ առողջութեամբ լի եւ յաջողութեամբ փայլուն երջանիկ տարի մը: Այդ գոյգ առիթներով շնորհաւորեմքի եւ սրտագին բարեմաղթութեանց հետ միասին կ'ուղարկեմ կայ գրութիւնը որպէս ուսանելի ուղեցոյց յառաջիկայ Նահանջ Տարուան եկեղեցական տօներու դասաւորման համար: Թող այս ըլլայ մեր բարի մաղթանքներուն բարգձմանը փոխան մեր շնորհաւորութեանց: Շնորհաւոր նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

**ՍՈՒՏԵ**

2008 տարին Նահանջ Տարի է որ կը պատահի չորս տարին անգամ մը Փետրուար ամսու 29-րդ օրուան յաւելումով: Այդ պատճառով Հայ եկեղեցւոյ Տօնացոյցը կը պարտադրէ գոյգ մը գիրեր որպէս Գիր Տարուոյ, փոխան մէկի, հրահանգելով որ առաջին գիրը կիրարկուի մինչեւ Բուն Բարեկենդան, եւ երկրորդը՝ տարուան մնացեալ տօներուն որպէս ուղեւոր: 2008 տարուան համար Տօնացոյցը կը նշէ ԳԲ տառերը որպէս Տարեգիր որուն հետեւողութեամբ կը ճշդուին մեծ ու փոքր տօներու թուականները համապատասխանաբար:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին տարուան ընթացքին յատուկ խմբաւորումներով դասաւորած է Տէրունի, Սրբոց, եւ Ազգային տօները, ու լայն տեղ տուած նաեւ Պահոց օրերուն համար: Տօներուն մեծագոյն մասը շարժական տօներ են, այսինքն տարուէ տարի իրենց թուականները կը փոխուին, որովհետեւ անոնք կը սահմանուին ԶԱՏԻԿԻ Կիրակի օրուան թուականին համեմատ: Անշարժ տօները, որոնք շատ քիչ են, կը տօնուին անշարժ թուականներով, առանց կախում ունենալու Զատիկի թուականէն, նկատի ունենալով որ անոնք Աստուածաշունչ Մատեանի տուեալներու հիման վրայ ճշդուած ըլլալով կը մնան անխախտ: Պահքի օրերը թիւով գերակշիռ են Տէրունի եւ Սրբոց տօներուն բաղդատմամբ: Ներկայ գրութիւնը նպատակ ունի ՏՈՒՆՅՈՒՆՅԻ երկու հատորներու ցուցմունքներով եւ հրահանգներով խմբաւորել այս տարուան 366 օրերու տօներն ու յիշատակելի դէպքերը, ներառեալ Պահքի օրերը:

**ԽՄԲԱՒՈՐՈՒՄ**

Հայ Եկեղեցւոյ տօները յատուկ դասաւորումով եւ իրենց ուրոյն նկարագրով երեք դասակարգերու վրայ բաշխուած են: Անոնք են.

Տէրունի Տօներ, որոնք Յիսուսի Քրիստոսի կեանքին եւ սնօրինութեանց պաշտամունքը կը կազմեն, ինչպէս նաեւ Ս. Կոյս Մարիամ աստուածածնի յատուկ յիշատակութիւնն ու յարգանքը կը մատուցանեն իր կեանքի այլազան հանգրուաններուն:

Սրբոց Տօներ, որոնք Սուրբերու յիշատակին ձօնուած յատուկ օրեր են, թէ՛ Սուրբ Գրական անձերուն ուղղեալ, եւ թէ՛ եկեղեցւոյ նախնադոյն վկաններուն եւ Հայրերուն յատուկ անուանումներով: Վերջինները եկեղեցւոյ կողմէ կանոնականացուած Սուրբերն են, որոնցմէ շատեր Հայ Եկեղեցին ընդունած է եւ պատիւ ընծայած որպէս վկաններ

Քրիստոսի եւ բարեխօսներ Անոր մօտ:

Պահոց Օրեր, որոնց նպատակն է ապաշխարանքով պատրաստ ըլլալ Տիրոջ կեանքի հանգրուաններուն արժանի դառնալու համար: Եկեղեցին մեծ կարեւորութիւն ընծայած է ՄԵԾ ՊԱՀՔԻՆ եւ առ հասարակ պահեցողութեան, որպէսզի հաւատացեալը կարենայ իր հոգեկան կեանքը մաքրելով մօտեցնել զայն Աստուծոյ:

**ՏԵՐՈՒՆԻ ՏՈՒՆԵՐ**

1. Յիսուս Քրիստոսի կեանքն ու Տնօրինութիւնները

- Ա) Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն ԿԻՐ. Յունուար 6 (անշարժ) Մկրտութիւն Տեառն ԿԻՐ. Յունուար 6 (անշարժ) Անուանակոչութիւն Տեառն ԿԻՐ. Յունուար 13 (անշարժ) Տեառնընդառաջ ԵՇ. Փետրուար 14 (անշարժ) Բ) Պայծառակերպութիւն Տեառն (Վարդավառ) Կիրակի, Յունիս 29 (Զատիկէն 14 շաբաթ ետք)

- Գ) Յիսուսի Յարութիւնը Ս. ԶԱՏԻԿ Կիրակի Մարտ 23 Աւագ Շաբաթ Մարտ 16-22 Համբարձում Հինգշաբթի Մայիս 1 Հոգեգալուստ Կիրակի Մայիս 11 Դ) Տարուան բոլոր Կիրակիները, բացի Ծննդեան Յունիվ. 6-ի եւ Անուանակոչութեան Յունիվ. 13-ի Տէրունի Կիրակիներէն: Նաեւ Մեծ Պահոց 6 Կիրակիներէն, ներառեալ Ծաղկազարդի Կիրակին, Փետրուար 10-Մարտ 16, որոնք ՊԱՀՔԻ Կիրակիներն են:

2. Սուրբ աստուածածնի Տօներ  
Ծնունդ Աստուածածնի Սեպտեմբեր 8 (անշարժ) Յղութիւն ի յԱննայէ Դեկտեմբեր 9 (անշարժ) Աւետումն Ապրիլ 7 (անշարժ) Ընծայումն Նոյեմբեր 21 (անշարժ) Վերափոխումն Կիրակի Օգոստոս 17 Գիւտ Գօտուոյ Կիրակի Օգոստոս 31 Գիւտ Տփոյ Կիրակի Յունիս 15

- 3. Խաչի Տօներ Երեւման Ս. Խաչ Կիրակի Ապրիլ 20 Վերացման Ս. Խաչ Կիրակի Սեպտեմբեր 14 Վարագայ Ս. Խաչ Կիրակի Սեպտեմբեր 28

- Գիւտ Խաչ Կիրակի Հոկտեմբեր 26
- 4. Եկեղեցւոյ Տօներ Նոր Կիրակի Կիրակի Մարտ 30 Աշխարհամատրան Կիրակի Ապրիլ 6 Վերացման Ս. Խաչ Կիրակի Սեպտեմբեր 14 Յաջորդող 6 օրերը Սեպտեմբեր 15-20 Կաթողիկէ Ս. Էջմիածնի Կիրակի Մայիս 25 Շողակաթ Շաբաթ Օգոստոս 16

**ՍՐՈՒՅ ՏՈՒՆԵՐ**

Հայ Եկեղեցին ՍՈՒՐԲԵՐՈՒՆ յատկացուցած է շաբթուան չորս օրերը՝ Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Շաբաթ: Կիրակի օրերը Տէրունի օրեր են եւ նուիրուած են Քրիստոսի Սուրբ Յարութեան: Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը պահքի յատուկ օրեր են:

89 Սուրբերը Աստուածաշունչէն քաղուած Սուրբերն են, Հին եւ Նոր Կտակարաններէն: Մնացեալները Եկեղեցւոյ առաջին հինգ դարերու Առաքելական Հայրերէն են որոնք ուղղափառ հաւատքը հաստատեցին ու Հաւատոյ Հանգանակը բանաձեւեցին: Հայ Եկեղեցին աւելցուց անոնց վրայ Ս. Գրիգոր Լուսաւորիչն ու իր շառաւիղէն

եկած հայ եկեղեցւոյ Հայրապետներն ու յաւելեալ Հայ Սուրբերը, հինգերորդ դարէն մինչեւ տասնը-հինգերորդ դարու տարածքին:

**ՊԱՆՈՅ ՕՐԵՐ**

Համաձայն Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին Պահքի յաւելեալ օրեր յատկացուած են հետեւեալ տօները կանխող օրերուն՝ համապատասխան տեւողութեամբ: Պահքի օրեր են.

- 1. Ս. Ծնունդի նախորդող 6 օրերը, (Դեկտեմբեր 30-էն մինչեւ Յունուար 4)
- 2. Առաջաւորաց Պահքի 5 օրեր (Յունուար 14-18)
- 3. Ս. Զատիկը նախորդող Մեծ Պահքի 48 օրերը, ներառեալ Ծաղկազարդն ու Աւագ Շաբաթը, (Փետրուար 4-էն մինչեւ Մարտ 22)
- 4. Պայծառակերպութիւնը կանխող 5 օրերը (Յունիս 23-27)
- 5. Խաչվերացը կանխող 5 օրերը (Սեպտեմբեր 8-12)
- 6. Եղիա Մարգարէի Պահքի 5 օրերը ամառնամուտին (Մայիս 12-16)
- 7. Ս. Գրիգոր Լուսաւորչի Պահքի 5 օրեր (Յունիս 2-6)
- 8. Վարագայ Ս. Խաչի Պահքի 5 օրերը աշնանամուտին (Սեպտեմբեր 22-26)

Շաբ.ը էջ 31



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- Individual and Family Plans
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company
- Medicare Supplement Plans

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**  
Authorized Independent Agent  
1807 W GLENOAKS BLVD. #202  
GLENDAL, CA 91201  
(818) 502-3233  
HARUT@EXCELHYE.COM  
WWW.EXCELHYE.COM  
CA Insurance  
License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ԱՇԽԱՐԿ - 2007

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 2007 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մարտնակուած էջ 13-էն

Տանք որոշ մանրամասնութիւններ.

Կայունութեան հարցը Հայաստանէն ներս կը ներկայացուի իբրեւ դրակն երեւոյթ: Խ. Միտիլինն ալ կայուն էր, տիրող բռնատիրական ընկերային պատճառաւ: Գիտենք թէ ո՞ւր հասաւ այդ բռնատիրական կայունութիւնը: Հայաստանի ինչպէս Ռուսաստանի պարագաներուն, իշխանութիւնը կեդրոնական հանգամանք ունի, ուրիշ ներս «ժողովրդավարութիւն» հասկացողութիւնը պարզապէս ցնորք է:

Մամուլի, թելեվիզիոնի, անհատական իրաւունքներու հետապնդման, եւ նման սկզբունքներ գործութիւն չունին: Այս կը վկայեն նոյնիսկ օտար, եւրոպացի դիտողները: Նաեւ ըստ վերջին տեղեկութեանց, տիրող իշխանութիւնը իր բոլոր միջոցներով կը փորձէ սարսափի միջոցով ստեղծել, բանաւոր կերպով կամ հեռախօսազանգերով, սպառնալ ընտրողներն, հակաակորդ թեկնածուին աջակցելու հարցով: Կը գործադրուին հոգեբանական ճնշում, անբեկում, սպառնալիքներ:

Այս է ներկայիս Հայաստանի ապահովութեան վիճակը:

Խօսք եղաւ ժողովրդավարութեան մասին: Ի՞նչ ժողովրդավարութիւն: Եթէ նախորդ ընտրութիւնները եւ այսօրուայ վիճակը նկատի ունենաք, կը նշանակէ անարգել ժողովրդավարութիւն հասկացողութիւնը:

Տնտեսական գետնի վրայ, Հայաստանէն ներս գոյութիւն ունի մոնոփոլիային դրութիւնը, արգելք

հանդիսանալով որ աստ մրցակցութիւնը իր օգտակար դերը ունենայ տնտեսութեան կարգաւորման մէջ: Իսկ ի՞նչ ըսել տոլարի շուրջ ստեղծուած խայտառակութեան մասին, երբ 580 դրամ արժէքէն ներկայիս տոլարը իջած է 230-ի եւ այս տարբերութիւնը առաւելաբար քաղաքական չարաչահութեան արդիւնք է:

Գալով արտաքին քաղաքականութեան, կարելի է միայն աչքի առջեւ ունենալ դարաբաղեան հարցի շուրջ Հայաստանի պարտուողական կեցուածքը, զիջումներու կարելիութեամբ եւ տրամադրութեամբ: Անդին, վստահ չենք թէ Հայաստան տակաւին կը հետապնդէ՞ «լրացուցիչ» կոչուած արտաքին քաղաքականութիւն մը, թէ յստակ ոչ մէկ արդիւնք տեսած է: Գալով ցեղասպանութեան եւ Թուրքիոյ հետ փոխ-յարաբերութեան հարցին, Հայաստանի իշխանութիւնները կը մնան ստուերոտ եւ անորոշ տրամադրութեան մը մէջ:

Վերջին քանի մը նկատումներ եւս: Ասոնք կը վերաբերին հայ քաղաքական աւանդական կուսակցութեանց վերաբերմունքին, Հայաստանի գալիք ընտրութեանց նկատմամբ:

Ս.Գ.Հ.Կ.ը կը մնայ կառչած իր այս ընկերային նկատմամբ կառուցողական ընդդիմադրութեան մը վիճակէն ներս: Միշտ ջատագոված է եւ իր 120-ամեայ տօնակատարութեանց առիթով, յստակօրէն դրսեւորած իր կեցուածքը, եւ կողմանից եղած է ժողովրդավարութեան հաստատման, ընկերային արդարութեան, ինչպէս նաեւ անհատի իրաւունքներու պաշտպանութեան

սկզբունքներուն: Ինչ կը վերաբերի գալիք նախագահական ընտրութեան, Ս.Գ.Հ.Կ.ը որդեգրած է Լեւոն Տէր Պետրոսեանի թեկնածութիւնը, այն ակնկալութեամբ որ միակ ձեւն է ներկայ ընտրութեան փոխարինելու աւելի արդար, աւելի մարդկայնական եւ աւելի ժողովրդավար ընտրութեամբ: Ասոր կարելիութիւնը կը տեսնէ Լեւոն Տէր Պետրոսեանի յաղթանակով: Ս.Գ.Հ.Կ.ը իր բոլոր կարելիութիւնները ի սպաս պիտի դնէ նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրեանի ընտրութեանց յաղթանակը ապահովելու համար:

Ի՞նչ կը վերաբերի Հ.Յ. Դաշնակցութեան, զարմանալի եւ հետաքրքրական վերաբերմունք մըն է որ կը նշմարենք այս կուսակցութեան մօտ: Կարելի է նկարագրել իբրեւ հոգեփոխութիւն, կամ փորձ դէպի վերադարձ իր ակունքներուն: Թերեւս նաեւ քիչ մըն ալ պատահապաշտութիւն: Երբ անցնող 10-ամեակին, իբրեւ քաղաքական ոյժ, Դաշնակցութիւնը գտնուած է տիրող այս ընտրութեան հետ լուծութիւն պահելով այդ ընտրութեան նկատմամբ, եւ շատ հաւանօրէն ալ օգտուելով այդ ընտրութեան համար յստակ է անոր կոպիտ, քափիթալիստական եւ դրամատիրական հանգամանքը: Դաշնակցութեան ներկայացուցիչը կը խօսի սոցիալիզմի մասին, մենաշնորհներու պահպանման իշխանական քաղաքականութեան մասին: «Դաշնակցութեան երրորդ ոյժ ըլլալու, որը պէտք է կարենայ այլոց հետ վերացնել թոյնը եւ ատելութիւնը հայաստանեան քաղաքական կեանքից»: Այս եւ նման

յայտարարութեանց մէջ, մանաւանդ Յրդ ընտրական ոյժ ըլլալու շուրջ, արդեօք կարելի չէ հարցնել թէ քիչ մը շատ ուշ մնացած չեն արդեօք: Երկար տարիներ իշխանութեան հետ գործակցելէ ետք, եւ նոյնիսկ ներկայիս երբ տիրող կուսակցութեան հետ գործակցութեան կարելիութիւնը հաստատելով, Դաշնակցական թեկնածուն նախագահութեան, վահան Յովհաննէսեան արդէն իսկ իր ձախողութեան ազդանշանը կու տայ: Ամէն պարագայի գովելի է Դաշնակցութեան այն տրամադրութիւնը որ «կողմ լինելով փոփոխութիւններին, մենք չենք գտնում որ դրանք պէտք է իրականացուեն ցնցումների կամ երկրում անկայունութիւն ստեղծելու միջոցով»:

Մաղթելի է որ տիրող ընտրութեան կարենայ որդեգրել ժողովրդավարական, թափանցիկ եւ արդար ընտրութիւններ կազմակերպելու սկզբունքը, որպէսզի ժողովուրդը իսկապէս կարենայ իր խօսքը ըսել երկրի ճակատագրի մասին:

Կը մնայ որ շատ մօտ ատենէն, Ռամիկավար Ազատական Կուսակցութիւնն ալ իր դիրքը որոշէ գալիք ընտրութեան նկատմամբ, որպէսզի յստակ ըլլայ իր կեցուածքը: Կը յուսանք որ այս կուսակցութիւնն ալ իր ընտրութիւնը կը կատարէ մեկնելով իր ազատախոհական, ռամիկավարական եւ ժողովրդավարական սկզբունքներէն:

Նոր Տարուայ առթիւ, մեր լաւագոյն մաղթանքները բոլորին, աւելի յաջող եւ աւելի խաղաղ 2008ը ունենալու համար:



**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

**CATERING FOR ALL OCCASION**

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



MOUHAMAD SALEM  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

**BELLY~DANCING**

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641

### ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

#### Շարունակում է 4-էն

նախով գայն կ'անուանէր «Խաղաղութեան իշխան» (Եսայի 9:6): Զաւարեայ, Յովհաննէս Մկրտիչի հայրը, Մեսիան, Յիսուս Քրիստոս, կը նկարագրէր, որպէս մէկը, որ «մեր ոտքերը խաղաղութեան նամբուն մէջ շտկելու կոչուած է» (Ղուկ. 1:79): Ասիկա այն խոստումն էր որ տրուած էր Բեթլեհեմի հովիւներուն երբ անոնք յսեցին հրեշտակներուն հոգեգմայլ համերգը, «փառք ի քարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հանութիւն» (Ղուկ. 2:14): Ծնունդը Աստուծոյ բերած խաղաղութեան յայտարարութիւնն է մարդոց:

Անոնք որ «Խաղաղութեան իշխան»ին բերած խաղաղութիւնը նաշակած են, կոչումունին սիրոյ եւ խաղաղութեան Աւետարանի դրօշակակիրները ըլլալու եւ մարդոց մէջ խաղաղութիւն եւ հանութիւն բերելու:

Երբորդ, Ծնունդով մեզի յայտնուած Աստուածը համայն տիեզերքի մեծագոյնն էր: Արարիչն էր արարածին: Ծնունդը Աստուծոյ սիրոյն էր մարդկութեան: Աստուած իր անպատմելի սիրովը՝ աշխարհ եկաւ Քրիստոսի մէջ, որպէսզի մեղաւոր մարդկութիւնը մեղքի տիղմէն ազատէ եւ վերականգնէ: Պօղոս Առաքեալ կը քաջատրէ Աստուծոյ այս իւրայատուկ սէրը՝ իր Կորնթացոց գրած բուրդին մէջ հետեւեալ ձևով. «Քանզի դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, թէ ինք ձեզի համար աղփատ եղաւ Ան որ հարուստ էր, որպէսզի Անոր աղփատանալով հարստանալ» (Բ. Կորնթ. 8:9):

Եթէ Ծնունդով արտայայտուած Աստուածային սիրոյ պարզեւր ընդունած է մէկը, չի կրնար միայն գայն իրեն պահել: Անպայմանօրէն, գայն պիտի րածնէ նաեւ ուրիշներուն հետ: Ան չի կրնար անձնատէր ըլլալ, այլ տուող եւ տրուող անձ մը: Եւ երբ մէկը տալու եւ տրուելու շնորհին տիրացած է, այդ անհատը կու տայ իր ժամանակէն, իր տաղանդէն, իր գանձէն, իր անձէն՝ ուրիշներու քարօրութեան եւ կեանքի քարելուման համար, կու տայ առատաձեռնօրէն, քաջօրութեամբ եւ գոհունակութեամբ:

Չորրորդ, Ծնունդով մեզի յայտնուած Աստուածը այն Աստուածն է որ մեր վրայ կը դնէ յատուկ յանձնառութիւն մը: Ան կը պատուիրէ որ իր հետեւորդները այս աշխարհի մէջ իր ներկայացուցիչները, գործակալները դառնան եւ իր կենդանի վկաները ըլլան: Վկայի մը գործը իր տեսածն ու գիտցածը պատմել է:

Յատկանշական է նկատել որ Բեթլեհեմի հովիւները որ իրենց հօտին պահպանութիւնը կ'ընէին հրեշտակաց խումբին քեյաղորութեամբ արտորմօք գացին, փնտրեցին եւ գտան նորածին Յիսուս Մանուկը: Իրենց այցելութենէն ետ վերադարձան իրենց տեղերը եւ սկսան պատմել այն բոլոր բաները, որոնք տեսան եւ յսեցին: Այլ խօսով, անոնք բնութագրեցին Յիսուսի Ծնունդը դարձուցին իրենց կեանքի առաջնահերթ գործը, իրենց անյետաձգելի պարտականութիւնը՝ կենդանի վկաներ դառնալով Մեծ Ծննդին:

Ծնունդով յայտնուած Աստուածը կը պատգամէ մեզի լիովին հասկնալու եւ ըմբռնելու Ծնունդի ոգին, ապրիլ եւ գործել այդ ոգիով եւ ապա գայն հոշակել արար աշխարհ: Իւրաքանչիւր Բրիտանացի «Հիմնադրող Աւետարան» ըլլալու կոչումն ունի: Այս մասին խօսածատեն Պօղոս Առաքեալ կը գրէ Կորնթացոց եկեղեցիին. «Մեր բուրդը դուք էք՝ նախնաւոր եւ կարգացուած ամէն մարդոց մէջ»:

Արդ, Սուրբ Ծնունդը թէ յայտնութիւն մըն է եւ թէ՛ մարտահրաւեր մը: Քրիստոսով Աստուած կ'այցելէ մեզ եւ ապա կը դրկէ մեզ իր վկաներն ու ծառաները ըլլալու:

Արդարեւ, բոլոր անոնք որ իրենց սրտերը Բեթլեհեմի հիւրընկալ մտորին պէս քաջած են Մեծ Ծննդի Արքային՝ անոնք լիովին ըմբռնած են թէ իրենց կոչումն է այդ քարի լուր եղող Յիսուսի պատգամաբերները ըլլալու: Անոնք նաեւ Քրիստոսի «ճաղեր լուծ» իրենց ուսին առած՝ օգնութեան ձեռքեր կարած են աղփատին, հիւանդին, տնանկին, որքին, որքեւ այրիին, գրկուածին եւ աղէտեալին: Ի մի քան, անոնք Քրիստոսի սիրոյ, փրկութեան եւ խաղաղութեան Աւետարանի քանքերն են ու գործակալները ըլլալու անզանցառելի պարտականութիւնը ստանձնած են:

ՎԵՐ. ԴՈՒՅՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ  
Գործադիր Տնօրէն՝ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

### ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԸԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ

#### Շարունակում է 19-էն

գոյատեւէ եւ կը հպարտանայ Մայր Հայրենիքի իրականութեամբ, իր կարելիութեան սահմաններուն մէջ պարտի շարունակել աջակցել հայրենակառուցումի սրբազան գործին: Այդ խիստ անհրաժեշտ է յոյսի, բարիի յաղթանակի, եղածը շտկելու, մանաւանդ պետութեան նկատմամբ հաւատք ու քաղաքացիական գիտակցութիւն սերմանելու տեսանկիւնէն: Լաւատեսութեամբ, մարդասիրութեամբ, ստեղծագործական նուիրումով ցեղասպանութեան հոգեխոցութիւնը եւ ցեղասպանին յաղթահարած հայ ազգը հրաշափառ յառնած ու հապէս հերոսաբար բարեփոխուած ազգ է: Դառցած է մեր պատմութեան ուղիներով ընթացող, մեր ճակատագիրը մեր գիտակցութեամբ կրետող Մաշտոցեան ազգ իր բոլոր բաղադրեալներով:

Մեր ազգը կ'ուզէ ապրիլ, մաքուր սրտով, Յիսուսի պատուէրներուն համաձայն, խաղաղութիւն գործել, աշխարհը դարձնել խաղաղութեան եւ կայունութեան խորհրդանիշ: Կեանքը լիաթոք շնչառութեամբ ապրելու աստուածընծայ երջանկութեամբ, սիրելով նոր յոյս եւ երազներ, եւ մաղթելով մեր աշխարհին խաղաղութիւն:

Թող Նոր Տարին 2008 թուականը եւ Յիսուսի Քրիստոսի Ծնունդը խաղաղութիւն բերէ համայն աշխարհին, քաջառողջութիւն ու նորանոր յաջողութիւններ ամէն ընտանիքէ ներս եւ Քրիստոսի սիրովը լեցուն մարդկութիւնը դառնայ մէկ սիրտ ու մէկ հոգի:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

### ՆԱ ԵՒ ՆԷ ԸՆՈՒՄՏԱՅՈՅՅԻՆ ԱՌՋԵՒ

#### Շարունակում է 24-էն

Երբորդը, եւ աւելին, երկրէն, Մայր Հայրենիքէն դուրս բնակի... Երբ, երբ պիտի մէկտեղուինք, որպէսզի մէկ երդիքին տակ հիւսնեք մեր բոյնը:

Բաւ է... նորէն դէմքը թթուեցաւ, մի վախնար ամուսինս, մեր ժողովուրդը տոկուն է եւ շատ փորձութիւններուն մէջէն անցած է, այս օրերուն ալ կը դիմանայ, միայն թէ մէկու մը քիթը չ'արուսի...

Նէ, - Օր մը կ'ըլլայ թերեւս, բայց մենք չենք տեսներ: Ելիր, շարժէ, շարժէ քիչ մը: Ամբողջ օրը քանափէին վրայ նստած, ֆըսըր-ֆըսըր սիկարա ծխելով, աչքը չեն հեռացուներ թեւելիզներէն: Ի՞նչ բանի կը սպասես, հրաշքներ չեն ըլլար, անոնք հեքիաթներուն մէջն են միայն:

ՆԱ, - Ա՞տ ինչ խօսք է անուշիկս, չըլլա՞ց գալիք նախագահական ընտրութիւնները ի մտի ունիս... բան մըն ալ պիտի չպատահի, կը տեսնաս...

ՆԱ, - Ո՛չ մէկ հրաշքի ալ չեմ հաւատար, կնիկս: Յուսամ, այս նոր տարուան ընթացքին, 2008 թուականին նոր լոյս մը կը բացուի Հայաստան աշխարհի երկնակամարին վրայ եւ մենք կը հասնինք մեր նպատակներու իրականացման գէթ նուազագոյնին...:

Նէ, - Հայտէ, հայտէ, վերջ քննարկումին, դեռ փասթըրման ալ չկտրտեցիր, շուտով Նոր Տարի է: Տունդ կը լեցուի գաւակներովդ եւ թոռներովդ: Առաջժամ կրնանք կոր պահել մեր աւանդութիւնը: Հայդէ, հայդէ, ելիր, ես ալ երթամ սարման շարժմ թեփախին մէջ: Շագանակը փուռը դնել չմոռնաս: Տղաքը շատ կը սիրեն Նոր Տարուան գիշերը շագանակ ուտել: Մէկ ժամէն Նոր Տարի է: Մէկ տարիով ալ ծերացանք էրիկս: Շնորհաւոր Նոր Տարի:

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**  
**Ի նպաստ**  
**Նոր Հաճնոյ Մեծն Սուրբատ դպրոցին**

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350  
 Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան  
 Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ  
 Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ  
 Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ին  
 Verdugo Hills Country Club  
 400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով  
 Նուէր՝ \$100  
 Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝  
 (626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax : -----

**Չեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**  
**massis2@earthlink.net**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄԱՐԶԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ԳՈՅՆՈՎ

### ԴՐԱԿԱՆ- 5

1.Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը Յունիսի 6-ին վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում 1:0 հաշուով պարտութեան մատնեց ընտրական Ա. խմբի առաջատար Լեհաստանին: Այս յաղթանակը իսկական ֆուտբոլային բուռն առաջացրեց Երեւանում, իսկ հանդիպումից յետոյ մի քանի հարիւր ֆուտբոլասերներ մինչեւ ուշ գիշեր Երեւանի փողոցներում վանկարկում էին՝ Հայաստան:

2. Ծանրամարտի Հայաստանի հաւաքականը Ստրասբուրգում կայացած Եւրոպայի առաջնութիւնում թիմային պայքարում գրաւեց առաջին հորիզոնականը: Ծանրամարտում հարուստ աւանդոյթներ ունեցող Հայաստանի համար, սա աննախադէպ յաջողութիւն էր: Հայաստանը ունեցաւ միանգամից 3-ական Եւրոպայի չեմպիոն եւ փոխչեմպիոն:

3. ԽՍՀՄ փլուզումից յետոյ առաջին անգամ Հայաստանի մարզիկները Բաբուում մասնակցեցին միջազգային մրցաշարի: Սեպտեմբերին Բաբուում կայացած ըմբշամարտի աշխարհի առաջնութեան ներկայ գտնուեց Հայաստանի 31 հոգանոց պատուիրակութիւնը: Առաջնութիւնը ցոյց տուեց, որ ատրպէյճանցիները ցանկութեան դէպքում կարող են ապահովել հայկական պատուիրակութեան անվտանգութիւնը:



4. Հայաստանի տղամարդկանց եւ կանանց շախմատի հաւաքականները յաջող մրցելոյթներ ունեցան Եւրոպայի առաջնութիւնում: Տղամարդիկ նուաճեցին արծաթէ, իսկ կանայք՝ բրոնզէ մեդալներ: Մեր շախմատիստները եւս մէկ անգամ ապացուցեցին, որ թիմային պայքարում բաւական ուժեղ են:

5. Առաջին անգամ միանգամից 2 ֆուտբոլային ակումբներ յաղթահարեցին եւրոպական թիմային խաղարկութիւնների որակաւորման առաջին փուլի արգելքը: Չեմպիոնների լիգայում նման յաջողութեան հասաւ «Փիւնիկը», իսկ ՈւեՅԱ-ի գաւաթի խաղարկութիւնում՝ «Միկան»:



Վերջինս նաեւ դարձաւ առաջին հայկական ակումբը, որին որակաւորման երկրորդ փուլում յաջողուեց գոնէ մէկ հանդիպում աւարտել յաղթանակով:  
**ԲԱՅԱՍՏԱԿԱՆ-5**  
1. Կեանքից հեռացաւ Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Եան Պորտերֆիլդը: Շոտլանդացի մարզիչը կարճ ժամանակահատուածում կարողացաւ ստեղծել հաւաքականը, որը խառնեց ընտրական Ա. խմբի մասնակիցների խաղաքարտերը: Պորտերֆիլդը դարձաւ մեր ֆուտբոլային հասարակութեան ամենասիրուած անձանցից մէկը եւ նրա մահուան լուրը ցնցեց ողջ Հայաստանին: Եան Պորտերֆիլդը միանշանակ Հայաստանը ընտրանին երբեւէ գլխաւորած լաւագոյն մասնագէտն էր:

2. Հայ մարզիկներից ոչ մէկին կրկին չյաջողուեց ոսկէ մեդալ նուաճել աշխարհի առաջնութիւններում: Նախաօլիմպիական տարում չուսնենալով ոչ մի ոսկէ մեդալ, մնում է չուսալ, որ Պեկինում կայանալիք 2008թ. օլիմպիական խաղերում մեր մարզիկները մարզական սիրանք կը գործեն:

3. Այս տարի որոշ մարզաձեւեր քաղաքականացուեցին եւ դարձան իշխանական կուսակցութիւնների նախընտրական պայքարի մի մասնիկը: Խօսքը վերաբերում է ծանրամարտին եւ շախմատին: Այս մարզաձեւի ներկայացուցիչները հանդէս գալով համապատասխանաբար «Բարգաւաճ Հայաստանի» եւ ՀՀԿ-ի օգտին՝ խորը հիասթափութիւն առաջացրեցին մարզասերների շարքում:

4. Աշխարհի արդէն նախորդ գաւաթակիր Լեոն Արոնեանը խիստ անյաջող հանդէս եկաւ աշխարհի չեմպիոն կոչման մրցաշարում գրաւելով ընդամենը նախափերջին տեղը: Յունուարին փայլելով վեյկ Ան

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

### ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 20-րդ եւ 21-րդ հանգրուաններու մրցումներուն արդիւնքները

Փորթսմութ - Սիտըլզպորո	0-1
Ուէսթ Յամ - Մանչեսթըր Եուն.	2-1
Էվըրթըն - Արսենալ	1-4
Պըրմինգհեմ - Ֆուլհամ	1-1
Չելսի - Նիւքեմըր	2-1
Տերաիֆաունթի - Պլէյպալըն	1-2
Թոթեմհամ - Ռիսինկ	6-4
Ուիկան Աթլ. - Ասթոն Վիլլա	1-2
Մանչեսթըր Ս. - Լիվըրպոլ	0-0
Սանտըրլէնտ - Պոլքըն	3-1



Ռիսինկ - Փորթսմութ	0-2
Արսենալ - Ուէսթ Յամ	2-0
Սիտըլզպորո - Էվըրթըն	0-2
Մանչեսթըր Եուն. - Պըրմինգհեմ	1-0
Ֆուլհամ - Չելսի	1-2
Պոլքըն - Տերաիֆաունթի	1-0
Պլէյպալըն - Սանտըրլէնտ	1-0
Ասթոն Վիլլա - Թոթեմհամ	2-1
Լիվըրպոլ - Ուիկան Աթլ.	1-0
Նիւքեմըր - Մանչեսթըր Ս.	0-2



### Առաջատար խումբերու դասաւորումը

Արսենալ	21	15	5	1	42-16	50
Մանչեսթըր Եուն.	21	15	3	3	38-11	48
Չելսի	21	13	5	3	33-16	44
Մանչեսթըր Սիթի	21	11	6	4	29-22	39
Լիվըրպոլ	20	10	8	2	34-13	38
Էվըրթըն	21	11	3	7	37-22	36
Ասթոն Վիլլա	21	10	6	5	37-27	36

Ձէէի սուպերմրցաշարում՝ Արոնեանը այնուհետեւ սկսեց ոչ կայուն խաղացողները եւ չարդարացրեց սպասելիքները:



5. Բռնցքամարտի Հայաստանի հաւաքականի անդամ Վաչագան Աւագեանը ազգային թիմի ճամբարից փախուստի դիմեց, ԱՄՆ-ում Հոկտեմբերին կայացած աշխարհի առաջնութեան ժամանակ: Պարտուելով հենց առաջին փուլում՝ հայ բռնցքամարտիկը, մարզչից թաքուն վերցնելով իր անձնագիրը, Չիկագոյից հեռացել էր Լոս Անջելըս: Որքան էլ փորձել էին հայկական պատուիրակութեան անդամները ետ բերել Աւագեանին, դա չէր յաջողուել: Միջազգային ՁԱՄ-ները անմիջապէս հաղորդեցին հայ մարզիկի փախուստի մասին լուրը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
(200 ԴՈԳԻ ԸԱՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՇԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

MERO ENTERTAINMENT GROUP INC. PRESENTS  
**THE EVENT OF THE YEAR**  
FEATURING THE STAR OF ARABIC TRADITIONAL MUSIC  
**WADIH MRAD**  
صوت الطرب الاصيل  
**المطرب وديع مراد**  
حفل واحد في لوس أنجلوس فقط  
مازات وماكولات لبنانية مميزة  
**SATURDAY JANUARY 5, 2008**  
For Reservations Call: (818) 276-7567 Location: 740 E. Washington Blvd. Pasadena CA 91104

### ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՏՕՆԱԽԱՐԻԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԲ Ս. ՅԱԿՈԲ ՏՕՆԸ

Շաբաթ 15 հունիս 2008-ին

Նորդ Սրբազանը Սարկալազու թեան աստիճան շնորհեց եկեղեցուց սպասաւորին եւ աչս առթիւ անոր յանձնեց յիշատակի յուշանուէր մը: Ապա Սրբազանը վեր առաւ Մծբնացի Մեծ Սուրբին կեանքը, անոր տեսիլքը, օրինակելի կենցաղը, որուն փառքը կ'երկարի Չորրորդ դարէն՝ մեր օրերը:

Յաւարտ Ս. եւ անմահ Պատարագի, կատարուեցաւ յատուկ հոգեհանգստեան պաշտօն եկեղեցուց հիմնադիրներուն եւ բարերարներուն հոգւոցն համար:

Նկատի ունենալով Ս. Յակոբ եկեղեցուց Սարկալազ ուխտաւորաց վերադարձը Երուսաղէմէն, Սրբազանը յատուկ աղօթքով օրհնեց անոնց, որ աւելի զօրանան հաւատքով եւ ծառայեն Ս. եկեղեցուց եւ ծուխի կարիքներուն: Սրբազանը սարկալազաց եւ դպրաց դասին նուիրեց գեղեցիկ խաչեր:

Ապա եկեղեցուց կից՝ «Կոկեան» սրահին մէջ տօնախմբուեցաւ եկեղեցուց անուանակոչութեան 66-ամեակը որ գեղեցիկ գուզադիպու թեամբ նաեւ նշուեցաւ Արեւմտեան թեմի հաստատման 80-ամեակը:

Չեւնարկին կը նախագահէր թեմիս Առաջնորդ Սրբազանը: Յաւարտ ճաշին, շուրջ 250 անդամներու եւ բարեկամներու ներկայութեան՝ գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը:

Օրուան հանդիսավարուհին էր Չաննի Մկրեանը, որ անգլերէն եւ հայերէն լեզուով ճարտարօրէն վարեց յայտարարը:

Բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք, հանդիսավարուհին վեր առաւ Ս. Յակոբի կեանքը եւ եզրափակեց իր խօսքը ըսելով. «Եթէ կ'ուզենք մեր հոգիին կանթեղի պատրուցը վառել Մծբնի մեծ սուրբի ճառագայթով, այն ժամանակ պէտք է մեր կեանքի օրերը սեւ ամպ դառնան ճշմարիտ Լոյսին դիմաց»:

Ապա ան բեմ հրաւիրեց Գեւորի Հօմ-ը որ իր անուշ ձայնով երկու երգ կատարեց Գէթի թէրգեանի դաշնակի ընկերակցութեամբ, զանոնք նուիրելով զայն իր մեծ մօր՝ Ժանէթ Բագուպեանին, որ Առաջնորդարանի «Հայ Սբիթի» վկայագրով պարգեւատրուեցաւ:

Վահան Թէքեանի «Եկեղեցին Հայկական» եւ Յովհաննէս Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը» ասմունքով, ելոյթ ունեցաւ Մարի Բէշիշեանը:

Եկեղեցուց Միակամ խորհուրդի ատենապետ՝ Բարշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանը ողջունելէ ետք ներկաները, շեշտեց թէ Ամենայն Հայոց Վեհափառի Արեւմտեան թեմ անցելու թիւնը առիթ կ'ընծայէ

մեզ վերանորոգելու մեր ուխտը հանդէպ Ս. Էջմիածնին: Ան գնահատեց բոլոր նուիրեալները եւ վեր առաւ եկեղեցուց հիմնադիրներու եւ բարերարներուն ոգին: Ան անդրադարձաւ եկեղեցուց արձանագրած նիւթական եւ թիւի ածման մասին: Արամ Խաչատուրեանի «Գարուն Երեւան» եւ Նաբոյիզյանի «Օ Օ Օ Ս Ս Ս» երգերով երգչուհի եւ եկեղեցուց դպրապետուհի՝ Մանիկ Մանուկեանը դաշնակից ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի հմայեց ներկաները իր դիւթիչ ձայնով:

Յայտագրի ընթացքին մէջ ընդ մէջ ելոյթ ունեցան Սարտարապատ Պարախումբի անդամներ եւ հրամցուեցան Հայկական աւանդական երգեր որոնք խանդավառեցին ներկաները:

Յայտագրի աւարտին ելոյթ ունեցաւ եկեղեցուց երեսնամեայ կորովի հովիւ՝ Արթ. Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Սրբազան հօր, եկեղեցուց Միակամ խորհուրդի նուիրեալ անդամներուն, Ս. Խորանի Օժանդակ Տիկնանց Կազմին, եկեղեցուց նուիրեալ Տիկնանց Միութեան, Յիշատակի Հիմնադրամի կազմին, եւ յարակից բոլոր մարմիններուն: Տէր Հայրը յատկապէս յիշատակեց հանգուցեալ Ալիս Կէօնճեանը եւ Ժանէթ Բագուպեանը վեր առնելով անոնց եկեղեցուց ծառայութեան նուիրական ոգին, որոնք պարգեւատրուեցան Առաջնորդ Սրբազան հօր կողմէ:

Սրբազան հայրը գնահատեց բոլորին աշխատանքը, շեշտը դնելով ծառայութեան ոգիին, միշտ աղօթքի մէջ ըլլալու եւ կառչած մնալու մեր Առաքելական Սուրբ եկեղեցուց եւ մեր պապերու ուղղափառ հաւատքին: Ան բարձր գնահատեց հովիւին, Միակամ խորհուրդի անդամներուն, Տիկնանց Միութեան եւ յարակից բոլոր յանձնախումբերուն աշխատանքը:

Եկեղեցուց օժանդակ բոլոր կազմակերպութիւնները իրենց տարեկան ներդրումը բերին Մուխին գոյացնելով 70,000 տոլար: Խանդավառ աչս տօնախմբութեան առթիւ, եկեղեցուց Յիշատակի Հիմնադրամի Ատենապետ՝ Պապ Պարսամ Առաջնորդարանի Մայր Տաճարի կառուցման համար Սրբազան Հօր յանձնեց 25,000 տոլար, որ Ս. Յակոբ եկեղեցուց Յիշատակի հիմնադրամի՝ 100,000 տոլարի խոստումի բաժինն էր:

Սուրբ Յակոբ եկեղեցուց 66-ամեակի եւ Արեւմտեան թեմի հաստատման 80-ամեակին առթիւ, հրատարակուեցաւ նաեւ գունատիպ եւ պատկերագրող գեղեցիկ գրքոյկ մը:

Վարձքը կատար բոլորին:

### ՆԵՅԼ ՍԻՍՈՆԻ «ՇՇՈՒԿՆԵՐ» ԹԱՏԵՐԱԽԱՂԻ ԲԵՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Շաբաթ 15 հունիս 2008-ին

Րի Մանուկեան» վարժարանի թատերական յանձնախումբին, որուն մէջ կը տեսնենք նախանձախնդրութիւն, լրջախոհութիւն եւ տեսիլք՝ հայ նոր սերունդներուն ջամբելու համար սէրը հանդէպ թատերական արուեստի: Պէտք է գուզահեռ ուժգին փլանաւորուի, մշակ-

ուի եւ զարգանայ հայերէն լեզուի տիրապետումը, որ ցայտուն կերպով կը կաղայ մեր նորահաս ուսանողներուն մօտ:

Կը յուսանք, կ'ակնկալենք, որ Հ.Բ.Ը.Միութեան «Մարի Մանուկեան» վարժարանի թատերական յանձնախումբի ներկայացումներու ցանկին վրայ կը գումարուին եւ հայկական թատերախաղեր:

### ՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՏՕՆԵՐԸ ԸՍՏ ՏՕՆԱՅՈՅՅԻ

Շաբաթ 15 հունիս 2008-ին

9. Յիսնակաց Պահքի 5 օրեր (Նոյեմբեր 17-21)

10. Ս. Յակոբայ Պահքի 5 օրեր ձմեռնամուտին (Դեկտեմբեր 8-12):

Վերելի պահքի օրերու գումարն է 94: Իսկ տարուան պահոց օրերու ընդհանուր թիւն է 139:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Որպէս եզրակացութիւն մեր ներկայ ուսումնասիրութեան, յիշեալ երեք խմբաւորումները միասին, Տէրունի, Սրբոց եւ Պահոց օրերը, հետեւեալ թիւերը կը ներկայացնեն 2008 Նահանջ Տարուայ համար:

- Պահքի օրեր 139
- Ուտիքի օրեր 58
- Սրբոց օրեր 114

Կիրակիներ 42 (ի բաց առեալ Մեծ Պահոց կիրակիներէն որոնք հաշուուած են Պահքի օրերու թիւին մէջ)

Անշարժ Տօներու օրեր 13

### ԳՈՒՄԱՐ 66 օրեր

Նշուած տօներն ու անոնց թուականները 2008 Նահանջ տարուայ յատուկ են, ինչպէս ըսուեցաւ: Կատարուած աշխատանքը կարելի է գործադրել նաեւ որեւէ տարուան համար, Նահանջ կամ Հասարակ տարի, պայմանաւ որ հետեւինք ՏՕՆԱՅՈՅՅԻ երկու հատորներու ցուցմունքներուն եւ հրահանգներուն: Չմոռնալ որ Հասարակ տարուան համար Տօնացոյցը Մէկ գիր կը նշէ որպէս Գիր Տարուայ, իսկ Նահանջ տարիներուն համար՝ ԵՐԿՈՒ գիրեր:

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ»**  
**ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ**  
**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԸ, ԼԱ ԲՐԵՍԵՆԹԱ)**  
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00**

**ԲԱԶ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան**  
**Ժամը 10:00-ից 12:00**  
**Կլէնտլի 26-րդ կայանից**

**ԲԱՑՈՒԱԾ Է**

Հիպնոսաբուժութեան կեդրոն  
 դեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ  
 Արթին Սաղրեանի  
 Փաստօրէնայի մէջ  
 Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն  
 մինչեւ կ.ե. ժամը 3:00  
 Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
 Pasadena CA 91104  
 Հեռախօս (818) 434-8118  
 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» բուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
 -Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:  
 - Մոլութիւններ - սիկարէթ, ալիոյ, քմրադեղեր, եւայլն:  
 - Հոգեկան տագնապներ - անճկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհանգստութիւն, եւայլն:  
 - Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:  
 - Ուսումնական եւ սրտբային բարելաւում

**ԽՆՂԱԿՑՈՒԹԻՒՆ**

Տէր եւ Տիկ. Գրիգոր Չարըգեաններու մանչ գաւազով բախտաւորուելուն (Անդրանիկ), ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Վարուժան Չարըգեաններու մանչ գաւազով (Հայկ) բախտաւորուելուն ուրախ առթիւ, Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններ կը յայտնեն իրենց խնդակցութիւնները ընտանեկան պարագաներուն, յատկապէս Տիկ. Օսաննա Չարըգեանին եւ Ստեփան Չարըգեանին:  
 Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

**Massis Weekly on the Internet**  
**www.massisweekly.com**  
**updated every Friday**

ՄԵՐ ԲՈՒՆՈՐ ՀԱՐԱՉԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



## VREJ PASTRY

**PASADENA**  
**626-797-2331**

**GRANADA HILLS**  
**818-366-2526**

**GLENDORA**  
**626-914-1940**